ԻՆՉՈ՞Ւ ՄԵՆՔ

ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՆՔ

Առանձնաշնորհում է կրկին վերադառնալ այստեղ՝ ամբիոնի մոտ, մոտավորապես կարծեմ, համարյա երեք ամիս բացակայելուց հետո: Սկյուռերը ծանր ժամանակ ունեցան, ինչպես և ես: Օ՜հ, լավ հանգիստ էր, և զգում ես, որ ավելի շատ ես ուզում կրկին ծառայության մեջ մտնել: Եվ պատրաստվում ենք եկող շաբաթ՝ այս եկող չորեքշաբթի երեկոյան արթնություն սկսել հենց այստեղ՝ խորանում: Եվ եթե Տերը կամենա, ես ունեմ...Տերն ինձ մեկ այլ և նոր տեսակի ծառայություն է խոստացել: Եվ եթե Նա հաճի այդպես անել, հույս ունեմ այս եկող շաբաթ առաջին հերթին սկսել այդ, այդ նոր տեսակի ծառայությունն այստեղ խորանում:

2 Բացի այդ, այս եկող հունվարին Ավստրալիայից և Նոր Զելանդիայից բացի պլանավորված ոչ մի հավաքույթներ չունեմ: Եվ բացի այդ, Օսբորն եղբայրը միասնական ժողովի է հրավիրում, որը վերջերս նրան խոստացել էի այստեղ՝ Թուլսայում, սակայն դա մի փոքր ուշ, բայց մենք դեռ վստահ չենք դրանում:

3 Շատ հաճելի էր, Զեֆրի՛ս եղբայր, սեղմել ձեզ ձեռքն այնտեղ՝ հետևում, ինչպես նաև լսել, թե ինչպես է ձեր տղան երգում այդ երգը ձեր նվագակցությամբ: Ինձ դուր է գալիս դա՝ հայր և որդի: Ձեզ դուր չի գալի՞ս: «Դաստիարակի՛ր մանուկին այն ճանապարհով, որ պետք է գնա»: Դա ճիշտ է, պարոն Գենտեր, դուք, դուք, երկուսդ էլ գիտեք, որ դա ճիշտ է: «Դաստիարակի՛ր մանուկին այն ճանապարհով, որ պետք է գնա, և նա իր ծերության ժամանակ չի խոտորի դրանից»: Եվ դա ճիշտ է: Հնարավոր է երբեմն նա խոտորի դրանից, բայց այն չի հեռանա նրանից: Հասկանո՞ւմ եք: Այն, այն միշտ կմնա իր հետ: Այդ վաղ կրթությունը, և ինչ էլ նա դաստիարակված է եղել անելու, այն...այն, անշուշտ, կմնա իր հետ: Հիմա, սա...

4 Ես այնտեղ հանդիպեցի Զեֆրիս եղբորը և ասացի. «Զեֆրիս եղբայր...»: Ես մտածում էի, դուք գիտեք, ես միշտ ուրախ եմ, որ տեսնում եմ այցելության եկող իմ

եղբայրներին, բայց այնպիսի՞ երեկո, որ եղբայրը գա: Այս երեկոն միայն նրանց համար է, ովքեր խորան են գալիս, պարզապես նախորդում է այս արթնությանը: Սա այն գիշերն է...Մենք ուզում ենք վերցնել այս երեկոն, վաղվա առավոտը և վաղվա երեկոն, պարզապես այն հիման վրա, ինչին մենք հավատում ենք այստեղ խորանում՝ նորից այն կրկնելու համար: Մենք ունենք մի քանի սարսափելի տարօրինակ, շատ արտասովոր համոզմունքներ, բայց այսպես թե այնպես մենք դրանք գտնում ենք Աստվածաշնչում: Այնտեղ նրանք ճիշտ են թվում:

5 Եվ հիմա, եթե այստեղ անծանոթ եղբայր կամ քույր լինի, ով որոշակի հարանվանությանն է պատկանում կամ...կամ տարակարծիք է, բայց պարզապես եկել է այսօր, մենք ուզում ենք իմանաք, որ մենք ուրախ ենք ձեզ ընդունելու: Ձեզ այնքան ուրախ են տեսնել որքան հնարավոր է: Բայց հիմա ես հույս ունեմ...Եվ մենք սա բավականին կոպիտ ենք անում: Դրա համար, եթե պատահի այնպես, որ դուք չհամաձայնվեք դրա հետ, արեք այնպես, ինչպես ես եմ անում, երբ ուտում եմ բալով տորթը: Երբ ես ուտում եմ բալով տորթը, դա իմ սիրած տորթն է, ես միշտ, երբ...Երբ ես ուտում եմ բալով տորթը և կորիզ եմ գտնում, դեն չեմ նետում տորթը: Ես... ես պարզապես կորիզն եմ դեն նետում և շարունակում եմ տորթը ուտել: Կամ հավի միս ուտելու պես: Հիմա, բոլորդ էլ հավի միս սիրում եք: Եվ երբ ոսկոր եք գտնում, չեք դադարում միսն ուտել, պարզապես շրջանցում եք ոսկորը և շարունակում եք հավն ուտել: Այդպես արեք այս երեկո, այն, ինչ ես այստեղ ասում եմ, դուք պարզապես... երբ ինչ–որ բան եք գտնում, և ասեք. «Հիմա, ես, ես պարզապես չ...Ես պարզապես ներկա եմ առաջիկա այս երեք հավաքույթների ընթացքում եկեղեցու նման փոքրիկ ուսմունքին: Նրանք պարզապես կրկնում են այն, ինչին, այն, ինչին հավատում են, և անցնում են դրա վրայով»:

6 Միակ ձևը, որով գրեթե կարող ես մղել մարդուն դրան հավատալ, այն է՝ այնպես ջանասիրությամբ մտցնել նրա գլուխը, որ իմանա, թե դա հենց այն է, ինչ ճիշտ է: Դա է միակ ձևը, որով կարող ես հպել դրան: Իմ ընկեր՝ պարոն Վուդի նման, ում հետ վաղուց ծանոթ եմ. եթե մեխը կիսատ մեխես, և տախտակները տատանվեն, շատ շուտով քամին կպոկի դրանք: Բայց որպեսզի մեխը մնա,

պետք է մինչև վերջ մեխել: Եթե ես կոպիտ եմ եղել այստեղ որևէ մեկի համար ինչ-որ մի բանում, և այցելուների համար, ովքեր նստած են այստեղ, ես չեմ, ես չեմ փորձում ձեզ հեռացնել այստեղից: Ես պարզապես փորձում եմ հասկացնել այս եկեղեցուն այն, ինչին մենք հավատում ենք: Բոլոր նրանք, ովքեր դա լավ են հասկանում, ասեք. «Ամեն»: [Դահլիճն ասում է. «Ամեն»: Ծան. խմբ]: Շատ լավ: Դա...դա լավ է: Իսկ հիմա ազատեք ինձ այս բեռից: Հետո, հետո...Նրանք ձայնագրում են սա և այլն, որ հետո, եթե ուզենան պարզել, թե ինչի համար ենք մենք կանգնում, և որոնք են այն հիմքերը, որոնց վրա մենք կանգնած ենք, այս ձայնագրությունները կասեն դա: Եվ հետո, մենք մեկ-մեկ անում ենք սա, որովհետև նոր մարդիկ են գալիս, իսկ...իսկ մենք առաջ ենք գնում: Մենք հիմա չենք կարողանա անցնել բոլոր եղեղեցական ուսմունքների վրայով, այլ միայն դրանցից որոշները, որոնց վերաբերյալ կուզեինք խոսել: Իսկ այժմ, չորեքշաբթի երեկոյան թեև սկսվում է...

7 Հիմա, երկուշաբթի և երեքշաբթի օրը ես գնալու եմ աղոթքի՝ բժշկության ծառայությանը պատրաստվելու համար: Դուք կարող եք կապնվել հեռախոսով կամ ձեզ համար հարմար այլ տարբերակով և բերել ում ուզում եք այս գալիք արթնությանը: Եվ ասեք նրանք, որ հապճեպորեն չգան, մի եկեք, ասեք. «Ես վազելով կգամ, որ այս երեկո աղոթեն ինձ համար: Իսկ վաղը երեկոյան այս ամենը...»: Այդպես մի արեք: Եկեք և մի որոշ ժամանակ լսեք, որովհետև մենք չենք ուզում շտապել և ուզում ենք այնպես ստույգ շարադրել Խոսքը, որ սատանան նույնիսկ մի փոքր տեղ էլ չունենա շարժվելու: Այնուհետև, երբ թույլ տաք, որ ձեր հավատքը սպառվի մինչև վերջ, որ կսկսեք հավատալ, այդ ժամ թող ձեզ ենթագիտակցությունը գործի, հետո Աստծո հավատքը կբարձացնի այն: Հետո դուք կկարողանաք շարժվել առաջ: Հասկանո՞ւմ եք:

Որովհետև ձեր հավատքը շատ բան չի անի: Ձեր ենթագիտակցությունը պետք է շարժվի ձեր հավատքի ուղղությամբ, հետո Աստծո հավատքը վերահսկողության տակ է վերցնում և հաստատում է այդ ամենը: Հասկանո՞ւմ եք: Բայց եթե ձեր հավատքն այդպիսին է. «Ո՛հ, այո՛, ես հենց հիմա ստացա այն»: Իսկ ձեր ենթագիտակցությունը ռիվոկներով շարժվում է այնտեղ՝ հետևում, ասելով. «Տեսնես՝ իմ դեպքում կգործի՞»:

Ուրեմն հենց այդ ժամանակ դա չի գործի: Հասկանո՞ւմ եք: Դրա համար մենք ուզում ենք, որ սա իսկական բժշկության ծառայություն լինի: Եվ նախքան որևէ մեկի հետ սենյակներ մտնելը և այլն, բժշկության համար կամ այս նոր ծառայություններով, ես ուզում եմ, որ նրանք իսկապես հասկանան, թե ինչի համար են եկել այստեղ: Դրա համար պարզապես հիշեք և այցելեք մեզ, իսկ մենք ուրախ կլինենք ձեզ տեսնելու համար:

8 Հիմա հիշեք, առավոտյան մենք կշարունակենք եկեղեցու ուսմունքը: Վաղը երեկոյան նույն ձևով կլինի: Հիմա համեցեք, ով ուզում է, ցանկացողը կարող է գալ: Մենք միշտ էլ ուրախ ենք տեսնել յուրաքանչյուրիդ: Բայց այսօր սա ուղղված է այն մարդկանց, ովքեր այս խորանից են, ովքեր, ովքեր դաստիարակվել են այս ուսմունքի մեջ: Որովհետև դաշտում՝ ավետարանչական դաշտում, մենք վերցնում ենք իրական հիմքային, սուրբգրային ավետարանական վարդապետություններ: Բայց այստեղ խորանում մենք որպես, որպես, որպես եկեղեցի մեր սեփական մտքերն ու հավատամքներն ունենք, և հենց դա էլ կկրկնենք այսօր:

9 Եվ Նրա օրհնյալ Խոսքը բացելուց առաջ կարո՞ղ ենք մեր գլուխները մի պահ խոնարհել աղոթքի համար:

10 Ամենակարող և հզոր Աստվա՛ծ, Ով, նախքան երկրում սկսեց պտտվել առաջին ատոմը, Դու Աստված էիր: Դու ամենևին էլ չես փոխվել: Եվ երբ այլևս ատոմներ չեն լինի այն պահելու համար, և այլևս աշխարհ չի լինի պահելու համար, Դու մնալու ես Աստված: Դու հավիտենության համար ես և հավիտենությունից: Դու Աստված ես: Դու ո՛չ օրերի սկիզբ ես ունեցել և ո՛չ էլ կյանքի վերջ: Դու միշտ կլինես: Եվ Հա՛յր, Դու անսահման լինելով, իսկ մենք սահմանափակ, արդ խնդրում ենք Քո աստվածային ողորմության համար, ո՛վ Աստված, գիտակցելով, որ այս մեր հոգին պետք է միաձուլվի հավիտենության հետ, այս ժամանակի տարրերից հավիտենության մեջ: Դրա համար, Տե՛ր, մենք այստեղ ենք՝ ստուգելու մեր փրկությունը, որ տեսնենք, թե ինչպես ենք կանգնած Քո Խոսքի առջև և որտեղ ենք գտնվում մեր փորձառությունների մեջ: Արդյոք Քեզ հաճո կյանքով ենք ապրո՞ւմ: Արդյոք մեր հոգին վկայություն է տալի՞ս Քո Հոգու հետ: Եվ արդյոք մեր ուսմունքը համահո՞ւնչ է այս Աստվածաշնչին: Եվ Հա՛յր, թող մենք երկուսն էլ ուշադիր ուսումնասիրենք առաջիկա այս եկող

երեք ծառայությունների ընթացքում: Ծնորհի՛ր դա, Տե՛ր:

11 Օրհնի՛ր այստեղ գտնվող հովվին, սարկավագներին, հոգեբարձուներին և բոլոր եկողներին, մարդկանց, ովքեր գալիս են այս եկեղեցի: Այն ժամանակից, ինչ ես այստեղ եմ, Տե՛ր, շատ շատերը կան, որոնց անունները ես նույնիսկ չգիտեմ, կամ, թե որտեղից են գալիս, բայց ես վստահ եմ, որ Դու ամեն բան գիտես նրանց մասին: Եվ մենք եկել ենք այսօր այստեղ մեկ նպատակով, Տե՛ր, հաղորդակցվել գրված Խոսքի շուրջ: Եվ շնորհի՛ր Սուրբ Հոգին մեր կյանքում, որպեսզի կարողանանք հանգիստ, սթափ և Աստծո երկյուղով մնաք, և քննենք մեր կյանքերը Նրա Խոսքով: Ծնորհի՛ր դա, Տե՛ր:

12 Այսօր այս շենքում, Տե՛ր, կան եկեղեցու տարբեր փուլերին պատկանող իմ եղբայրները: Եվ Տե՛ր, ես շնորհակալ եմ, որ նրանք այստեղ են՝ հաղորդակվելու համար: Գուցե վարդապետությունների փոքրիկ սկզբունքների շուրջ մենք հակառակ կարծիքներ ունենանք: Բայց այդ մեկ մեծ սկզբունքի մեջ, մենք առաջնագծում կանգնած ենք որպես միավորված եղբայրներ: Դա, ո՛վ Աստված, թող դա զորացնի մեր, մեր շփումներն ու մեր...և Աստծո շնորհի և սիրո շղթաները թող առատորեն հանգչեն մեզ վրա: Հիմա, գիտակցելով, Տե՛ր, որ սա մարդու ուժերից վեր բան է, որովհետև մենք այսօր երեկոյան դիտարկելու ենք Հավիտենության հետ կապված հոգիների գտնվելու վայրը: Դրա համար մենք խնդրում ենք, որ Սուրբ Հոգին մտնի Խոսքի մեջ, տեղադրի այն և Իր ձևով բացատրի դա մեզ, այն բաները, որոնք Նա ուզում է, որ մենք իմանանք: Ծնորհի՛ր դա, Տե՛ր: Եվ երբ այս երեք...ծառայության ժամերն ավատրվեն, թող հեռանանք որպես զորացած եկեղեցի, որպես միասին համախմբված, որ միավորենք մեր սրտերն ու նպատակները Աստծո Թագավորության մեր քաղաքացիների հետ և շարժվենք առաջ այնպես ինչպես երբեք:

13 Ես ուզում եմ գոհանալ Քեզանից, Տե՛ր, այստեղ եկեղեցու և, և այստեղ գտնվող մարդկանց ներկայությամբ, որ Դու ինձ լավ հանգստի մի քանի շաբաթ տվեցիր: Քո Ներկայության և օրհնության շնորհիվ այսօր ես ինձ հրաշալի եմ զգում: Ո՛վ Աստված, մենք աղոթում ենք այստեղ գտնվող եղբոր՝ մեր եղբոր համար, ով գնում է օվկիանոսից այն կողմ, այդ մութ և մռայլ երկրները, որտեղ իր կյանքը դրվելու է որպես

թիրախ: Ո՛վ Տեր, օրհնիր մեր Ձեֆրիս եղբորը, երբ նա գնա, ինչպես նաև իր որդուն ու իր կնոջը և մեծ աճ տուր նրան: Թող նա անցքեր բացի խավարի միջով, մինչև որ Ավետարանի Լույսը լուսավորի լայն և հեռու: Լսիր մեզ, Տե՛ր, որովհետև մենք սա խնդրում ենք Տեր Հիսուսի՝ Քո Որդու Անունով: Ամե՛ն:

14 Հիմա, այսօր երեկոյան կարդում էի Սկոֆիլդի իմ փոքրիկ Աստվածաշունչը: Վերջերս անցա քսանհինգ տարվա ցուցանիշը: Եվ ես դեռ կարողանում եմ կարդալ այն, բայց իմ տեսողությունը գնալով աղոտանում է: Դրա համար ես ակնոցներ եմ դնում, երբ ուսումնասիրում եմ, և այսօր ես առաջին անգամ փորձելու եմ տեսնել, թե ինչպես է այն աշխատելու:

Ես ունեմ այնպիսի թեմաներ, ինչպիսիք են. «Պետք է եկեղեցին...»: Ո՛հ, շատ բաներ, եթե կարողանանք հասնել դրանց: Դրանցից մեկն է. «Ինչո՞ւ ենք մենք Եկեղեցի կոչվում: Ինչո՞ւ մենք հարանվանություն չենք: Ինչո՞ւ, ինչո՞ւ ենք մենք հավատում հավատացյալի հոգու հավիտենական ապահովությանը: Ինչո՞ւ ենք մենք մեղադրում կին քարոզիչներին: Ինչո՞ւ ենք մենք մկտրում ընկղմելու միջոցով: Եվ արդյոք եկեղեցին կանցնի՞ նեղության միջով»: Եվ այդ թեմաներից շատերը, առաջիկա մի քանի երեկոների համար կարծեմ տասնհինգ թե տասնութ թեմաներ ունեմ:

15 Ուստի ես մտածում եմ սկզբի համար այսօր սկսել, այս թեման կարծես Տերն է դրել սրտիս մեջ... *Ինչո՞ւ մենք հարանվանություն չենք:* Պատճառը, թե... Հիմա, մենք ոչինչ չունեք մյուս մարդկանց դեմ, ովքեր հարանվանություն են: Մենք դրանց դեմ ոչինչ չունենք, բայց ես ուզում եմ բացատրել, թե ինչու մենք երբեք որևէ հարանվանության հետ չենք գնացել: Ինչպես գիտեք, ես ձեռնադրվել եմ փոքրիկ մկրտական եկեղեցում: Մկրտականները հարանվանություն չեն, չէին, մինչև վերջերս, իսկ այժմ նա նույնքան հարանվանություն է դառնում, որքան մյուսները: Բայց պատճառը, թե ինչու մենք երբեք հարանվանություն չենք դառնա...

16 Հիմա, մենք կազմակերպություն ենք: Մենք կազմակերպություն ենք, այստեղ՝ պետռեգիստրում գրանցված ենք որպես կազմակերպություն, մարդկանց խումբ, ովքեր միասին կազմակերպվել են Քրիստոսին երկրպագելու համար, բայց մենք հարանվանությունում չենք: Ոչ մեկը չի իշի մեզ,

հասկանում եք: Սա հարանվանություն չէ: Սա, սա պարզապես կազմակերպություն է, հաղորդակցություն է քրիստոնյա հավատացյալների միջև: Մարդիկ այստեղ գալիս են եկեղեցի: Եվ սա դառնում է նրանց տնային եկեղեցին, եթե ուզում են գան, քանի դեռ կենդանի են:

17 Եվ նրանք կարող են գալ այստեղ և չհամաձայնվել այն ամենի հետ, ինչ մենք քարոզում ենք: Դա միանգամայն նորմալ է: Դուք առաջվա պես, քանի դեռ դուք քրիստոնյա եք, հաղորդակցություն ունեք և աջակցություն ինչպես մնացածները: Հասկանո՞ւմ եք: Եթե ես ասեի, որ հավատում եմ ընկղմումով մկրտությանը, իսկ դուք՝ ջրցողումով, և ուղիղ կանգնեիք դրա վրա, մենք կմնայինք նույն վիճակում ինչպես կարծես համաձայնված լինեինք: Մենք կարող է ամեն ինչ մեկ առ մեկ չտեսնենք: Բայց քանի դեռ դուք քրիստոնյա քույր կամ եղբայր եք, ուրախ ենք ձեզ ընդունելու համար, հասկանում եք, բոլորիդ:

18 Դրա համար մենք չունենք որևէ հարանվանություն, որովհետև ես կարծում եմ, որ հարանվանությունը բաժանում է եղբայրությունը: Նրանցից ոմանք կասեն. «Դե, մենք այդ արթնության հետ ոչ մի կապ չունենք: Դա մեթոդական արթնություն է»: «Դե, դրանք մկրտականներ են: Մենք չունենք...Մենք մեթոդականներ ենք: Մենք դրա հետ ոչ մի կապ չունենք»: Եղբա՛յր, եթե Քրիստոսը դրա մեջ է, մենք, մենք բոլորս էլ դրա հետ կապ ունենք: Մենք պետք է գործադրենք մեր...Սա, սա Քրիստոսի Մարմին է, որ տառապում է: Եվ այսօր ես այնքան շատ եմ տեսնում նման բաներ տեղերում, թե ինչպես է դա մեզ մոտ...Հիմա, Քրիստոսը երբեք որևէ ժամանակում որևէ հարանվանական եկեղեցի չի կազմակերպել: Հիմա, դրանում վստահ եղեք:

19 Հիմա, հիմա, վաղը երեկոյան ես ձեզ կխնդրեմ, եթե սրանցից որևէ բան ուզում եք իմանալ, ինչպես օրինակ ինչ–որ պատմություն, որ ես մեջբերում եմ կամ մեկ այլ բան: Ես ժամանակ չունեմ այդ մանրամասնությունների համար, ես ուրիշ թեմային չեմ հասնի, որովհետև շաբաթներով կարող ենք այդ նույն թեմայի շուրջ խոսել: Բայց եթե դուք ուզում եք տեղն իմանալ, ցանկացած բան, պարզապես ինձ հրացրեք, և դրեք այն այստեղ՝ սեղանին, և ես կպատասխանեմ:

20 Հիմա, ամենահին և առաջին հարանվանական եկեղեցին, որը մենք ունեցել ենք, դա Կաթոլիկ եկեղեցին է: Եվ այն կազմակերպվել է վերջին առաքյալի

մահից երեք հարյուր և ավելի տարիներ հետո: Եվ դա ճիշտ է: Դա կգտնեք դա վաղ Նիկիայի հայրերի և Զոզեֆուս և, օհ, շատ ու շատ մեծ պատմիչների գրվածքներում: Հասկանո՞ւմ եք: Եվ...որևէ եկեղեցական ժամանակաշրջանում, մինչև վերջին առաքյալի մահը, և երեք հարյուր տարի առաքյալներից հետո հարանվանական եկեղեցիներ չեն եղել: Կաթոլիկ եկեղեցին առաջին եկեղեցական հարանվանությունն է եղել:

21 Իսկ բողոքական եկեղեցին հարանվանություններ են, որոնք հարանվանությունից են դուրս եկել: Առաջին բարեփոխումը, որ եկավ, Լյութերն էր, Լյութերից հետո եկավ Ցվինգլին, Ցվինգլիից հետո եկավ Կալվինը և այդպես շարունակ: Մինչև ուեսլեյական արթնություն և մինչև Ալեքսանդր Քեմփբելը, Զոն Սմիթը և այլն: Եվ վերջին շարժումները, որոնք մենք մինչ այժմ ունենք, դրանք հոգեգալստական ժամանակաշրջանի տարբեր փուլերն են:

22 Ես հավատում եմ, որ Աստված գործել է բոլոր ժամանակաշրջաններում: Բայց նկատե՞լ եք, որ ամեն անգամ, երբ եկեղեցին ձախողվում է, և հենց որ նրանք վերածվում են հարանվանության, հենց այդ ժամանակ էլ ընկնում են: Եվ երբ էլ, որ նրանք ընկնում են, Աստված էլ երբեք չի բարձրացնում այդ եկեղեցին: Այն գնում է ուղիղ սերմի մոտ: Հիմա դուք պարզապես... Եթե ուզում եք իմանալ պատմությունը դրա վերաբերյալ, մենք, մենք կարող ենք տրամադրել դա, որ, որ ոչ մի եկեղեցի, ոչ էլ եկեղեցիների պատմության մեջ, որ որևէ հարանվանություն է ունեցել, ընկել է և հետո էլ երբեք նորից չի բարձացել: Մկրտական, մեթոդական, երիցական, լյութերական, ով էլ որ լինի, երբ նրանք ընկել են, մահացել են: Հիմա, դա ճիշտ է: Հիմա, սա, ես...ես հիմա ձեզ սա ասում եմ նրա համար, որպեսզի դուք հագնեք ձեր բաճկոնները, որովհետև մենք այնպես եք անելու, որ սա ամրապնդվի: Ոչ մի անգամ այդպես չի եղել: Երբ մարդը դուրս եկավ որպես անհատ և եկեղեցի կազամկերպեց, դա սկսվեց:

23 Աստված անհատների հետ գործ ունի, ոչ թե հարանվանության: Ոչ մի ժամանակաշրջանում Աստված գործ չի ունեցել հարանվանության հետ: Նա միշտ գործ է ունեցել անհատի հետ: Հին Կտակարանում Նա գործ է ունեցել անհատի հետ: Նոր Կտակարանում

Նա գործ է ունեցել անհատի հետ: Ցանկացած ժամանակաշրջանում Նա միշտ գործել է անհատների, և ոչ թե հարանվանությունների հետ: Հետևաբար եթե Աստված հարանվանության մեջ չէ, ի՞նչ օգուտ ինձ որևէ կապ ունենալ դրա հետ որպես հարանվանության: Հիմա, ես չեմ խոսում այն մարդկանց մասին, ովքեր հարանվանության մեջ են, ես խոսում եմ հենց հարանվանության մասին, որովհետև այդ բոլոր հարանվանություններում Աստծո մարդիկ կան:

24 Հիմա, Աստված երբեք թույլ չի տալիս, որ որևէ բան կատարվի առանց նախապես զգուշացնելու: Ես չեմ հավատում, որ կա մի բան, որ…

25 Այժմ, ինչպես մենք ունենք խնդիրներ, որոնք ի հայտ են գալիս եկեղեցիներում, ինչպես օրինակ վերջերս ունեցանք արյան և յուղի մասին և այլն: Եվ դուք գիտեք «սիրելի եղբայր Բրանհամ» նամակի մասին և այլն: Բայց պատճառը, թե ինչու ես դեմ կանգնեցի դրան, այն է, որ դա գրված չէ Խոսքի մեջ: Դա է պատճառը, որ ես հարանվանության դեմ եմ, որովհետև դա գրված չէ Խոսքի մեջ: Եվ պետք է ունենանք որևէ մի բան, որի վրա հիմնելու ենք մեր հավատքը: Եվ մենք չենք կարող հիմնել դա որևէ հարանվանության վրա, պետք է հիմնենք Աստծո Խոսքի վրա: Որովհետև դա միակ հիմքն է՝ Աստծո Խոսքը:

26 Եվ եթե Աստծո Խոսքը չի խոսում հարանվանության մասին, այլ հարանվանության դեմ է խոսում, ուրեմն պետք է խոսենք այնպես, ինչպես Խոսքը: Անկախ նրանից, թե ինչ է ասում մի եպիսկոպոս, թե ինչ է ասում ցանկացած մեկը, թե ինչ-որ մեկն ինչ է մտածում, թե ինչ-որ մի բարի մարդ ինչ է ասում, թե ինչ-որ մի բան ինչ է ասում, եթե դա Աստծո Խոսքի համաձայն չէ, ուրեմն սխալ է: Հասկանո՞ւմ եք: Այն պետք է, Խոսքը պետք է լինի վերջնականը: Աստծո Խոսքը պետք է լինի վերջնական ամենը:

27 Հիմա հիշեք, ես չեմ ապաքրիստոնեացնում որևէ մեկին (դուք դա հասկանում եք) հարանվանություններում: Այդ բոլոր հարանվանությունների մեջ տասնյակ հազարավոր թանկագին հոգիներ կան, ովքեր Աստծո զավակներ են: Բայց բաժանել և զատել նրանց, ես դրան դեմ եմ: Աստծո Խոսքն էլ դեմ է դրան:

28 Եվ ես հավատում եմ, որ չկա աշխարհում այսօր մի «իզմ», չկա մի «իզմ», որը եղել է երկրում, այլ այն, ինչ կանխասվել էր, որ կգա, Աստծո Խոսքով: Ես հավատում

եմ, որ այն ամենը, ինչի կարիքն ունենք գրված է հենց այստեղ՝ Խոսքում: Սկսած...մեր սկզբից մինչև վերջ, այն գտնվում է Աստծո Խոսքի մեջ: Եվ հետո ես...ես հավատում եմ, որ եթե դա գրված է Աստծո Խոսքի մեջ, ուրեմն մենք պետք է...այն կանխասում է: Եվ Աստծո Խոսքը նախազգուշացում է:

29 Հիմա, Աստծո Խոսքը մի կարդացեք այնպես, ինչպես լրագիր եք կարդում: Աստծո Խոսք կարդացեք Սուրբ Հոգով, հասկանում եք, որովհետև Սուրբ Հոգին Ինքը խոսում էր Քրիստոսի միջոցով: Քրիստոսը գոհություն հայտնեց Աստծուն, որ Նա այս բաները ծածկեց իմաստունների ու գիտունների աչքերից և հայտնեց մանուկներին, ովքեր ուզում են սովորել: Եվ այսպես, դուք տեսնում եք, որ այնտեղ չկա ճանապարհ դառնալ կրթված, չկա ճանապարհ վերածվել հարանվանության: Ճիշտ հասկանալու համար միայն մեկ ճանապարհ կա, այն է՝ առաջնորդվել Աստծո Հոգով: Եվ այն փորձառությունը, որ դուք ստացել եք պետք է համապատասխանի այս Խոսքի հետ: Հասկանո՞ւմ եք: Այդ ժամանակ կհասկանաք դա: Հասկանո՞ւմ եք:

30 Ինչպես մի քանի րոպեով դիմենք սրան, մենք գործ ունենք մարդկանց հետ, ովքեր...Նրանցից ոմանք արմատական կալվինիստներ են, ոմանք էլ արմինականներ և, և տարբեր ուղղություններ: Հիմա, միշտ, ինչքան էլ շերտերը բարակ կտրեք, երկու կող կունենան: Դա միանգամայն ճիշտ է: Եվ երկուսն էլ վիճելի հարցեր կունենան: Բայց բանը նրանում է, թե որտե՞ղ է Ճշմարտությունը: Ահա թե ուր ենք մենք գնում, որտեղ կարծում ենք Աստծո շնորհքով ցույց կտանք դրա Ճշմարտությունը: Հիմա եկե՛ք պարզապես վերցնենք...և ահա, թե որտեղ եմ ես այս եկեղեցական ուսմունքներից մի քանիսը դուրս գրել:

31 Եկե՛ք հիմա բոլորս մի քանի րոպեյով բացենք ձեր Աստվածաշնչերը և անդրադառնանք Հայտնության գրքին, 1-ին գլուխ, կամ էլ սկզբի համար Հայտնության 17-րդ գլուխը: Եվ պարզապես սկսենք կարդալ և տեսնենք, թե որտեղից են այս եկեղեցիները սկիզբ առել և ինչը, ինչն է սկսել այն: Հիմա, Աստվածաշունչը նախազգուշացնում է ամեն բանի մասին: Այն նախազգուշացնում է այն օրերի մասին, որում մենք... մենք ապրում ենք: Իսկ այժմ Հայտնություն, 17-րդ գլուխ, եթե ուզում եք: Ես ասացի 13-րդը, ես դա ի նկատի

չունեի, դա...Ավելի ուշ դրան էլ կհասնենք, դա Միացյալ Նահանգների մասին մարգարեության մեջ է: Բայց հիմա շատ ուշադիր լսե՛ք:

Այն յոթ գավաթներն ունեցող հրեշտակներից մեկը եկավ ու ինձ հետ խոսեց՝ ասելով... Եկ քեզ ցույց տամ այն մեծ պոռնիկի դատաստանը, որ այն շատ ջրերի վրա է նստում:

32 Հիմա հիշե՛ք. սա խորհրդավոր է հնչում: Հիմա այս վատ համբավ ունեցող կինը, հիմա, եթե մենք սա ենք ուսուցանելու, ապա նախ պետք է պարզել, թե այս խորհրդանիշներն ինչ են նշանակում: Հիմա, *կինը* Աստվածաշնչում ներկայացնում է եկեղեցին: Քանի՞սը գիտեն, որ մենք Հարս ենք: Եկեղեցին Հարս է:

33 «Եկ քեզ ցույց տամ դատաստանը»: Հիմա, ասված դատաստան է լինելու մեծ պոռնիկի, պիղծ կնոջ վրա, որ նստում է շատ ջրերի վրա: Հիմա, *կինը* խորհրդանշում է եկեղեցին, իսկ *ջուրը*՝ «ժողովուրդը»: Հիմա, եթե ուշադրություն դարձնեք սրան, նայե՛ք նաև 15–րդ համարը, նույն գլխի 15–րդ համարը, քանի դեռ այնտեղ եք:

Ու ասաց ինձ. «Այն ջրերը, որ տեսար, որոնց վրա նստած է պոռնիկը, ժողովուրդներ են...բազմություններ...ազգեր ու լեզուներ: (Հասկանո՞ւմ եք):

34 Այս մեծ եկեղեցին, մեծ կինը, հիմա հիշեք, նա վատ համբավ ունեցող կին է: Եվ եթե կինը ներկայացնում է եկեղեցին (իսկ Քրիստոսի Եկեղեցին Հարս է, սուրբ Հարս), ուրեմն սա պիղծ կին է: Ուրեմն սա պետք է որ պիղծ լինի, որն հավակնում է հարս լինել: Հասկանո՞ւմ եք: Հիմա, և ի՞նչ է անում նա: «Նա նստած է» կամ *վերևում* լինելը, նշանակում է «իշխանություն ունենալ շատ ջրերի վրա»: Այլ խոսքերով՝ նա իշխանություն ունի բոլոր ազգերի, լեզուների և ժողովուրդների միջոցով: Նա շատ հզոր անձ է, այս կինը:

Հիմա՝ որի հետ պոռնկացան երկրի թագավորները...

35 «Որովհետև երկրի թագավորները պոռնկություն արեցին», հարուստ, հզոր մարդիկ արեցին: Ինչպե՞ս դուք, ինչպե՞ս թագավորը կարող է պոռնկություն անել եկեղեցու հետ: Սա հոգևոր պոռնկություն է: Հոգևո՛ր: Ի՞նչ է պոռնկությունը: Դա, դե, մի կնոջ նման է, ով

անհավատարիմ է ապրում իր ամուսնուն: Ունենալով ամուսին նա ապրում է ուրիշ տղամարդու հետ: Եվ այս եկեղեցին հավակնում է լինել Քրիստոսի Հարսը, մինչդեռ նա պոռնկություն է անում աշխարհի թագավորների հետ իր պիղծ կյանքով, պիղծ վկայությամբ: Ո՜հ, սա խորը և բովանդակալից է: Ես պարզապես սիրում եմ Խոսքը: Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք:

...որի հետ պոռնկացան երկրի թագավորները, ու երկրի բնակիչները նրա պոռնկության գինով հարբեցին:

36 Նրա «գինին», ահա թե ինչ էր նա բաժանում, իր խրախուսանքը՝ «Մենք ենք Եկեղեցին: Մենք ենք, որ ստացել ենք դա»: Հասկանո՞ւմ եք: Հիմա պարզապես պահեք դա ձեր մտքում: Շատ լավ: «Եվ ինձ տար-...»:

37 Հիմա, հրեշտակը Հովհաննեսին ասաց. «Ես քեզ ցույց կտամ այն դատաստանը, որը գալիս է այս մեծ եկեղեցու վրա»: Այժմ նայե՛ք:

Եվ ինձ հոգիով անապատը տարավ. ու տեսա մի կնոջ՝ բոսորագույն գազանի վրա նստած...

38 *Բոսորագույնը* Աստվածաշնչում խորհրդանշում է «արքայական»: *Բոսորագույն* նշանակում է «կարմիր»: Իսկ *գազանը* ներկայացնում է «իշխանություն»:

Ուշադրություն դարձրի՞ք ծովից դուրս եկող գազանին, որ Հայտնության 13–րդ գլխում էր: Եվ երբ տեսնում եք գազանը դուրս է գալիս ծավի միջից, նշանակում է, որ այս ուժը մարդկանց միջից է բարձրանում:

Բայց Հայտնության 13–ում, երբ այս գառը դուրս եկավ, նա երկրից դուրս եկավ, մարդիկ չկան, Միացյալ Նահանգներ: Բայց հետո, այն բանից հետո, երբ երկու փոքրիկ եղջյուրներ ունեցավ՝ քաղաքական և եկեղեցական ուժեր, հետո նա իշխանություն ստացավ և խոսեց ինչպես վիշապը խոսեց նրանից առաջ: Դուք պետք է սա գրի առնեք, մենք մտնում ենք կրոնական հալածանքների մեջ, այն նույն բաներով, որոնք շատ տարիներ առաջ արեցին հեթանոսական Հռոմում, որովհետև սա է ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ:

Հինա նայե՛ք սրան. «Նստած է գազանի վրա, իշխանություն»:

39 Դուք ուշադրություն դարձրի՞ք Ռեբեկային: Երբ Եղիազարը գտավ նրան, երեկոյան ժամին էր, և նա

ուխտերին ջուր տվեց: Որովհետև Եղիազարն ասել էր. «Եթե այն աղջիկը, որ գալիս է, ջուր տա այս ուխտերին, նա կլինի...և ինձ ջուր տա խմելու, կլինի նա, ում Դու ընտրել ես, Տե՛ր, Քո ծառա՝ Իսահակի, հարսնացուն լինելու»: Եվ նա դեռ աղոթքը չէր ավարտել, Ռեբեկան եկավ ջուր քաշեց խմեցրեց նրան, և ուխտերին էլ ջուր տվեց: Ուշադրություն դարձրեք, ուխտը կենդանի էր: Եվ այն նույն կենդանին, որին նա ջուր էր տվել, նրան տարավ իր փեսայի՝ Իսահակի մոտ:

40 Եվ այսօր Սուրբ Հոգու զորությունը, որին «ջուր է տալիս» Եկեղեցին և երկրպագում է, կհամբարձի նրան Փեսային դիմավորելու համար: Անշուշտ, երեկոյան Իսահակն արտում էր: Մենք Տիրոջը Փառքի մեջ չենք դիմավորելու: Եփեսացիս 5–րդ գլուխն ասում է, որ մենք օդի մեջ ենք դիմավորելու Նրան: Ո՛հ, դա ստիպում է մեթոդականներին բղավել: Մտածե՛ք դրա մասին: Հասկանո՞ւմ եք: Տերը...

Իսահակն իր հոր տնից դուրս էր եկել և արտում էր, երբ տեսավ մոտեցող Ռեբեկային ուխտի վրա նստած: Նա առաջին իսկ հայացքից սիրեց նրան, և ուխտից իջավ ու վազեց նրան դիմավորելու: Դա ճիշտ է: Ահա թե որտեղ ենք մենք հանդիպելու Տիրոջը: Եվ այն նույն ուխտը, որին նա ջուր էր տվել, նրան տարավ իր ամուսնու մոտ:

Եվ այն զորությունը, որ Եկեղեցին երկրպագում է, որին աշխարհը «ֆանատիզմ է» անվանում, որ Եկեղեցին երկրպագում է, նույն զորությունն է լինելու, որը Եկեղեցուն կհամբարձի «օդի մեջ Տիրոջը դիմավորելու»: Սո՛ւրբ Հոգին: Հասկանո՞ւմ եք: Կա...

Եվ նայե՛ք, Ռեբեկան կույս էր:

41 Իսկ այս կինը, որի մասին մենք խոսում ենք այստեղ, պոռնիկ է: Հիմա, հասկանո՞ւմ եք, թե ինչ զորություն է սա: Իշխանություն, ինչ է նշանակում, դա, այդ գազանինը: Նա նստած էր կարմիրի վրա: Հիմա, ի՞նչ կենդանի կարող է դա լինել: *Կարմիր,* դա պետք է լինի «հարուստ» իշխանություն: Ի՞նչ եկեղեցի կարող է դա լինել հիմա: Նա հարուստ, մեծ հզոր եկեղեցի է, և նրա ազդեցությունը տարածվում է բազմությունների և ժողովուրդների վրա: Եվ երկրի թագավորները հոգևոր պոռնկություն էին անում նրա հետ, երկրի մեծամեծները: Մեկ րոպեից մենք կպարզենք, թե ով է նա, և կպարզենք այս հարանվանությունների վերաբերյալ:

Եվ այն կինը ծիրանի էր հագել (թագավորական), *...ծիրանի ու կարմիր էր հագել...զարդարված էր ոսկով, պատվական ակներով...մարգարիտներով, և իր ձեռքին մի ոսկի բաժակ ուներ՝ լի* գարշելիքով *և իր պիղծ պոռնկութեամբ:*

42 Ի՞նչ ուներ նա իր ձեռքին: Իր վարդապետությունը, այն, ինչ նա առաջարկում է մարդկանց. «Մենք ենք եկեղեցին: Մենք *այս* ենք»: Եվ այդպես նա ստիպեց երկրի թագավորներին հարբել իր հետ: «Մենք *սա* ենք: Մենք ենք հզոր ուժը: Մենք տիրել ենք բոլոր ազգերին: Մենք ենք ամենամեծ եկեղեցին: Եկեք, խմեք մեր...Ահա, մի քիչ լցրեք սրանից: *Դուք* վերցրեք: *Դուք* վերցրեք»: Ահա, հասկանում եք: Եվ նա իր ձեռքին մի բաժակ ուներ: Նայե՛ք:

Եվ այն կինը ծիրանի ու կարմիր էր հագել... զարդարված էր ոսկով, պատվական ակներով ու մարգարիտներով, և իր ձեռքին մի ոսկի բաժակ ուներ՝ լի իր գարշանքով *և իր պիղծ պոռնկութեամբ:*

43 Հիմա, բարեկամնե՛ր, մենք օրաթերթ չենք կարդում, այլ՝ Ատոծո հավիտենական և օրհնյալ Խոսքը: Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց այդ Խոսքը չի անցնի: Դա ճիշտ է:

Եվ նրա ճակատին գրված էր մի անուն, ավելի ճիշտ՝ մի անուն էր գրված՝ «Խորհուրդ, մեծ Բաբելոն՝ պոռնիկների ու երկրի գարշանքի *մայրը»:*

44 Հիմա, վերջերս, չեմ կարծում, որ այստեղ եկեղեցում էր, բայց ես քարոզեցի՝ *«Ձեռագիրը պատի վրա»* թեմայով, և տվեցի Բաբելոնի պատմական դիրքը: Հիմա, ցանկացած «իզմ», որը երբևէ վեր է ելել, ցանկացած կրոն և «իզմ», որ գոյություն ունի այսօր աշխարհում, սկսվել է Ծննդոց գրքում: Հիմա, եթե ձեռք բերեք Հիսլոպի *«Երկու Բաբելոն»* գիրքը, եթե ուզում եք հետամուտ լինել դրան պատմության մեջ, կամ այդ հրաշալի գրքերից մեկը, այս իզմերից ցանկացածը, որը որ ուզում եք, կարող եք գտնել այնտեղ: Մենք մի քանի րոպեից կվերադառնանք այնտեղ, կին քարոզիչների մասին, հասկանում եք, և ձեզ ցույց կտամ, թե առաջինը որտեղից է այն սկսվել, հասկանում եք, այստեղ՝ Ծննդոցում: Եվ այս զանազան բաների վերաբերյալ, թե ինչպես են նրանք դուրս եկել Ծննդոցից: *«Ծննդոց»* նշանակում է «սկիզբ»: Քանի՞սը

գիտեն, որ դա ճիշտ է: Ծննդոցը սկիզբ է: Այսպիսով, այն ամենը, ինչ գոյություն ունի, պետք է սկիզբ ունենար:

45 Երբ ես նայում եմ ծառին...Ես երկու-երեք, մոտավորապես երկու ամիս մնացել եմ անտառներում: Ես տեսել եմ, թե որքան գեղեցիկ է այն: Ես տեսել եմ այն իջնում է ցած, և դրա տեղը մեկ ուրիշն է աճում, հավիտենական կյանք: Եվ ես մտածում եմ դրա մասին: Բայց ինչ-որ տեղ այդ ծառը սկիզբ է ունեցել: Այն պետք է սկիզբ ունենար: Եվ միակ ձևը, թե ինչպես այն կարող էր սահմանվել որպես ծառ կա՛մ կաղնի, կա՛մ հաճարենի, կա՛մ բարդի, կա՛մ արմավենի, կամ ինչ էլ որ լիներ, դրա հետևում պետք է կանգնած լիներ հզոր Բանականություն: Կամ եթե ընդամենը մեկը լիներ, մեկ կաղնու ծառ լիներ, ամեն ինչ աշխարհում կաղնու ծառ կլիներ: Բայց Ինչ-որ մի բան՝ հզոր Բանականություն պետք է կարգի բերեր այն:

Օրհնյա՜լ լինի Նրա սուրբ Անունը: Նա է այն Մեկը, Ով լուսինն ու աստղերը դրեց արեգակնային համակարգի մեջ: Նա ամեն բան իր կարգ ու կանոնի մեջ է դրել: Եվ Նա Իր Եկեղեցին էլ կարգուկանոնի մեջ կդնի: Այն կպտտվի այնպես, ինչպես որ Ինքն է ուզում՝ դեպի արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ, կամ ուր որ Նա լինի: Երբ մենք կարողանանք մեր մտքից դուրս հանել հարանվանական այս գաղափարները և մեզ լիովին հանձնեք Գողգոթային: Նա ամեն բան կարգուկանոնի մեջ կդնի, եթե մենք լինենք այնպես հլու և հնազանդ, ինչպես ծառերը և Իր մյուս ստեղծագործությունը: Դուք երբեք չեք տեսնի, որ լուսինն ասի. «Ես այս երեկո չեմ շողալու: Աստղե՛ր, ձեզանից մի քանիսը թող իմ տեղը շողան»: Բայց մենք, ոհ, մենք ուրիշ ենք, հասկանում եք:

46 Հիմա, Բաբելոն, տեսե՛ք, թե Բաբելոնն ինչպե՞ս է ի հայտ գալիս: Այն հայտնվում է Աստվածաշնչի սկզբում, Աստվածաշնչի՝ մեջտեղում և Աստվածաշնչի՝ վերջում: Հիմա, այստեղ մի բան կա: Հիմա, այն սկսվում է Նեբրովթով: Նեբրովթը Բաբելոնը հիմնեց Սենաարի հովտում, անմիջապես Տիգրիս և Եփրատ գետերի մեջտեղում: Եվ Եփրատն անցնում էր դրա միջով: Եվ, և երկրի բոլոր ճանապարհները տանում են Բաբելոն: Պղինձից պատրաստված այդ դարպասներից յուրաքանչյուրը մոտավորապես վաթսուն մեկ մետր լայնությամբ էին: Եվ երբ մտնում էիր Բաբելոն քաղաք, բոլոր փողոցները տանում էին ուղիղ դեպի գահը:

47 Հիմա, դուք հիմա կարող եք գնալ Հռոմ, և բոլոր ճանապարհները կտանեն Հռոմ: Եվ փոքրիկ կույս Մարիամի արձանը՝ մանուկ Քրիստոսը գրկին, կանգնած է ճանապարհի ամեն անկյունում, ճանապարհի շրջադարձին՝ ցույց տալով ճանապարհը դեպի Հռոմ: Հասկանո՞ւմ եք: Այն հայտնվում է Աստվածաշնչի սկզբում, Աստվածաշնչի մեջտեղում և ահա այն Աստվածաշնչի վերջում է:

Ես հիմա մի քանի րոպեյով ուզում եմ շարունակել կարդալ, որպեսզի դուք սրա նախապատմությունն ունենաք: Հասկանո՞ւմ եք: Շատ լավ: «Եվ տեսա այն կնոջը», հիմա նայեք «եկեղեցին»: Երբ *կին* եք տեսնում, պարզապես մտածեք «եկեղեցու» մասին: Հասկանո՞ւմ եք:

...տեսա այն կնոջը՝ սրբերի արյունով...հարբած:

48 Հիմա, որտեղի՞ց է առաջացել *սուրբ* բառը: *Սուրբ* բառն առաջացել է «առանձնացված» կամ «սրբված», գատված բառից: Շատ լավ:

...տեսա նրան՝ *սրբերի արյունով...հարբած:*

49 Հիմա, եթե այս կինը եկեղեցին է, ապա նա հալածում է սուրբերին: Եվ նա ամենամեծ եկեղեցին է: Նա իշխանություն ունի ամբողջ աշխարհի վրա: Նա շատ ջրերի վրա է: Եվ նա...Երկրի թագավորները պոռնկություն են անում նրա հետ: Ո՞վ է նա: Մի տեսակ խորհրդավոր է: Հիմա Հոգին պատրաստվում է...Դուք գիտեք, որ եկեղեցում ինը հոգևոր պարգևներ պետք է լինեն՝ իմաստության համար, և մեկը գիտության, և մեկը բժշկության, և մեկը *և այլն:*

...ու Հիսուսի վկաների արյունով...

50 Կարծես նրանց համար այնքան էլ կարևոր չէր, թե Հիսուսն ինչ է ասել: Կարևորն այն էր, ինչ եկեղեցին է ասել: Դա ճիշտ է: Եվ դա էլ է ճիշտ:

...երբ նրան տեսա, մեծ զարմանքով զարմացա:

51 «Մեծ զարմանքով զարմացա: Ես...Շատ զարմանալի էր իր պահով, որ ես զարմացա, թե այդ ինչպես նա...»: Թույլ տվեք ինձ հիմա զբաղեցնել Հովհաննեսի տեղը և փորձել մի փոքր բացել դա, հասկանում եք: Հովհաննեսն ասում է. «Ահա նա նստած է: Նա հավակնում է լինել քրիստոնեական եկեղեցի: Աշխարհի բոլոր փողերը հասանելի են նրան: Երկրի թագավորները նրա ոտքերի տակ են: Նա հարուստ ու գրավիչ է, և ինչպե՞ս կարող է նա

հարբած լինել Հիսուսի վկաների արյունով: Ինչպե՞ս նա կարող է հալածել սրբերին: Ինչպե՞ս նա կարող է սպանել Քրիստոսի այդ վկաներին: Մինչդեռ նա իրեն քրիստոնյա է հռչակում, քրիստոնյա եկեղեցի»: Հիմա նայե՛ք:

Եվ հրեշտակն ինձ ասաց. «Ինչո՞ւ զարմացար, ես քեզ կասեմ այդ կնոջ խորհուրդը ու այն գազանի, որ նրան իր վրա է կրում, և որ յոթ գլուխ ու տասը եղջյուր ունի:

52 Հիմա, սա պարզապես սովորական ընթերցանություն է այստեղ: Ըմբռնեք սա: Սա շատ հեշտ կլինի:

Գազանը, որին տեսար, որ կար ու այժմ չկա. իջնելու է...*անդունդից է դուրս գալու, և դեպի կորուստ է գնալու: Եվ կզարմանան երկրի վրա բնակվողները, որոնց անուններն աշխարհի սկզբից ի վեր գրված չեն կյանքի գրքում, երբ* տեսնեն... *երբ, երբ տեսնեն այն գազանին, որ կար և այժմ չկա, սակայն կհայտնվի:*

53 Հիմա, սա պետք է խայթի, և ահա խայթոցը: Նա ասաց, հիմա ուշադրություն դարձրեք, որ. «Երբ բոլորը,— ոչ թե ընդամենը մի քանիսը, այլ,— երկրի վրա բոլոր բնակվողները կզարմանան»: Բոլորը կզարմանան: Ողջ աշխարհը կզարմանա այս կնոջով: Ընդամենը մի խումբ չի զարմանա դրա համար, և դա նրանք են, որոնց անունները գրված էին Գառան Կյանքի Գրքում:

54 Հիմա, ես կարող էի սա այստեղ մի քիչ սեղմել, որովհետև մի քանի րոպեյից խորանալու ենք դրա մեջ: Հասկանո՞ւմ եք: Ե՞րբ են նրանց անունները տեղադրվել Գառան Կյանքի Գրքում: (Երբվանի՞ց): Նրանց մասնակցած վերջին արթնությունից հետո՞: Այն երեկո, երբ խորանի մոտ եկա՞ն: Այն երեկո, երբ եկեղեցուն միացա՞ն: Ես չեմ փորձում ձեզ վիրավորել: Բայց ես ասում եմ ձեզ, Աստվածաշունչն է ասում. «Նրանց անունները տեղադրվել են Գառան Կյանքի Գրքում աշխարհի հիմնադրումից ի վեր»: Ճի՛շտ է: Երբ Աստված ամենասկզբում տեսավ, որ ուղարկելու է Իր Որդուն և Նա զբաղեցնելու է մեղավորի տեղը, երբ Աստծո Որդու Արյունը հեղվեց: Աստվածաշունչն ասում է, որ Նրա Արյունը հեղվել է աշխարհի հիմնումից առաջ: Քանի՞սը գիտեն, որ Աստվածաշունչն ասում է դա, որ՝ «Քրիստոսի Արյունը հեղվել է աշխարհի հիմնումից առաջ»: Երբ այդ Արյունը հեղվեց, Մարմնի յուրաքանչյուր անդամ, որոնց

անուններն այս Արյունով գրված էին Գառան Կյանքի Գրքում աշխարհի հիմնադրման ժամանակ: Ինչի՞ց եք այդքան վախենում: Ո՛հ, եղբա՛յր: Դա դոներ է բացում, այդպես չէ՞:

55 Դե, հիմա, եկե՛ք կարդանք սա այստեղ և տեսնեք, թե արդյոք այն, ինչ ասվում է ճիշտ է: Հասկանո՞ւմ եք: «Եվ հրեշտակն ինձ ասաց. «Ինչո՞ւ...»: Կարծեմ դա 8-րդ համարն է. «Եվ գազանը, որին տեսար...»: Շատ լավ: Ահա նա:

Գազանը, որին տեսար, որ կար ու այժմ չկա. անդունդից է դուրս գալու...

Հիմա, մենք վերադառնում ենք դրան, բայց ես ուզում եմ այս մեկն էլ տալ, որովհետև կհասնենք դրան:

...և դեպի կորուստ է գնալու: Եվ կզարմանան երկրի վրա բնակվողները, որոնց անուններն աշխարհի սկզբից ի վեր գրված չեն կյանքի գրքում...

56 «Երկրի վրա մի խումբ է լինելու, այլ կերպ ասած՝ «որը մոլորվելու է» որովհետև նա խաբեց նրանց: Եվ միայն մի խումբ էր, որը չխաբվեց, և դա այն խումբն էր, որոնց անուններն աշխարհի հիմնադրումից ի վեր գրված էին Կյանքի Գրքում: Քիչ հետո կանդրադառնանք դրան:

57 Այժմ ուշադրություն դարձրեք այս կնոջը, եկեղեցուն, նա *«Խորհուրդ, Բաբելոն էր»*: Մենք տեսում ենք, որ նա հայտնվում է Նեբրովթի միջոցով: Ո՞րն էր Նեբրովթի նպատակը: Նեբրովթը մի քաղաք հիմնեց և ստիպեց մյուս բոլոր քաղաքներին այդ քաղաքին տուրք վճառել: Մենք կարո՞ղ ենք այդպիսի բան տեսնել այսօր: Կա՞ նման տեղ այսօր: Կա՞ մի եկեղեցի, որն իշխանություն ունի աշխարհի բոլոր ազգերի վրա: Անկասկած: Կա՞ այսօր մի տեղ, որ ստիպում է բոլոր ազգերին տուրք վճառել իրեն: Կ՞ա տեղ:

Եկե՛ք շարունակենք և կարդանք մնացածը, ընդամենը մի քիչ, որպեսզի սրա ամբողջական պատկերը ստանաք: Շատ լավ:

Գազանը, որին տեսար, որ կար...այժմ չկա, սակայն կհայտնվի:

Այստեղ իմաստուն միտք պետք է ունենալ:

58 Համա, քանի՞սը գիտեն, որ իմաստությունը Հոգու պարգևներից մեկն է: Հիմա, այդ դեպքում ո՞ր խմբին է Նա

դիմում: Նա պետք է որ դիմեր այն խմբի մարդկանց, ովքեր այս Եկեղեցում Հոգու գործող պարգևներն ունեն:

...այստեղ իմաստուն միտք ունեցողի համար է:

59 Հիմա, կանգ առեք և գտեք դա այս բոլոր եկեղեցական ժամանակաշրջանների մեջ: Մարտահրավեր, Սուրբ Հոգին խոսում է այն մասին, թե ինչպես են այդ պարգևները գործելու վերջին օրերում: Հիմա, մենք ունենք բժշկության գործող պարգևներ: Ո՛հ, դա, դա լավ է: Բայց եղբա՛յր, ուրիշ պարգևներ էլ կան: Դա ընդամենը դրանցից մեկն է: Դա պարզապես փոքր բան է: Այստեղ ավելի մեծ պարգ կա: Ո՞րը կլիներ լավագույնը. Սուրբ Հոգու իմաստությա՞ն պարգևը, որ Աստծո Խոսքը կապեր իրար և Եկեղեցուն ցույց տար, թե որտեղ ենք կանգնած, թե՞ պարզապես ինչ-որ մեկի բժշկությունը: Մենք բոլորս էլ ուզում ենք առողջ լինել: Բայց ես ավելի շուտ կնախընտրեի առողջ հոգի ունենալ, քան առողջ մարմին: Ո՛հ, Աստված իմ:

Լսե՛ք Սուրբ Հոգուն, որ խոսում էր Հովհաննեսի միջոցով Պատմոս կղզու վրա, որն ասաց. «Սա իմաստություն ունեցողի համար է: Թող նա լսի սա»: Այստեղ մենք ստանում ենք ամբողջական պատկերը: «Այստեղ...»:

Այստեղ իմաստուն միտք պետք է ունենալ. այդ յոթ գլուխները յոթ սարերն են, որոնց վրա կինը նստած է:

60 Աշխարհում միայն մեկ քաղաք կա, որի մասին ես գիտեմ...Աշխարհում կա երկու քաղաք, որոնց մասին ես գիտեմ, որոնք տեղակայված են յոթ կամ ավելի բլուրների վրա: Դրանցից մեկը Ցինցինատին է, որի մասին կարծես թե ֆանտաստիկ պատմություն կա, Ցինցինատի մասին: Դա մայր գայլի մասին է, գիտեք, որ...և այլն: Բայց դրա մեջ ավելին է: Բայց չկա մի եկեղեցի, որ իշխանություն ունենա Ցինցինատի վրա:

Ամբողջ աշխարհում միայն մեկ տեղ կա, որ յոթ բլուրների վրա նստած է եկեղեցի, որն իշխում է ամբողջ աշխարհ վրա: Հիմա, ես նոր եմ եկել այնտեղից: Այդ բոլոր բաները:

Եվ ես այնտեղ տեսել եմ, որտեղ ասվում է. «Այստեղ է իմաստությունը» (Հայտնություն 13): «Ով իմաստություն ունի, թող հաշվի գազանի թիվը, քանի որ դա մարդու թիվն է»: Ոչ թե մի խմբի մարդկանց, մարդկանց մի խմբի,

այլ «մի» մարդու թիվ է: «Եվ նրա թիվը վեց հարյուր վաթսունվեց է»:

61 Ես բազմիցս եմ լսել, որ Հռոմի պապի գահի վրա գրված է՝ «VICARIVS FILII DEI»: Ինձ հաճախ հետաքրքրել է, թե արդյոք դա ճիշտ է: Գիծ քաշեք, գրեք դա հռոմեական թվերով և տեսեք, թե արդյոք դա այդպես է: Դա բացարձակապես ճիշտ է: Ես *այսպես* մոտ էի կանգնած պապի եռակի թագին ապակու մեջ. «Իշխանությունը դժոխքի, երկնքի և քավարանի վրա»: Տեսնո՞ւմ եք: Ինչ վերաբերում է այդ բաներին, ես նոր եմ վերադարձել այնտեղից, նոր եմ վերադարձել Հռոմից և գիտեմ, որ դա ճշմարտություն է: Մենք հիմա գիտենք, որ դա նկարագրված է:

> *Եվ* ահա *յոթ թագավորները. հինգն ընկած* են (ինչը կատարվեց այն ժամանակ), *և մեկը* (որ հիմա պետք է գար, ով Կեսարն էր), *իսկ* մյուսը դեռ պետք է *գա* (ով Հերովդեսն էր, որը չար էր)...

62 Հիմա նայե՛ք: Տեսե՛ք, թե ինչքան կատարյալ է սա:

> *... ու երբ գա, կարճ ժամանակ պիտի մնա:*

63 Որևէ մեկը գիտի՞, թե որքան ժամանակ թագավորեց Հերովդեսը: Վեց ամիս: Մորը ձիու գումակին կապած քարշ տվեց փողոցով: Քաղաքը հրի մատնեց և մեղքը գցեց քրիստոնյաների վրա: Եվ բլուրի վրա ջութակ էր նվագում, մինչ նրանք...մինչ քաղաքն այրվում էր: Վեց, վեց ամիս: Տեսե՛ք. «Եվ այն գազանը...»: Հիմա նայե՛ք, տեսե՛ք, թե ինչ սրիկա էր նա: Հասկանո՞ւմ եք: Հիմա նայե՛ք:

> *Եվ այն գազանը, որ կար ու այժմ չկա... ութերորդն է և այն յոթից է* (յոթի բնույթը) *ու կորստյան է գնալու:*

64 Ցանկացած մարդ գիտի, որ *կորուստ* նշանակում է «դժոխք»: Եվ տեսե՛ք, թե որտեղից նա դուրս եկավ՝ «դժոխքից»: Ի՞նչ է դա: Անդունդ: Կաթոլիկ վարդապետության համար ոչ մի հիմք չկա: Կաթոլիկ վարդապետության համար Աստվածաշունչ չկա: Ոչ մի կաթոլիկ վարդապետության համար Աստվածաշունչ գոյություն չունի, ընդհանրապես: Նրանք չեն էլ հավակնում որ լինի: Այնտեղ մի քահանա էր նստել, Սուրբ Սիրտ եկեղեցուց այս փոքր քահանան եկել էր այնտեղ: Նա ասաց. «Ո՛հ, նա...»: Ես նրան պատմում էի Մարիա Էլիզաբեթ Ֆրեյզերի մկրտության մասին: Նա ասաց.

«Ո՛հ, դուք նրան մկրտել եք վաղ ժամանակաշրջանի կաթոլիկ եկեղեցու մկրտության համաձայն»:

Ես ասացի. «Ե՞րբ է նա արել դա»:

Նա ասաց. «Աստվածաշնչի մեջ, ձեր Աստվածաշնչի մեջ»:

65 Ես ասացի. «Մի՞թե Կաթոլիկ եկեղեցին մկրտել է այդ ձևով: Արդյո՞ք դա Կաթոլիկ եկեղեցու վարդապետությունն է»:

«Այո»:

66 Ես ասացի. «Կաթոլիկ եկեղեցու անսխալականության մեջ ինչո՞ւ է դա այդքան փոխվել»: Հասկանո՞ւմ եք:

67 Նա ասաց. «Դե, տեսեք, դուք բոլորդ Աստվածաշնչին եք հավատում: Մենք հավատում ենք Եկեղեցուն»: Հասկանո՞ւմ եք: «Մեզ համար կարևոր չէ, թե Աստվածաշունչն ինչ է ասում: Կարևորն այն է, ինչ եկեղեցին է ասում»: Դա միանգամայն ճիշտ է: Դուք երբևէ կբախվեք դրան, մեկ անգամ փորձեք, տեսեք: Նրանց համար կարևոր չէ, թե ինչ է ասում Աստվածաշունչը. դա դրա հետ ոչ մի կապ չունի: Նրանց համար կարևորն այն է, ինչ եկեղեցին է ասում: Հասկանո՞ւմ եք:

68 Բայց մեզ համար կարևոր չէ, թե եկեղեցին ինչ է ասում: Մենք հավատում ենք նրան, ինչ ասում է Աստված: Ամե՛ն: Որովհետև Աստվածաշնչում գրված է. «Թող ամեն մարդու խոսքը սուտ լինի, իսկ Իմը՝ ճշմարիտ»: Դրա համար մենք հարանվանություն չենք:

69 Հիմա նայե՛ք: Մի րոպե լսեք սա: «Հինգ թագավորները, որոնք կային, ընկած են, հինգ թագավորները»: Եթե պատմությունից եք ուզում, ես դա ձեզ ցույց կտամ: «Եվ մեկը կա, իսկ մյուսը պիտի գա»:

Հիմա նայե՛ք՝ «գազանը»: Հիմա, գազանը թագավոր չէր: Նա «մեկն էր, որ կա և այժմ չկա, սակայն կհայտնվի, և այժմ չկա, սակայն կհայտնվի և այժմ կա»: Ի՞նչ է սա: Պապերի հաջորդականություն, իշխանություն, գազանի կառավարում: Դա այն ժամանակ էր, երբ հեթանոսական Հռոմը դավանափոխ եղավ՝ Հռոմը պապական դարձնելու համար: Հեթանոսական Հռոմը դավանափոխ եղավ, իսկ հետո պապություն դարձավ, երբ նրանց մոտ թագավորի տեղ պապն էր, իսկ պապը հոգևոր թագավոր է: Դրա համար է նա թագադրված հոգևոր թագավոր, ով հայտարարում է, որ Հիսուս Քրիստոսի փոխանորդն է: Ահա խնդրեմ: Ուշադրություն դարձրեք:

70 Եվ մենք պատրաստվում ենք այդ կաթոլիկ վարդապետությունը դուրս բերել այնտեղից և ցույց տալ ձեզ, թե ինչպես է այն ներթափանցել հենց բողոքական երեղեցի, հասկանում եք, թե ինչպես է այն դեռևս գտնվում բողոքական եկեղեցում, դրանից շատերը: Դա միանգամայն Աստվածաշնչին հակառակ է, բացարձակապես հակառակ: Հիմա. «Գազանը, որ կար ու այժմ չկա»: Հիմա հիշե՛ք. «Երկրի վրա բոլոր բնակվողները կմոլորվեն, որոնց անուններն աշխարհի սկզբից ի վեր գրված չեն եղել»: Եկե՛ք տեսնենք:

> *Եվ այն գազանը, որ կար ու այժմ չկա* (11–րդ համարը), սակայն կհայտնվի *ութերորդն է և այն յոթից...ու կորուստյան է գնալու:* (Նա կշարունակի, մինչ որ ճանապարհի վերջում չընկնի անդունդը):
>
> *Եվ այն տասը եղջյուրը, որ տեսար՝ տասը թագավորներ են...*

Հիմա նայե՛ք այստեղ: Եթե դուք ուզում եք ցնցող ինչ–որ բան տեսնել, նայե՛ք սրան:

> *...տասը թագավորներ են, որոնք դեռ թագավորություն չեն ստացել, այլ այն գազանի հետ թագավորի պես մեկ ժամ իշխանություն են ստանալու:*

71 Նրանք թագադրված թագավորներ չեն. նրանք բռնապետներ են: Տեսե՛ք, նրանք երբեք թագադրված թագավորներ չեն եղել, բայց գազանի կառավարման ժամանակ որպես թագավորներ մեկ ժամ իշխանություն պիտի ստանան: Հենց այս կարճ ստվերային ժամանակում է, որ բռնապետները ոտքի են կանգնում: Հասկանո՞ւմ եք: «Այն գազանի հետ որպես թագավոր մեկ ժամ իշխանություն պիտի ստանան»: Հիմա, շատ լավ:

> *Սրանք մեկ կամք ունեն և իրենց զորությունը և իշխանությունը գազանին կտան:*
>
> *Սրանք Գառան հետ կպատերազմեն, և Գառը կհաղթի նրանց* (փա՜ռք), *որովհետև տերերի Տեր է ու թագավորների Թագավոր: Եվ նրանք, ովքեր իր հետ են, կանչված, ընտրված ու հավատարիմ են:*

72 Ինչպե՜ս կուզենայի հենց հիմա քարոզել այս թեմայով. «Ընտրված են աշխարհի ստեղծումից առաջ և հավատարիմ են մնում իրենց կանչվածության մեջ»: Ալելո՜ւիա: Ահա: «Նրանք կոչված են ընրված

և հավատարիմ»: *Եվ*-ը շաղկապ է, հասկանում եք. «Ընտրված են և հավատարիմ»: Նրանք կհաղթեն նրան: Կապ չունի, թե որքան հզոր են նրանք դառնալու:

73 Եվ այս հզոր կոմունիզմը, կոմունիստական շարժումը, որ մենք ունենք այսօր, մի՛ անհանգստացեք դրա համար: Դա աշխատում է անմիջապես Աստծո ձեռքերի մեջ: Ես կարող եմ դա այս Աստվածաշնչով ապացուցել: Նա ստիպելու է նրան պաստախան տալ յուրաքանչյուր նահատակի համար, որին նա սպանել է: Այո՛, պարո՛ն: Տեսե՛ք այս բոլոր թագավորները միասին համաձայնության կգան և կատեն նրան: Եվ ամբողջ ազգը, ամբողջ աշխարհը բռնկվելու է կոմունիզմով: Դա պետք է լինի Աստծո շարժումը նրան պատժելու համար: Դուք կասեք. «Մի րոպե սպասեք, Բրանհամ եղբայր, կոմունիզմն Աստծո շարժո՞ւմն է»: Բացարձակապես, անկասկած, Աստծո շարժումն է: Աստվածաշունչն է այդպես ասում: Բայց այն շարժվում է դատաստան ազդարարելու անաստված և անարգված ապօրինի մարդկանց վրա: Ի՞նչ է մնացել այս աշխարհում: Ի՞նչ ունենք մենք: Վերջերս այստեղ...

74 Եթե հնարավոր է, ես մի պահ կանգ կառնեմ իմ թեմայի վրա: Ես սուրբգրային մի հատված էի կարդում, որտեղ ասվում է, որ ապօրինին Տիրոջ ժողովքի մեջ չի մտնի, մինչև տասնչորս սերունդ: Քանի՞սը դա գիտեն: Դա ճիշտ է, Երկրորդ Օրինաց 23. ապօրինին: Եթե մի կնոջ բռնեին դաշտում, որը հեռու է մարդկանց պաշտպանությունից, և այդ տղամարդը տիրանար նրան, նա պետք է ամուսնանար այդ կնոջ հետ: Անկախ նրանից, թե նա դառնում է մարմնավաճառ, նա պետք է մինչև մահ ապրեր նրա հետ: Իսկ եթե այս կինը ամուսնանում է նրա հետ, հրամցնելով, որ նա կույս է, ինչն այդպես չէ, այդ դեպքում նրան կարող էին մատնել մահվան դրա համար: Իսկ եթե մի տղամարդ և կին, ովքեր ամուսնացած են, և ապօրինի երեխա են լույս աշխարհ բերում, դա, նա Տիրոջ ժողովքի մեջ չի մտնի, մինչև տասնչորս սերունդ: Իսկ սերունդը քառասուն տարին է: Չորս հարյուր տարի էր պետք, մինչև որ մեղքը Իսրայելի միջից դուրս գար:

75 Աստված ատում է մեղքը: Ինչպե՞ս եք պատրաստվում անցնել Տեր Հիսուսի սուրբ Արյան վրայով միայն նրա համար, որ պատկանում եք որոշակի հարանվանությանը, և ակնկալել, որ մտնելու եք: Դուզ պետք է գաք կամ Աստծո հիմունքների վրա, կամ բնավ չեք մտնի: Ճիշտ է: Լինի

սարկավագ, քարոզիչ, ով էլ որ լինենք, դա դրա հետ ոչ մի կապ չունի: Դու գալիս ես Աստծո պայմանով:

76 Տասնչորս սերունդ: Այն մարդը, ով վիճում էր այդ հարցի շուրջ ինձ հետ հիմա ներկա է այստեղ: Ասաց. «Այդ դեպքում մենք ինչպե՞ս ենք իմանալու, թե ով է փրկվելու»:

77 Ես ասացի. «Ահա թե որտեղ դուք պետք է լավ Կալվինիստ լինեք»: Քո անունն աշխարհի հիմնադրումից առաջ տեղադրված է եղել Գրքում: Աստված վերահսկում է այդ արյան հոսքը: Դա Իր գործն է: Հասկանո՞ւմ եք:

«Բայց ինչ դրանից, ով ստացավ...»:

78 Լսե՛ք: Դուք, այսօրվա երիտասարդներ, ես չգիտեմ, թե արդյոք այս եկեղեցին եք հաճախում, կամ թե որտեղից եք, դուք՝ երիտասարդ տղաներ և աղջիկներ: Դուք գիտակցո՞ւմ եք, որ այն ամենը, ինչ անում եք, եթե մեկ ուրիշ սերունդ լինի, ձեր երեխաները դատվելու են ձեր արածների համար: Մի՞թե պարկեշտության ու պատվի զգացում չունեք: Դուք, աղջիկներ, որ հագնում եք այդ կարճատաբատները և այլն, դուք գիտեք, որ դա արտացոլվում է ձեր դստեր վրա: Դուք գիտե՞ք, որ ձեր տատիկն անառակ է եղել, իսկ ձեր մայրը՝ անսամբլի աղջիկ, դրա համար էլ դուք այսօր մերկապարուհի եք: Անկասկած: Ի՞նչ են դառնալու ձեր երեխաները: Այո՛, պարո՛ն: Աստված ասում է, որ ծնողների անօրենությունը հատուցում են որդիները և իրենց որդիները՝ մինչև երրորդ և չորրորդ սերունդը:

79 Եվ արդյոք գիտակցո՞ւմ ես դու, եղբայր իմ, որ ամեն անգամ, երբ անում ես այն, ինչ ճիշտ է, դա կփոխանցվի քո երեխաներին:

80 Նայե՛ք, եկե՛ք վերցնենք Եբրայեցիս 7-րդ գլուխը: Աստվածաշունչն ասում է, որ երբ, երբ Մելքիսեդեկը հանդիպեց Աբրահամին, ով վերադառնում էր թագավորներին կոտորելուց, և օրհնեց նրան, ու ասվում է, հիմա. «Ղևի...»: Նա խոսում էր տասնաորդի վճարման մասին: Ասվում է. «Ղևին իր եղբայրներից տասանորդը ստանալու հրաման ուներ Տիրոջից: Եվ Ղևին, ով սատանորդ էր ստանում, սատանորդ վճարեց, որովհետև դեռևս Աբրահամի երանքում էր, երբ նա հանդիպեց Մելքիսեդեկին»: Իսկ Աբրահամը նրա նախապապն էր: Աբրահամը ծնեց Իսահակին, Իսահակը ծնեց Հակոբին, Հակոբը ծնեց Ղևիին, հորը, պապիկին, նախապապին: «Եվ մինչ Ղևին Աբրահամի երանքում

էր,— ասում է Աստվածաշունչը,— նա տասանորդը վճարեց Մելքիսեդեկին»: Ալելո՛ւիա:

81 Թույլ մի տվեք որևէ մեկին ձեզ ասել, թե աշխարհում ցանկացած տեսակի շարժում կարող է խանգարել Աստծո ատամնանիվին: Նա շարվում է ուղիղ առաջ: Դա հենց սկզբից ծրագրված է եղել: Չկան դևեր կամ բավարար դևեր, ովքեր կարող են խանգարել Նրա ծրագիրն:

82 Հիմա, Աստվածաշունչը չի ասում, որ նա «պոտենցիալ կերպով» վճարեց դա: Աստվածաշունչն ասում է. «Նա վճարեց տասանորդը», երբ նա իր նախապապի երանքում էր: Փա՜ռք: Դա իմ Տերն է: Ո՛հ, Նա գիտեր դա, նույնիսկ մինչև աշխարհի ստեղծումը: Նա ամեն բան գիտեր: Եվ Աբրահամի մեջ նա վճարեց տասանորդը:

83 Եվ քո՛ւյր, եղբա՛յր, ինչպե՞ս կարող ես դրանից փախչել, երբ տղամարդիկ ապրում են և վազվզում ուրիշ տղամարդկանց կանանց շուրջ, իսկ կանանցք տներ են քանդում և ապրում եք այնպես, ինչպես ապրում եք, ի՞նչ եք ակնկալում, որ հաջորդ սերունդը լինի: Ահա թե ինչ է դա: Դա, դա հիմա դառնում է ոչ այլ ինչ, քան ապօրինիների մի խումբ, խառնածիների, այլասերվածների խումբ: Եվ դրա համար միայն մի բան է մնում, և դա ատոմային օրն է, որում մենք ապրում ենք: Դա միանգամայն ճիշտ է: Մենք վերջին ժամանակներում ենք:

84 Մի առավոտ, Կենթուկիի բլուրներում մի երիտասարդ, հազիվ թե կարողանայիք տաս ոտնաչափ մոտենալ իրեն, սորգոյի մելաս էր պատրաստում: Հավանաբար հազիվ գիտեր, թե ձախը կամ աջը որն է: Երբ նա լսեց...Ինձ պետք էր դուրս գալ ծանոթ տեղանք: Ես չգիտեի, թե որտեղ եմ գտնվում: Ես փոս ընկած ինչ-որ տեղում էի: Ես բարձրանում էի այնտեղ՝ սկյուռ որսալու: Եվ երբ նստեցի այնտեղ, սկսեցի զրուցել նրա հետ: Եվ այս տղան ասաց, որ պատրաստվում է բանակ գնալ: Եվ այնպես ստացվեց, որ մենք սկսեցինք Տիրոջ մասին խոսել, և նա ասաց. «Քարոզի՛չ, դուք հավատո՞ւմ եք, որ մենք վերջին ժամանակներում ենք»: Եվ դա այնտեղ՝ այդ հեռու լեռներում:

85 Ես ասացի. «Իհարկե: Անշուշտ, որդյակ, մենք վերջին ժամանակներում ենք»:

86 Ահա խնդրեմ: Սա է այն ժամը, որում մենք ապրում ենք, եղբայր: Մենք տեղում ենք: Մի՞թե չեք տեսնո՞ւմ

մայրերին և հայրերին, պապիկին և տատիկին, թե ինչպես էին նրանք ապրում անցյալում: Մի՞թե չեք տեսնում, թե հայրիկն ու մայրիկն ինչպես են ապրել: Զարմանալի չէ, որ մենք այլասերվածության մեջ ենք գտնվում այսօր: Զարմանալի չէ, որ դու անդադար կարող ես քարոզել. նրանք միևնույն է կարճատաբատներ կհագնեն և կթքեն քո երեսին: Սիգարետներ կծխեն, ծուխ կարձակեն քո դեմքին և կասեն. «Զբաղվեք ձեր գործով»: Ինչո՞ւ: Որովհետև այդպիսի ցեղից են դուրս եկել: Ես պատրաստվում եմ ուղիղ դրան անցնել՝ *«Օձի սերմը»:* Մենք կպարզենք, թե որտեղ է նա տեղափոխվել, կտեսնենք, թե ինչու են նրանք այդպես վարվում: Նրանք սատանայի որդիներ են աշխարհի հիմնադրումից ի վեր: Դա ճիշտ է: Եվ պահուստում ոչինչ չունենք, դրա համար ոչինչ չի մնացել, միակ բանը, որ մնացել է, դատաստան է: Ոչինչ՝ դատաստանից բացի: Աստված պարզապես ամենը կվերացնի: Եվ մարդն ինքն է դա արել: Աստված չէր մտադրվել, որ այդպես լիներ, բայց Նա գիտեր, որ այդպես կլինի: Դրա համար է Նա ասել, որ. «Մոլորեցնելու է երկրի երեսին ապրող բոլոր բնակվողներին, բացի նրանցից, որոնց անունները տեղադրված են եղել Գառան Կյանքի Գրքում աշխարհի հիմնադրումից առաջ»:

87 Եկե՛ք դիտարկենք սա: Ընթերցենք հիմա մի փոքր ավել: Այժմ, կարծեմ մենք հիմա 12–րդ համարի վրա ենք:

> *Եվ այն տասը եղջյուրը, որ տեսար՝ տասը թագավորներ են, որոնք դեռ թագավորություն չեն ստացել, այլ այն գազանի հետ թագավորի պես մեկ ժամ իշխանություն են ստանալու:*
>
> *Սրանք մեկ կամք* կունենան, *և իրենց զորությունը և իշխանությունը գազանին կտան:*
>
> Եվ *սրանք Գառան հետ կպատերազմեն, և Գառը կհաղթի նրանց, որովհետև տերերի Տեր է ու թագավորների Թագավոր: Եվ նրանք, ովքեր իր հետ են, կանչված, ընտրված ու հավատարիմ են:*
>
> *Ու ասաց ինձ. «Այն ջրերը, որ տեսար, որոնց վրա նստած է պոռնիկը, ժողովուրդներ են, բազմություններ, ազգեր ու լեզուներ:*
>
> *...տասը եղջյուրները, որ տեսար գազանի վրա, նրանք կատեն պոռնիկին...*

88 Նայե՛ք դրան հիմա, այս «տասը եղջյուրը», այս տասը թագավորությունները: Տեսե՛ք, ամեն ինչ ընկնում է իր

տեղը, այն, թե ովքեր են այս բոնապետները: Հետևե՛ք, թե որ ուղությամբ են նրանք թեքվում: Ո՞ր ուղությամբ է այն թեքվում: Պարզապես, պարզապես ասեք ինձ մի բոնապետ, ով չի թեքվում կոմունիզմի ուղությամբ: Հասկանո՞ւմ եք: Եվ նրանք (ի՞նչ) կատեն «պոռնիկին», կնոջը, եկեղեցուն: Բայց ի՞նչ: Տեսե՛ք, թե ինչ է դա անելու:

> *...նրանք կատեն պոռնիկին, նրան ամայի ու մերկ կդարձնեն, նրա մսերը կուտեն ու կրակով կայրեն նրան:*

89 Նրանք կջնջեն իրեն քարտեզից. դա նույնքան հաստատ է, որքան այն, որ ես այստեղ կանգնած եմ: Մենք պարզապես ժամանակ ունեինք բարձրացնելու այս թեման այդ եկեղեցու մասին և անցնելու Սուրբ Գրքով, որտեղ ասվում է, կարդացեք. «Երկրի բոլոր թագավորնե՛ր և բոլոր նավավարնե՛ր, բոլորը, սգացե՛ք որովհետև մեկ ժամում մեծ Բաբելոնը ավերակ դարձավ»: Մեկ ժամ, նրա ժամանակը եկավ: Եվ, ոհ, ինչպես ասվում է. «Որախացե՛ք, սուրբե՛ր և դուք բոլոր սուրբ մարգարենե՛ր, որովհետև Աստված սուրբերի և ձեր եղբայրների արյան վրեժը լուծեց նրանից»: Տեսնում եք, դա ճիշտ է: Անշուշտ, կոմունիզմը գործիք է Աստծո ձեռքերում: Ճիշտ այնպես, ինչպես Նաբուգոդոնոսոր թագավորն էր գործիք Նրա ձեռքերում, երբ եկավ գրավեց այդ հրեաներին, և նրանց մերկ տարան...?...

90 Եվ մեղքը կարող է շարունակել ապականել, արդար սերմը կարող է մնալ այնտեղ և սերմը կարող է շարունակել ապականվել, և ապականել, և ապականել, մինչև որ որոշ ժամանակ անց այն սպառվի: Այն տեղ է հասնում, որովհետև նրանց մայրերն ու հայրերը և այլն մեզանից առաջ այդպես են ապրել, այդ ձևով, մինչև որ մեզ համար ոչինչ չի մնացել: Եվ դուք գիտե՞ք, թե Հիսուսն ինչ ասաց: Եթե Նա այդ օրերը չկրճատեր, ոչ մի մարմին չէր փրկվի:

91 Դուք կարո՞ղ եք տեսնել: Կարող եք տեսնել, թե ինչու մենք ստացանք դրանք (ես դիտողություններ չեմ անում): Արթուր Գոդֆրեյներ և մնացածը, գիտեք, հասկանում եք, և Էլվիս Պրեսլիներ, և, և կիսաածալած ոտքեր, արտահագուստներ, մազերները մինչև ուսերը թափաց և այն ամենը, թե ինչպես են դեռահասները վարվում: Ի՞նչ է դա անում: Ի՞նչ է սա: Որովհետև սա դուրս է գալիս բոլորի առջև ապրող անօրինական մարդկանցից: Ոչինչ չի մնացել: Ո՛հ, նրանք կկանգնեն և կերգեն. «Ավելի մոտ Քեզ, իմ Աստված», ինչպես կոկորդը խեղդող Երնին և

նրա նմանները, օրհներգի նման ինչ-որ բան են երգում և այլն: Եղբա՛յր, գիտե՞ս ինչ: Դա, դա բացարձակապես կեղծավորություն է: Այո՛, պարո՛ն:

92 Մի մարդ, ով գնում է այնտեղ և լսում է այդ ռոք-ն-ռոլը և բուգի-վուգի և դրա նման հիմարություններ, գործ չունի այս ամբիոնի հետևում: Նա ոչ մի գործ չունի ամբիոնի հետևում: Սա քահանայության, Աստծո կանչվածների համար է: Աստծուց կանչված ծառաներին է պատկանում այս տեղը: Եվ չի պատկանում նմաններին: Ահա թե ինչում է խնդիրն այսօր, նրանք եկեղեցին վերածել են ոչ այլ ինչի, քան ինչ-որ օթյակի: Օթյակի հետ ամեն ինչ կարգին է, եթե ուզում եք այդպես վարվել, դա ձեր գործն է: Բայց թույլ տվեք ձեզ ասել, մեծ տարբերություն կա փորձել... օթյակի և եկեղեցու միջև: Այո՛, պարո՛ն: Եթե ուզում եք օթյակում անել այդ բաները, և անցկացնել բոլոր տեսակի այդ երեկույթները և այլն, դա ձեր գործն է: Բայց, եղբա՛յր, եկեղեցին պետք է ամբիոնից բռնած ավլել մինչև հիմքը: Դա ճիշտ է: Ես չեմ ասում, որ փայլի նոր պատուհաններով և այլն: Ես նկատի ունեմ հնաոճ, Աստծուց ուղարկված արթնությունը, որն ամեն բան ցիրուցան է անելու մի կողմից մյուսը: Այո՛, պարո՛ն: Ինչպես միացրած լույսը՝ էլեկտրական լույսը խնձորի կտորի շուրջը հավաքվաց մի կույտ ուտիճների համար: Այո՛, պարո՛ն, երբ լույսը միանա, նրանք ցիրուցան կլինեն:

93 Հիմա նայե՛ք. «Սրանք մեկ կամք ունեն և իրենց իշխանությունը կտան»: Ես հիմա դրա ներքևում եմ: «Տասը եղջյուրը»: Այո, հիմա:

> *Որովհետև Աստված նրանց սրտերի մեջ դրեց, որ Իր կամքը կատարեն* (ահա այն), *միակամ լինեն և իրենց* թագավորությունները *գազանին տան, մինչև որ Աստծո խոսքերը կատարվեն:*
>
> Հիմա, *և կինը, որին տեսար, այն մեծ քաղաքն է, որ թագավորում է երկրի* բոլոր *թագավորների վրա:*

94 Հիմա, դես ու դեն ընկնելու կարիք չկա, մենք գիտենք, որ դա կաթոլիկ հիերարխիան է: Որևէ մեկի կարիքն չկա... Ես, ես դրան հավատում եմ նույնքան ամուր, ինչպես որ հավատում եմ, որ ես տսացել եմ Սուրբ Հոգին: Ես հավատում եմ դրան նույնքան ամուր, ինչպես որ հավատում եմ, որ ես քրիստոնյա եմ, ով կանգնած է այսօր այստեղ, որ այդ կաթոլիկ հիերարխիան է...Վատիկան քաղաքն է այն քաղաքը, որ նստած է յոթ բլուրների վրա:

Եկեղեցու հիերարխիան է այն գազանը, որ կար ու այժմ չկա: Նա Բաբելոն է: Այս ամենը նկարագրված է այնքան ճշգրիտ, կատարյալ Սուրբ Գրքի ողջ ընթացքում: Սա կաթոլիկ եկեղեցին է:

95 Հիմա, ահա ձեզ ցնցող մի բան: Դուք կասեք. «Դե, դուք չկպաք ինձ, Բրանհամ եղբայր»: Բայց թույլ տվեք ձեզ մի բան հարցնել: Եկե՛ք հիմա վերադառնանք 5-րդ համարին:

> *Եվ նրա ճակատին...էր գրված՝* «ԽՈՐՀՈՒՐԴ, ՄԵԾ ԲԱԲԵԼՈՆ՝ ԳԱՐՇԵԼԻՆԵՐԻ ՄԱՅՐԸ... ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՈՒ ԵՐԿՐԻ ԳԱՐՇԵԼԻՆԵՐԻ ՄԱՅՐԸ»:

96 Ի՞նչ էր նա: Պ-ո-ռ-ն-ի-կ: Եվ նա մ-ա-յ-ր էր: Ի՞նչ: Մ-ա-յ-ր: Նա ինչ-որ բան էր ծնել: Որդիների՞ մայր: Պոռնիկների: Ի՞նչ է պոռնիկը: Նույն բանն է, ինչ որ անառակը, անբարոյական կին: Ի՞նչը դարձրեց նրան անբարոյական: Իր ուսմունքը: Նա հավակնում էր, որ քրիստոնեական եկեղեցի է, բայց մարդկանց ձեռքով ստեղծված դոգմա էր բաժանում: Եվ այստեղ նա ասում է, որ ուներ...եթե նա առաջին կազմակերպությունն է եղել, ուրեմն կարծես թե որոշ կազմակերպություններ են դուրս եկել դրանից: Նա պոռնիների մայրն էր: Դա ճի՞շտ է: Պոռնիկների մայր: Չէր կարող որդիների մայր լինել: Չէր կարող մայր լինել...Նա պետք է կանանց մայր լիներ: Իսկ եթե նրանք կանայք էին, ուրեմն եկեղեցիներ էին: Եկե՛ք պարզենք: Ի՞նչ դուրս եկավ...

97 Ո՞վ էր առաջին կազմակերպությունը: Կաթոլիկ եկեղեցին: Ո՞վ էր երկրորդ կազմակերպությունը: Լյութերը: Ո՞վ էր երրորդ կազմակերպությունը: Ցվինգլին: Ինչի՞ն դա հանգեցրեց: Կալվին: Եվ դա անցնում է անգլիականներին, իսկ անգլիականներից՝ մեթոդականներին: Մեթոդականներ, ի՞նչ ստեղծեցին մեթոդականները: Այնտեղից դուրս եկավ Ալեքսանդր Քեմփբելը: Ալեքսանդր Քեմփբելից դուրս եկավ Ջոն Սմիթը: Դուրս...Ալեքսանդր Քեմփբելը քրիստոնեական եկեղեցի է. հետո նրանք ունեցան չորս թե հինգ Քրիստոսի եկեղեցիներ և բոլոր մնացած այդ փոքր «իզմերը» դուրս եկան: Այնուհետև ահա հայտնվում է մկրտական եկեղեցին, այն ուներ շատ փոքր մասնաճյուղեր: Եվ Մեթոդական եկեղեցուց դուրս է գալիս...Մեթոդական եկեղեցուց առաջինը դուրս եկան Ուեսլեյական Մեթոդականները, հետո նրանք չորս թե հինգ անգամ բաժանվեցին: Այնուհետև նրանք

եկան մեկ այլ մեթոդիստական տեսակին, իսկ հետո դա շարունակվեց, հետո եկան «Ազատ մեթոդականներին»: Իսկ, իսկ հետո դրանից անցան Նազովրեցիների: Նազովրեցիներից՝ Սրբության Ուղղավորներին, Սրբության Ուխտավորներից էլ և այդպես շարունակ: Պարզապես այդպիսի փոքրիկ «իզմ»-եր են դուրս գալիս, գնում են առաջ, մի փոքր աշխուժությունը մնում է անցյալում և վազում են առաջ: Եվ նրանցից ամեն մեկն ի՞նչ արեց: Եվ ի վերջո դրանք ավարտվեցին Հիսունականներում:

98 Եվ ի՞նչ արեցին Հիսունականները: Նույն բանն, ինչ արեց իրենց մայրիկը՝ հետ դարձան և կազմակերպվեցին: Եվ ի՞նչ դարձավ: Հարանվանություն: Մտեք նրանցից մեկի մեջ, առաջին հարցն է. «Ո՞րն է ձեր ուսմունքը»: Տղա, նրանք բարակ սանրով սանրում են, հասկանում եք, պարզելու համար, թե ով ես դու և ինչին ես հավատում: Եվ եթե ամբողջությամբ չես համնկնում նրանց հետ, եղբա՛յր, կվտարվես: Եվ դա այդպես է:

99 Եվ մի կարծեք, թե միայն նրան համար, որ դուք ասում եք, որ Հիսունական եք, անվտանգության մեջ եք: Եղբա՛յր, ես վստահ եմ, որ ճանապարհից դուրս նույնքան շատ Հիսունականներ կլինեն, որքան որ ճանապարհին են: Հասկանո՞ւմ եք:

100 Հիմա, այդ բոլոր կազմակերպությունները, եթե միայն թողնեին, որ Հոգեգալստական օրհնությունը շարունակվի, չկազմակերպեին այն, պարզապես պահպանեին դա եղբայրության մեջ և թույլ տային, որ Սուրբ Հոգին անի զատումը: Սուրբ Հոգին զատում է: Մի անգամ Անանիան և Սափիրան եկան և *այսինչ-այնինչ* բան ասացին, և Սուրբ Հոգին ասաց. «Ինչո՞ւ դուք խաբեցիք»:

101 Բայց մենք ասում ենք. «Հիմա, այդ եղբայր Ջոնսը, ոչ մի վատ բան մի ասեք նրա մասին, նա եկեղեցու ամենալավ վճարողն է: Ես գիտեմ, նա Սուրբ Հոգի ունի. ես լսեմ եմ, թե ինչպես է նա խոսում լեզուներով, և տեսել եմ, թե ինչպես է աղաղակում Հոգով»: Դա ավելին չէ, քան ոլոռը թմբուկի վրա լցնելը: Հասկանո՞ւմ եք: Ոչ մի կապ չունի դրա հետ: Աստված պետք է ասի: Նա պետք է ասի, թե արդյոք նա է, թե ոչ: Բացարձակապես: Բայց մենք ընդունում ենք դա մեր հարանվանության մեջ: «Դե, մենք վոնդում ենք նրան մեր Ասամբլեայից, միադավաններն են նրան ընդունում: Միադավանները մի

որոշ ժամանակ տանում են նրան, իսկ հետո վռնդում են: Որովհետև նրանք հասցրել են նրան մինչև այնտեղ և «Միայն Հիսուս»-ներն են նրան ընդունում: «Միայն Հիսուս»-ները մի որոշ ժամանակ ընդունում են նրան, իսկ հետո հաջորդը, ով ընդունում է նրան, Աստծո եկեղեցին է ընդունում նրան: Մարգարեության Աստծո եկեղեցին ընունում է նրան, և Թոմփլիսոնի շարժումը հրապուրում է նրան»: Ո՛հ, Աստված իմ: Եղբա՛յր, մենք համարյա սպառվեցինք: Դա հոգեգալուստի մեջ է, վերջին արթնությունը: Իսկ հիմա նրանք ստացան Կապույտ կրակը, յուղով օծված երկրպագողներ, և, և արյուն իրենց դեմքին: Եվ, ո՛հ, գթա, ես չգիտեմ, թե որտեղ են նրանք հասել հիմա:

102 Միայն մեկ բան, այն է, որ ամեն բան ապականված է: Դուք գիտեի՞ք, որ Աստվածաշունչն ասում է, որ այն ապականվելու է: Դուք գիտեի՞ք, որ Աստվածաշունչը խոսում է այս օրվա մասին, այդպես լինելու է, երբ նույնիսկ Տիրոջ սեղանները լցված կլինեն փսխվածքով: Եվ ասում է. «Ո՞ւմ ես կարող եմ վարդապետություն սովորեցնել: Ո՞ւմ եմ կարող եմ Ինձ հասկացնել տալ: Որ հրաման հրամանի վրա, հրամանի վրա, խրատ խտատի վրա»: Ո՞ւմ Նա կարող է վարդապետություն սովորեցնել: Նրանց, ովքեր կրծքից, մորից կտրված են: Հասկանո՞ւմ եք:

103 Հիմա, չկա, գոյություն չունի այս քաղաքում այնպիսի չարաճճի մի կին, որ կույս աղջիկ լույս աշխարհ բերած չլինի: Երբ նա ծնվում է, նա է, նա կարող է լավ ընթանալ: Սակայն եթե չեք նկատել, քանի որ նրա մայրն այդ բնույթի է, տասից ինը դեպքերում այդ աղջիկը վարվելու է այնպես, ինչպես իր մայրը: Հիմա, դուք գիտեք որ դա ճիշտ է: Մի տարեց կին, որի տունը վատ համբավ ունի կարող է փոքրիկ աղջիկ ծնել: Նա կարող է տասնվեց տարեկան լինել, շուշանի պես մաքուր և բարոյական, բայց արդյոք նա կմնա այդպիսին: Բայց բանը նրանում է, որ նա հետ է գնում և վարվում է իր մոր նման:

104 Հիմա, կաթոլիկ եկեղեցին առաջին ծեր պոռնիկն էր, որը դուրս եկավ իր հնարած ուսմունքներով, սնապաշտություններով, որի մասին Աստվածաշունչն ասում է. «Նա անդունդից դուրս եկավ, ու հետ կգնա կորստյան»: Աստվածաշունչն է դա ասում: Հիմա, եթե նրանք դա են սովորեցնում, դա սխալ է: Աստծո Խոսքի համաձայն դա սխալ է: Հետո գալիս է մեթոդական

եկեղեցին, որը ծնվել է նրանից, գեղեցիկ երիտասարդ կին, բայց ի՞նչ արեց նա: Հետ դարձավ և անում է նույն բանը, ինչ իր մայրն է անում: Թույլ է տալիս իր եկեղեցուն կարճատաբատներ հագնեն: Թույլ է տալիս, որ սիգարետներ ծխեն: Թույլ է տալիս, որ շարունակեն և գործեն այնպես, ինչպես ուզում են: Այնտեղ ոչինչ չի ասվում դրա մասին: Փոքրիկ, ծեր, կիսահում հովիվը ամբիոնի հետևում վախենում է, որ մի օր կզրկվի իր աշխատավարձից կամ էլ թխվածքաբլիթի թավայից:

105 Թո՛ւյլ տվեք ձեզ ասել, եղբայր, ես ավելի լավ է քարոզեմ Ավետարանը և չոր հաց ուտեմ և առվակից ջուր խմեմ և ասեմ Ճշմարտությունն այդ մասին: Նույնիսկ եթե իմ եկեղեցու բոլոր մարդիկ վեր կենան և դուրս գնան, ես միևնույնն է կասեմ Ճշմարտությունը դրա մասին: Այո, անկասկած:

106 Ի՞նչ է կատարվում: Ո՛հ, սա ճաշի կտրոն է: «Դե, դուք գիտեք, որ ես քաղաքի ամենամեծ հովիվն եմ»: Դուք՝ մկրտականներ և մեթոդականներ, սուտ մարգարեի եք լսում: Հիմա, կոպիտ է, բայց ցանկացած բան, որ այս Աստվածաշնչին հակառակ է սովորեցնում, սուտ մարգարե է: Ինձ համար միևնույն է, թե որքան փայլեցված կարող է դա լինել, դա սուտ մարգարեություն է: Դա ճիշտ է:

107 «Ո՛հ, քանի դեռ ձեր անունը գված է գրքում ամեն բան կարգին է»: Ձեր անունը կարող է տասնյակ գրքերում գրված լինել: Եթե այն Կյանքի Գրքում գրված չէ, դուք կորսված եք: Դուք նույնիսկ կարող եք լինել այնքան լավը, այնքան հավատարիմ, մաքուր և բարոյական, որքան հանարավոր է, դա դրա հետ ոչ մի կապ չի ունենա:

108 Եսավը կրկնագի անգամ տղամարդ էր, քան Հակոբը, եթե խոսքը գնում է տղամարդ լինելու մասին, նա խնամում էր իր ծեր կույր հորը և այլն: Իսկ Հակոբը կախված էր իր մոր փեշից, փոքրիկ, ամաչկոտ, փափկասուն տղա էր: Բայց Աստված ասաց. «Հակոբին սիրեցի, իսկ Եսավին ատեցի», նախքան երեխաների ծնվելը: Հռոմեացիս 8-րդ գլխում է այդպես ասվում: Դա միանգամայն ճիշտ է:

109 Աստված գիտի, թե ինչ կա մարդու ներսում: Եվ Նա գիտի նաև, թե ինչ կա եկեղեցու ներսում: Մենք ապրում ենք Կենաց Հացով՝ Աստծո Խոսքի Հացով: Հիմա, դրա համար մենք հարանվանություն չենք:

110 Ես հիմա ուզում եմ մեկ այլ փոքրիկ…Ես ուզում եմ ձեզ մի փոքր լուսաբանել այն, ինչ այստեղ գրել եմ: «Մեծ…»: Այժմ Հայտնությունում, 19.2 համարում: Ես այստեղ նշած ինչ–որ բան ունեմ: Ուզում եմ տեսնեմ, թե ինչ է դա:

> *Քանի որ ճշմարիտ ու արդար են* Քո դատաստանները. *քանի որ դատեց մեծ պոռնիկին, որ իր պոռնկությամբ ապականեց երկիրը, ու իր ծառաների արյան վրեժը նրա ձեռքից պահանջեց:* (Դա կաթոլիկ եկեղեցու վերջն է):

111 Հիմա, մենք նաև ուզում ենք, որ այստեղ նույնպես ուշադրություն դարձնեք, որ հարանվանությունը, որ հարանվանությունը նույնպես գտնվում է այստեղ Սուրբ Գրքում, որ…Եվ Աստվածաշունչը երբեք չի խոսում հարանվանության մասին: Հարանվանությունը կաթոլիկ եկեղեցուց է դուրս եկել: Ինքն է հարանվանության առաջին մայրը, և ամեն հարանվանությունը նրանից է առաջացել: Հիմա, սա մի փոքր խայթելու է: Ամեն անգամ սա կարող է փոքր ինչ ավելի խայթող լինել, հասկանում եք: Բայց ես, ես ուզում եմ, որ դուք տեսնեք, որ հարանվանություններն Աստծուց չեն ծնվել կամ սահմանվել: Այն սատանայի կողմից է սահմանվել է:

112 Աստծո Եկեղեցին…Մենք բաժանված չենք, մենք բոլորս մեկ մարմին ենք. մեկ հույս և վարդապետություն, մեկ ենք սիրո մեջ: Դա է կենդանի Աստծո Եկեղեցին: Անկախ այն բանից, թե ինչ են նրանք, նրանց բաները, միասին մենք մեկ ենք: Դա ճիշտ է: Լինի մեթոդական, թե մկրտական, եղբա՛յր, եթե նա վերստին ծնված է և Սուրբ Հոգով լցված, նա իմ եղբայրն է: Մենք ուս–ուսի տված գնում ենք: Ճիշտ է: Այո՛, պարո՛ն: Տարբերություն չկա:

113 Մովսես: Երբեմն ես շրջվում և ասում եմ. «Դու ճանաչո՞ւմ ես հոգեգլստականների այդ ֆանատիկ խմբին, եղբայր Բրանհամ, ինչի՞ համար ես գնում այդ խումբ: Գիտե՞ք ինչ: Մովսեսը նայում էր Իսրայելի զավակներին: Նա նայում էր նույն պատուհանից, որից Փարավոնն էր նայում: Փարավոնը նրանց նայում էր որպես ցեխակույտ անող մի խմբի, բայց Մովսեսը նրանց վրա դիտարկում էր որպես Աստծո ընտրվածներ: Նա գիտեր, որ նրանք խոստում ունեն: Ինչո՞ւ: Նա Խոսքից գիտեր դա: Եվ հավատքով…Մի ոտքով գահին՝ լինել փարավոն, ամբողջ աշխարհը փռված կլիներ իր ոտքերի տակ, կնստեր այնտեղ, գինի կուլ կտար և

գեղեցիկ կանայք կհովարեին նրան, ինչպես կայսրի, կամ բռնապետի, կամ էլ աշխարհի թագավոր, երիտասարդ Մովսեսը քառասուն տարեկանում կունենար դա իր ձեռքում: Նա նայում էր ցեխակույտ անող այդ խմբին, բայց նա գիտեր, որ ինքը նրանցից մեկն էր: Ալելո՞ւիա: Ահա խնդրեմ: Նա գիտեր, որ ինքը նրանցից մեկն է: Եվ միայն հավատքով նա ընտրություն կատարեց:

114 Բոլորն էլ պետք է ընտրություն կատարեն: Դուք էլ պետք է ընտրություն կատարեք: Դուք հիմա ընտրություն եք կատարելու: Առավոտը դուք ընտրութուն եք կատարելու: Վաղը երեկոյան դուք ընտություն եք կատարելու, եթե կենդանի մնաք: Մի օր դուք ընտրություն եք կատարելու: Եղբա՛յր, ես վաղուց եմ կատարել իմ ընտրությունը: Այս Աստվածաշունչն է եղել իմ բառարանը: Այս Աստվածաշունչն է եղել իմ Կյանքի Գիրքը: Այս Աստվածաշունչն է եղել Աստծո Խոսքը: Աստվածաշունչով է, որ ես ապրում եմ: Այս Աստվածաշունչն է, որով ես կանգնում եմ:

115 Դրա համար Մովսեսը նայում էր Իսրայելի զավակներին: Եվ նա ոչ միայն ասաց. «Ո՛հ, նրանք հրաշալի մարդիկ են: Ես ոչ մի բան չունեմ նրանց դեմ: Ո՛հ, ո՛չ, ես մի բառ էլ չեմ ասի նրանց դեմ»: Այդպես են շատ մարդիկ անում այսօր: «Ո՛հ, այդ հոգեգալստականները և այն մարդիկ, ովքեր ունեն Սուրբ Հոգի, և այն մարդիկ, ովքեր հավատում են աստվածային բժշկությանը, ոհ, ես, ես, ես դրա դեմ ոչինչ չունեմ»: Բայց ոչ Մովսեսը: Նա թողեց Եգիպտոսը և դարձավ նրանցից մեկը: Նա իր եղբայրների միջից էր դուրս եկել: Նա նրանցից մեկն էր:

116 Եղբա՛յր, ահա թե որտեղ եմ ես ընտրում իմ ճանապարհը: Ես կընտրեմ իմ ճանապարհը Տիրոջ արհամարհված փոքրիկ խմբի հետ, նույնիսկ եթե դա մի բուռ է, ինչ էլ որ լինի: Նրանք խոստում ունեն, և ես տեսնում եմ նրանց անունները Գառան Կյանքի Գրքում: Նրանք իմ եղբայրներն են: Դա ճիշտ է: Կատարեք ձեր ընտրությունը և կանգնեք նրանց հետ: Ճիշտ են, թե սխալ, միևնույնն է կանգնեք այնտեղ: Եթե սխալ են, օգնեք, որ ուղղվեն: Ճիշտ է: Այս ու այն կողմ տշելով, դուք նրանց ավելի լավը չեք դարձնի: Հասկանում եք, փորձեք դուրս քաշել նրանց:

117 Չարլի, ինչպես ասացին եղբայր Ալենի մասին, հրդեհի մասին, որ նրանք...արյունը ձեռքերին: Ես ասացի. «Ես երբեք, երբեք չեմ արհամարհել Ա. Ա.

Ալեն եղբորը»: Ես ասացի. «Եթե ես կարողանայի Ա. Ա. Ալեն եղբոր նման քարոզել, բժշկության ծառայություն երբեք չէի անցկացնի»: Հիմա, իսկ ինչ վերաբերում է անհամաձայնությանը արյան հիման վրա, որ դա Սուրբ Հոգու ապացույցն է ձեր ձեռքերում, ես դրա հետ չեմ համաձայնվի: Բայց ինչ վերաբերում է եղբայրությանը, նա իմ եղբայրն է: Ես ուս ուսի կանգնած եմ նրա հետ մարտում: Դա ճիշտ է: Եթե նա սխալ է, ես կփորձեմ օգնել նրան: Իսկ եթե նա ճիշտ է, ես՝ սխալ, ես ուզում եմ, որ նա ինձ օգնի: Այդպես ենք մենք վերաբերվում իրար: Հիմա նայե՛ք այստեղ:

...նա ԽՈՐՀՈՒՐԴ, ԲԱԲԵԼՈՆ ԷՐ... ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՄԱՅՐԸ...

118 Հիմա, դուք այսօր տեսնո՞ւմ եք, բարեկամնե՛ր, թե ինչպես է եկեղեցին, տեսնո՞ւմ եք, թե ինչպես են այսօր այս եկեղեցիներն ապրում այնպես, ինչպես ուզում են: «Կատարելապես ամեն ինչ կարգին է, շարունակեք», խոզը ուտում է խոզին, ուշադրություն մի՛ դարձրեք: «Ոչ մի վատ բան չկա այդ բանն անելու մեջ: Դե, դու պարզապես փորձում ես հնաոճ լինել»: Հիմա նայե՛ք իրենց վարդապետությանը: Հիմա ես ուզում եմ...Հիմա նայե՛ք: Դա իրենց սովորությունն է: Տեսնո՞ւմ եք, մի քանի տարի առաջ Կաթոլիկ եկեղեցին միակն էր, որտեղ թույլատրված էր կինո գնալ: Մեթոդական եկեղեցում նման բանի մասին նույնիսկ չէին էլ մտածի: Այդ բոլոր հարանվանություններն ասում էին «Ո՛չ: Դա սատանայի գործերն են»: Ինձ հետաքրքիր է, ինչ կատարվեց: Այո՛, պարո՛ն:

119 Եվ գիտեք, դուք կարող էիք վերցնել այդ երիտասարդ կաթոլիկ աղջիկներին, նրանք դուրս են գալիս այդ փոքրիկ...(Հիմա, իմ նման տարեցներից մի քանիսը)... դուրս են գալիս և նկատեք այս փոքրիկ բաները, որ ունեն մինչև ծնկները: Այդ տղան այսօր, ենթադրում եմ, դժոխքում է: Ես չգիտեմ: Ես նրա դատավորը չեմ: Բայց երբ նա առաջին անգամ երգեց այդ կեղտոտ երգը, որը թափանցեց ռադիո առանց գրաքննության, որ. «Շրջեք դրանք, աղջիկներ, շրջեք, ամբողջությամբ շրջեք դրանք և ցույց տվեք ձեր գեղեցիկ ծնկները»: Քանի՞սն են հիշում, երբ այն առաջին անգամ հեռարձակվեց: Հենց այդտեղ էր առաջին սխալը: Դա ճիշտ է: Եվ երբ նրանք ձեռք բերեցին այդ տղային Թեկսասից, և վերցրեցին այդ կանանց այնտեղից, և օգտագործեցին նրանց ներքնազգեստները,

իբրև նրանք իրանցից ինչ-որ բան են ներկայացնում, ինչն այդպես չէր, և նման բաներ, և թույլ տվեցին, որ դրանք մնան անպատիժ: Եվ ի՞նչ արեց դա հիմա: Այն շարունակեց ներս սողոսկել: Դա ոգի է:

120 Վեջերս խոսում էի մի մարդու հետ, որն ինձ ասաց. «Ես չգիտեմ, թե ինչ եմ անելու: Ես ունեի որդի՝ լավ և ազնիվ, իսկ հիմա նա այնպիսին է դարձել, որ ինչ ընկավ ձեռքը, վերցնում է»:

Ես ասացի. «Ինչո՞ւ»:

«Նա կապվել է գողերի հետ»:

121 Գողի հետ շփվես, գող կդառնաս: Կենթուկիի իմ ծեր տատիկը սովորություն ուներ ասելու. «Ոջիլոտ շան հետ պառկես, ինքդ էլ կոջլոտվես»: Վերցրեք, վերցրեք մի կնոջ, որ ոչ մի լավ բան չունի և թող...մի աղջիկ, և նստեցրեք լավ, ազնիվ տղայի կողքին, և առաջին բանը, որ իմանում ես այն է, որ նա գրեթե կենդանի է դարձել: Դարձել է ընդհակառակը: Ասա ընկերդ ով է, ասեմ, ով ես դու: Զատվե՛ք: «Դուրս եկեք դրանց միջից,— ասում է Աստվածաշունչը,— զատվեք»: Դա ճիշտ է:

122 Եթե նրանց հարանվանությունները վերադառնում են նման ապականության՝ ինչպես իրենց ժողովուրդին թույլ տալ...Վերջերս այստեղ մի մեծ, հրաշալի մկրտական եկեղեցում ստիպված եղան ժողովն արձակել: Այդ մարդը կարող էր քարոզել ընդամենը քսան րոպե, որովհետև հովիվը պետք է ծխեր: Ամբողջ եկեղեցին դուրս էր գալիս: Բոլորը կանգնած էին այնտեղ՝ ծխելու կապանքներով, և նորից վերադարձան, հովիվը և մնացածները: Ես գնացի Միաբանության եկեղեցի, մեծ, երկար հագուստով մի տղամարդ էր կանգնած, ասում էր, ամբիոնի վրա *այսպես* հենված պատմում էր ինչ-որ մի ծաղիկի մասին, որը նա գտել էր բլուրի վրա: Դա համարյա ամբողջն էր, ինչ կար, և միանգամից դուրս եկավ: Նրա մատները ծխախոտի ծխից դեղնել էին: Այո: Եվ խոսեց այն մասին, այն կանանց, որոնց հետ այդ մարդը պետք է խաղար...Ի՞նչ է այն գերմանական խաղը, որ նրանք խաղում են, դու, դու այսքան քարտ ես բաժանում, գիտե՞ք: Ուներ...Ո՛հ, կարծում եմ, հիշեցի դա: Պինոկլի, նրանք պատրաստվում էին պինոկլի խաղալ: Կարծում եմ, դա ճիշտ է: Այո, այն, որ բաժանում եք: Դա սովորական խաղաքարտեր են: Հիմքը՝ պինոկլի խաղ է: Ո՛վ, Աստված իմ: Ահա, թե որտեղ է դրա հիմքը: Զարմանալի չէ: Եվ ի՞նչ: Իսկ հետո բղավում են կաթոլիկ եկեղեցու մասին այնտեղ՝

պտուտակների վայրերում և վիճակախաղ խաղում: Դուք՝ բողոքականներդ, նույնքան գարշելի եք, ինչպես որ նրանք են, դրա համար ի՞նչ կարող եք ասել դրա վերաբերյալ: Կաթսան չի կարող թեյամանին «կեղտոտ» անվանել: Անշուշտ՝ ոչ: Դուք դա անում եք, հետո ասում եք. «Ես երիցական եմ: Ես մեթոդական եմ»: Դուք ոչինչ ենք, քանի դեռ վերստին ծնված չեք: Դա ճիշտ է: Եվ երբ դուք անում եք դա, գիտեք, ինչ-որ բան ձեր ներսում ասում է ձեզ, որ այդ բաները սխալ են, և դուք դուրս կգաք դրանից նույնքան վստահ, ինչպես բադը ջրից: Դուք գիտեք, որ դա Ճշմարտություն է: Անկասկած: Այո՛, պարո՛ն: Դրանք գնում են իրար ձեռք բռնած: Ինչո՞ւ:

...ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՄԱՅՐՆ Է...

123 Օրերից մի օր ծեր մայրիկը կասի. «Գիտե՞ս ինչ: Ի վերջո, սիրելի՛ս, մենք երկուսս էլ մեկ ենք»: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ է դա: Եկեղեցիների Կոնֆեդերացիան պատրաստվում է միավորել բոլորին, ինչպես որ հիմա է: Եվ գիտե՞ք, թե ինչ է լինելու այսպիսի փոքրիկ խմբերի հետ: Դուք վճարելու եք դրա համար, տղաներ: Դա միանգամայն ճիշտ է:

124 Բայց մի՛ անհանգստացեք, Գառնուկը կհաղթի նրան, որովհետև Նա տերերի Տեր է և թագավորների Թագավոր, և Աստված առաջնորդելու է Իր Եկեղեցին, հարանվանության փոխարեն: Նա թափելու է Սուրբ Հոգու ոսկե Յուղն այդ Եկեղեցու վրա: Եղբա՛յր, երկնքից կրակ է թափվելու, և նշաններ ու հրաշքներ են լինելու, ինչպիսին նախկինում երբեք չեք տեսել: Այո՛, պարո՛ն: «Մի՛ վախեցիր, փոքր հոտ, որովհետև քո Հայրը հաճեց արքայությունը ձեզ տալ»: Այո՛, պարո՛ն: «Ով որ մինչև վերջ համբերի»: Ահա այսպես: Շարժվեք ուղիղ ճանապարհով: Պահե՛ք ձեր հայացքը դեպի Գողգոթա: Այս Աստվածաշունչը ճիշտ է: Մի՛ անհանգստացեք:

125 Այժմ տեսե՛ք: Կան որոշ սովորություններ, որոնք նրանք ունեն: Ահա մի քանի բարքեր որոնք նրանք ունեն: Մենք կարող էինք շարունակել, շարունակել: Առաջին բանը, որ իմանում եք, այն է, որ դա թափանցել է բողոքական եկեղեցիների մեջ: Հետո կաթոլիկ կանայք սկսեցին...Դե, ոչ մի վատ բան չկար կարճատաբատ հագնելու մեջ, քանի դեռ նրանք եկեղեցի էին հաճախում և իրենց գլխին գլխաշոր էին կապում: Ինչ-որ ավանդույթի նման. «Ուրբաթ օրը միս չուտես»: Եվ, ոհ, որտե՞ղից եք գտել եկեղեցի մտնելու համար գլխին գլխաշոր կապելը:

Ես ուզում եմ, որ ինձ սուրբգրային համար ցույց տաք: Դա սուտ մարգարեություն է: Որտե՞ղ է գրված, որ եկեղեցում պետք է գլխարկ կրել: Երբ դուք գլխարկ եք հագնում, անարգում եք Քրիստոսին, ճիշտ է. տղամարդիկ, ես նրանց մասին եմ խոսում: Կանայք, դուք ծածկոց ունեք, բայց ես մարտահրավեր եմ նետում ցանկացածին, որ ցույց տա ինձ, թե որտեղ է գրված, որ դա գլխարկ է կամ գլխաշոր: Դա ձեր մազերն է: Իսկ դուք խուզել եք այն: Ի՞նչ կասեք դրա մասին: Ո՛հ, նրանք ասում են. «Դա հնաոճ է»: Եթե նույնիսկ այդպես է, դա Աստվածաշունչն է: Եվ Աստծո Խոսքը ճիշտ է:

126 Վերջերս այստեղ խոսում էի այն կնոջ մասին, ով լվաց Հիսուսի ոտքերը, և վերցրեց իր մազերը, գիտեք, և, և դրանով սրբեց դրանք: Ես ասացի. «Միակ ձևը, որով կինը կարող էր դա անել, դա կանգնել գլխին, որ այնտեղ՝ ներքևում, բավական մազ ունենար ոտքերը լվանալուց հետո սրբելու համար»: Դա ճիշտ է: Ո՛հ, դա այսպես է, ամոթ է տեսնել, թե ինչպես են...Ահա սառը եղանակ է, քայլում են մի փոքրիկ թմբլիկ վերարկուով և նրանց մերկ մարմինը երևում է:

127 Հիմա կասեք. «Ինչո՞ւ եք կանանց բզկտում»: Դուք կարիք ունեք բզկտվելու:

128 Իսկ դուք տղամարդիկ, որ թույլ եք տալիս ձեր կանանց այդպես վարվել, եղբա՛յր, ես, ես չգիտեմ, թե ինչ մտածեմ ձեր մասին: Հիմա, դա ճիշտ է:

129 Դուք էլ հովիվներ, չեմ կարծում, որ այստեղ եք: Բայց եթե տեսնեք այդ տղային, ասեք, որ գա տեսնի ինձ: Հասկանո՞ւմ եք: Եթե նա այլևս հարգանք չունի Քրիստոսի հանդեպ, որ թույլ է տալիս իր ժողովրդին ապրել առանց դրա...Հիմա նա...Նրանք կարող են դա անել իր մեջքի հետևում, բայց եթե նա չի ասում նրանց այդ մասին, ուրեմն արժանի ծառա չէ Հիսուս Քրիստոսի համար: Դա միանգամայն ճիշտ է: Նա արժանի չէ Քրիստոսի ծառան լինելու: Քրիստոսի ծառան պետք է անվախ լինի, եթե հարցը վերաբերում է Սուրբ Գրքին: Անկասկած: Բայց ահա նրանք, նրանք դուրս են գալիս և, միևնույն է, անում են դա:

130 Այնուհետև առաջին բանը, որ իմանում եք, այն է, որ բողոքականները դա վերցրեցին: Դուք՝ բարի մեթոդականներ, մկրտականներ, երիցականներ կամ նազովրեցիներ, սրբության ուխտավորներ և մնացածդ, նույն բանն է, նույն բանը ստացաք՝ մեկից վեցը, մյուսից՝

կես դյուժին: Ահա խնդրեմ. «Պոռնիկների մայր»: Ձեր հարանվանությունը. «Քանի որ նրանք սկսել են գլխամասից, ի՞նչ տարբերություն»: Հասկանո՞ւմ եք: Մեծ տարբերություն: *Այդ* Գլխամասը երբեք չի սկսվել: Կարող է սկսվել ձեր գլխամասից՝ ներքևում, բայց ոչ այն Մեկից՝ Վերևում: Կախված է նրանից, թե որտեղից եք: Դա ճիշտ է:

131 Հիմա, չեմ կարծում, որ մենք ժամանակ կունենանք մյուսին անդրադառնալու, գուցե ավելի լավ կլինի թողնեմ սա առավոտվա համար: Շատ լավ, եկե՛ք այս փոքրիկ կարճը վերցնենք: Մենք այստեղ ունենք «ջրով մկրտությունը»: Նաև ունենք «նախասահմանություն», և, ոհ, մի շարք բաներ: Եկե՛ք վերցնենք սա, այս փոքրը, կարճը «կին քարոզիչների» մասին և անցնենք դրան:

132 Այժմ, հիմա, կին քարոզիչ, ես չեմ ցանկանում վիրավորել ձեր զգացմունքները, բայց ես ուզում եմ ձեզ մի բան ասել: Ձեզ համար չկա ոչ մի տեղ Գրքերում, ոչ էլ Աստվածաշնչում: Այո, ես գիտեմ, թե ուր եք տանելու, և ես վաղուց ունեմ ձեր ամենը, այո: «Եվ ձեր տղաներն ու ձեր աղջիկնեևը պիտի մարգարեանան»: Հիմա, եթե ձեր հովիվը չգիտի, թե «մարգարեություն» բառն ինչ է նշանակում, ուրեմն նա, նա ոչինչ չգիտի: Նա ամբիոնի հետևում գործ չունի, փորձելով ձեզ ասել, որ քարոզիչ դառնաք: Հասկանո՞ւմ եք: Որովհետև դա Ծննդոցից մինչ Հայտնություն բացարձակապես դատապարտվում է: Թույլ տվեք ձեզ ցույց տալ հետևյալը:

133 Հիմա ուզում եմ, որ ինձ հետ բացեք առաջին Տիմոթեոս 2.11: Պարզապես բացեք սա և մենք կտեսնենք սա և կգտնենք նաև այստեղ, Գործք 2: Այո: Եվ պարզապես, պարզապես լսեք, թե Սուրբ Գիրքն ինչ ունի այստեղ ասելու այս թեմայի վերաբերյալ:

134 Հիմա, ինչ–որ մեկը շարունակում է ասել. «Բրանհա՛մ եղբայր, դուք պարզապես կնատյաց եք»: Ես կնատյաց չեմ: Ես…Ինձ պարզապես դուր չի գալիս տեսնել, թե ինչպես են կանայք փորձում զբաղեցնել այն տեղը, որն իրենց չի պատկանում:

Հիշո՞ւմ եք Օհայո գետի առաջատար նավաշինարարություններից մեկում Հովարդ Շիպյարդում: Կին ղեկավար նշանակեցին: Տեսեք, թե ինչ կատարվեց:

Նրանք կանանց քվերակելու իրավունք տվեցին: Տեսեք, թե ինչ կատարվեց:

135 Թույլ տվեք հենց հիմա ասել ձեզ: Միայն կանաց կաշին չեմ թերքում: Ես ուզում եմ, որ տղամարդիկ հասկանան, որ նրանք նույնպես դրա մեջ: Բայց թույլ տվեք ձեզ մի բան ասել, եղբայր: Այս ազգը կնոջ ազգ է: Ես դա Սուրբ Գրքով կապացուցեմ, ինչով ուզում եք կապացուցեմ: Մա...Ի՞նչ է պատկերված մեր փողի վրա: Կին: Որտե՞ղ է նա հայտանբերվում: Հայտնության գրքում, այստեղ եք դուք տեսնում նրան: Նրա թիվը տասներեքն է, նաև այն, ամենը, ինչ նա սկսել է. տասներեք աստղեր, տասներեք գծեր, տասներեք գաղութներ: Տասներեք, հենց սկզբից էլ ամեն ինչ եղել է տասներեք: Այն հայտնվում է Հայտնության 13-րդ գլխում: Կին, տասներեք:

136 1933 թվականին, երբ Տերը...Երբ մենք այստեղ հավաքույթներ էինք անցկացնում, որտեղ հիմա Քրիստոսի եկեղեցին է կանգնած, հին մասոնական տունը, Տիրոջ տեսիլքը եկավ ինձ այստեղ և կանխասեց, որ «Գերմանիան կբարձրանա և կկառուցի Մաժինոյի գիծն այնտեղ»: Ձեզանից շատերը հիշում են դա: Եվ ինչպես նրանք կամրապնդվեն այնտեղ և ամերիկացիները մեծ պարտություն կկրեն հենց այդ գծում: Նաև ասաց, թե ինչ է տեղի ունենալու, ինչպես նաև Ռուզվելտի և մյուս բաների մասին, թե ինչպես է նա կառավարելու և ընտրվելու չորրորդ ժամկետ: Կատարելապես, ճշգրտորեն հենց այդպես, ինչպես որ կատարվեց: Ասաց նաև, որ ավտոմեքենաները գնալով ձվի կնմանվեն, մինչև վերջին օրերը նրանք պարզապես ձվաձև կլինեն: Եվ ես ասացի. «Կլինի այնպես, որ այդ մեքենաները ղեկով չեն ընթանալու: Նրանք ուրիշ բանով են ընթանալու»: Ահա այն մեքենաները, որոնք նրանք հիմա ներկայացնում են, հեռակարավարման վահանակով, անվտանգության համար: Ճիշտ է: Դուք չեք կարողանա քաղաք մտնել...Հետո քսան մղոնանոց գոտի, դուք կկարողանաք վարել ընդամենը քսան մղոն ժամում արագությամբ: Ուրիշ մեքենայի չեք կարողանա հարվածել, որովհետև հեռակարավարման միջոցով է: Տեսեք, դա այդպես է ընթանում, և հենց հիմա: Եվ ես ասացի. «Հիշե՛ք, այդ օրը՝ վերջին ժամանակները գալուց առաջ, վերջին ժամանակները գալուց առաջ, որ մի կին... Հիմա, բոլորդ գրել եք դա: Ամերիկայում մեծ հզոր մի կին է բարձրանալու, կամ նախագահ, կամ բոնապետ, կամ

էլ ինչ որ մեծ հզոր կին է լինելու: Եվ նա կխորտակվի կանանց ազդեցության տակ: Հիմա, հիշե՛ք, դա ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐՆ Է»: Հասկանո՞ւմ եք:

137 Եվ նա սխալ է: Իսկ ինչի՞ն է դա տեղի տվել: Թույլ տվեք ձեզ ասել: Եղե՛ք հոգևոր: Թող...Բաց եղեք: Նայե՛ք: Ինչո՞ւ է դա արվում: Որպեսզի կաթոլիկ եկեղեցուն տեղ տրվի մտնելու: Հասկանո՞ւմ եք: Դուք երկրպագում եք այս կինոաստղերին և մնացած բաներն այստեղ: Հիշո՞ւմ եք այն քարոզը, որ քարոզեցի: Մարջի՛, հիշո՞ւմ ես դա, տարիներ առաջ Միացյալ Նահանգներ ներխուժելու մասին՝ ամերիկյան իշխանությունը տապալելու համար: Եվ թե ինչպես ասացի, որ նա վեր ելավ Փարիզում այն բանից հետո, որ մենք փրկեցինք նրանց այդ կանանցից, գինուց և աղմկալից կյանքից: Եվ նա լուսավորվեց հենց Հոլիվուդում: Հիմա, փոխանակ մոդելներ բերելու համար մենք Փարիզ ուղարկենք, նրանք են ուղարկում այստեղ մոդելներ տանելու համար: Ի՞նչ արեց դա: Այն...Մենք խորհուրդ չենք տալիս, որ թույլ տաք, որ ձեր երեխաները կինո գնան, բայց այն սողոսկեց հեռուստատեսություն, անմիջապես դուրս եկավ և աղտոտեց ամեն ինչ, ամեն տեղ ցուցադրվելով: Եվ ահա մենք այսօր, բոլոր փոքրիկ տղաներն ու աղջիկները, բոլորը նման են այդ հեռուստատեսային դերասաններին: Ի՞նչ է դա: Դա ճանապարհ է բացում: Տղա՛, վատ համբավ ունեցող մեկ կին ավելի շատ մարդ կարող է դժոխք ուղարկել, քան բոլոր գինետները, որ տեղադրվել են քաղաքում: Դա ճիշտ է: Տեսե՛ք, թե ինչպես է նա քայլում փողոցով գրեթե ամբողջությամբ մերկացած, կապ չունի, թե ինչ տղամարդ է, եթե նորմալ առողջ տղամարդ է, երբ նա նայում է այդ կնոջը, ուզի թե չուզի ինչ-որ բան անցնում է նրա վրայով: Հիմա պարզապես եղե՛ք անկեղծ: Ինձ համար մեկ է...

138 Ես Սուրբ Հոգի ունեմ տարիներ շարունակ: Դու չես կարող նայել կնոջը և նրա կիսահագնված...Ես, ես իմ մեքենայի մեջ փոքրիկ մի խաչ ունեմ, ձեզանից շատերը տեսել են այն: Մեկն ինձ ասաց. «Դուք կաթոլիկ եք»: Որտե՞ղ են կաթոլիկները բացարձակ իրավունք ստացել խաչի վրա: Խաչը նշանակում է «քրիստոնյա»:

139 Իրենց սուրբ Սեսիլիան և նման բաները դա կաթոլկության նշան է: Մենք նման բաներին չենք հավատում: Մենք հավատում ենք Քրիստոսին: Նրանք ունեն բոլոր տեսակի մեռած մարդիկ, որոնց երկրպագում են: Դա ոգեհարցության ամենաբարձր ձևն է: Այդ ամենը

սպիրիտիզմ է, մեռածների երկրպագությունը: Ոչ մի նման բան, ոչ:

140 Ես հարցրեցի այդ քահանային: Ասացի. «Այդ դեպքում ինչո՞ւ, եթե...Պետրոսն է եղե՞լ առաջին պապը»:

Նա ասաց. «Դա ճիշտ է»:

141 Ես ասացի. «Այդ դեպքում ինչո՞ւ Պետրոսն ասաց. «Չկա այլ միջնորդ Աստծո և մարդու միջև Քրիստոս Հիսուս Մարդուց բացի»: Իսկ դուք հինգ հազար մեռած կանայք ունեք և ուրիշ նման բաներ, որոնց միջնորդ եք դարձրել: Հիմա ի՞նչ պատահեց: Ահա խնդրեմ: Նրանք այդ հարցին չունեն պատասխան: Դա ճիշտ է:

142 Ահա, իրենց վարդապետություններից մի քանիսը, իրենց սուտ վարդապետությունից սուտ բողոքական մարգարեների մի խումբ եկել և սովորեցնում է դա, իսկ դուք՝ բողոքականերդ, կուլ եք տալիս: Դա միանգամայն ճիշտ է: Հարանվանություններ, մկրտության ձևեր, տարբեր կարգեր և նման բաներ, որ դուք անում եք, ինչը բացարձակապես սուրբգրային չէ: Դա հակառակ է այն բանին, ինչ Սուրբ Գրքում գրված է, մինչդեռ դուք կառչում եք դրան: Դա ճշմարտություն է:

143 Հիմա լսե՛ք սա կին քարոզիչների մասին: Շատ լավ: Առաջին Տիմոթեոս, ուզում եմ առաջին Տիմոթեոսի 2.11: Հիմա լսե՛ք, թե ինչ է ասվում այստեղ:

> Ձեր կանայք *թող սովորեն հանդարտությամբ, ամենայն հնազանդությամբ:*
>
> *Կնոջը չեմ արտոնում, որ սովորեցնի, կամ էլ ամուսնու վրա իշխի, այլ լուռ մնա:*

144 Ես պատասխանատու չեմ այնտեղ գրվածի համար: Ես պատասխանատու եմ ձեզ ասելու, որ սա գրված է այնտեղ: Հասկանո՞ւմ եք: Հասկանո՞ւմ եք:

> Ձեր կանայք *թող սովորեն հանդարտությամբ,* և հնազանդության մեջ լինեն (Եթե երբևիցէ մտնեյիք Օրթոդոքս եկեղեցի և տեսեյիք նրանց: Հակսնո՞ւմ եք):
>
> *Բայց կնոջը չեմ արտոնում, որ սովորեցնի*, կամ էլ *իշխի* (հովիվ, սարկավագ կամ նման մեկը դառնա) *ամուսնու վրա,* տեսնում եք, *իշխի ամուսնու վրա, այլ լուռ մնա:*
>
> *Որովհետև առաջ Ադամն ստեղծվեց, և հետո՝ Եվան:*

145 Գիտեի՞ք: Հիմա լսե՛ք, կանա՛յք: Դուք բարի, արդար քրիստոնյա կանայք լավագույն բան եք, որ Աստված կարող էր տալ տղամարդուն, այլապես ուրիշ բան կտար նրան: Այո՛, պարո՛ն: Հասկանո՞ւմ եք: Կինը նույնիսկ սկզբնական արարչագործության մեջ չի էլ եղել: Կինն Աստծո ստեղծաց արտադրանքը չէ: Նա տղամադու կողմնակի արտադրանք է: Աստված ստեղծեց մարդուն՝ և՛ արական, և՛ իգական: Եվ Նա բաժանեց նրանց: Եվ այն բանից հետո, երբ մարդն արդեն ապրում էր երկրի վրա և անուն էր տվել կենդանիներին, երկար ժամանակ այնտեղ ապրելուց հետո, Նա Ադամից մի կող վերցրեց, որպես կողմնակի արտադրանք, և դրանից կին ստեղծեց: «Առաջ Ադամն ստեղծվեց, և հետո՝ Եվան»: Հիմա նայե՛ք:

Եվ Ադամը չխաբվեց, բայց կինը խաբվեցավ՝ մեղք գործեց:

146 Աստված վերցրեց տղամարդուն: Սատանան վերցրեց կնոջը: Նայե՛ք դրան, ուղիղ դրա դեմքին, տեսեք, թե ինչ է այն անում այսօր: Նայե՛ք Աստծո իսկական Եկեղեցուն, կասի. «Հիսո՛ւս»: Հակաքրիստոսը կասի. «Մարիա՛մ»: Նայե՛ք դրանց հոգիներին: Հասկանո՞ւմ եք: Ահա խնդրեմ: «Ողջո՛ւյն Մարիամ, ով աստվածամայր, օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, աղոթիր հիմա մեզ՝ մեղավորներիս համար, և մեր մահվան օրը: Ամեն: Մարիա՛մ, աղոթի՛ր»: Ո՛հ, Աստված իմ: Տեսնում եք, ահա «կին» սատանայի առարկա: Քրիստոսն է երկրպագության Անձը, և Միակն է: Ահա խնդրեմ: Ահա խնդրեմ:

147 «Առաջ Ադամն ստեղծվեց, և հետո՝ Եվան»: Ադամը չխաբվեց: Եվ ինչպե՞ս կարող եք կին հովիվ, սարկավագ ունենալ: Ադամը չխաբվեց, բայց կինը խաբվեց: Իրականում նա...Նա չէր կարծում, որ ինքը սխալ էր, բայց սխալ էր: «Կինը խաբվելով՝ մեղք գործեց»: Որովհետև նրա, ամեն անգամ, երբ փողոցով թաղման թափոր է անցնում, կնոջ պատճառով է: Ամեն անգամ, երբ երեխան ճչում է, կնոջ պատճառով է: Ամեն անգամ, երբ ինչ–որ մեկը մահանում է, կնոջ պատճառով է: Ամեն սպիտակած մազ կնոջ պատճառով է: Ամեն բան, մահն էլ կնոջ պատճառով է: Այն ամենը, ինչ սխալ է, կնոջ պատճառով է: Եվ այսքանից հետո դնել նրան եկեղեցու առաջնորդ, հովիվ, ո՛հ, երբեմն էլ եպիսկոպոս: Ամոթ նրան:

148 Թույլ տվեք հիմա մի պահ հրավիրել ձեր ուշադրությունը մեկ այլ բանի վրա: Հասկանո՞ւմ եք: Եկե՛ք անդրադառնանք Կորնթացիների առաջին թղթի

14.32–ին և տեսնենք, թե Պողոսն ինչ է ասում այստեղ, և մենք անմիջապես կանցնենք և՛ս մեկին, ընդամենը մեկ րոպեից: Եվ հետո, մենք չենք ուզում ձեզ շատ երկար պահել, որ առավոտյան այնքան հոգնած լինեք, որ չկարողանաք գալ: Շատ լավ: Կարդում եմ: Քանի՞սն են հավատում, որ Պողոսը ներշնչված վարդապետ էր: Հիմա, հիշե՛ք, Պողոսը սա նաև գրել է Տիմոթեոսին: Հասկանո՞ւմ եք: Դա, հիմա, առաջին Կորնթացիս 14.32: Սկսենք հենց այստեղից, կարծում եմ, սկսենք կարդալ այստեղից 14.34–ից:

Ձեր կանայք եկեղեցիներում թող լուռ մնան…

149 Լսեցի՞ք, թե ինչ ասաց նա:

Ձեր կանայք եկեղեցիներում թող լուռ մնան, որովհետև նրանց խոսելու հրաման չկա, այլ որ հնազանդ լինեն…

150 Դուք ունե՞ք տողատակեր: Եթե ունեք, կարդացեք և տեսեք, թե արդյոք այն չի ներառում Ծննդոց 3.16: Երբ Աստված ասաց Եվային, որովհետև նա լսեց օձին՝ իր ամուսնուն լսելու փոխարեն, որ նա իշխելու է իր վրա իր կյանքի բոլոր օրերում: Այդ դեպքում ինչպե՞ս կինը կարող է գալ և իշխել տղամարդու վրա, հովիվ կամ սարկավագ լինել, երբ Աստվածաշունչը նրան ասում է թող «հնազանդ» լինի, ճիշտ այնպես, ինչպես սկզբում էր: Երբ Նա…Աստված, Աստված չի կարող փոխվել: Դուք չեք կարող այնպես անել, որ Խոսքն *այստեղ* մի բան ասի, իսկ *ուրիշ տեղ*՝ մեկ այլ բան: Այն այդպես չի անում: Այն միշտ նույն է:

151 Այսպիսով, սկզբում, ահա թե որտեղ, նախքան սա ավարտելը, եթե հնարավորություն ունենամ, ուզում եմ կարգի բերել *ամուսնության և ամուսնալուծության* այդ հարցը ձեզ համար: Այս եկեղեցում ես դա դեռ չեմ արել: Բայց նայե՛ք այս երկակի ուխտին: Մեկն ասում է, որ կինը կարող է ամուսնանալ, մյուսն ասում է՝ չի կարող, այս մեկն *այս, այդ* կամ *այն է* ասում: Մի րոպե սպասեք և տեսնեք, թե Աստվածաշունչն ինչ է ասում, երբ հասնենք դրան: Հասկանո՞ւմ եք: Շատ լավ: Հիմա նայե՛ք այստեղ:

Ձեր կանայք եկեղեցիներում թող լուռ մնան… նրանց խոսելու հրաման չկա, այլ որ հնազանդ լինեն, ինչպես որ օրենքն էլ ասում է:

152 Այդ ժամանակ Հին Կտակարանում նրանց թույլատրված չէր խոսել, որովհետև Պողոսն այստեղ

ասում է, որ նրանց արգելված էր: Ճի՞շտ է այդ: «Ձեր կանայք թող լուռ մնան: Սա հնազանդություն է»: Հիմա եթե դուք դիմեք տողատակին, այն ձեզ կտանի հետ Ծննդոց 3.16: Հասկանո՞ւմ եք: Շատ լավ: «Իշխանության ներքո, ինչպես որ օրենքն էլ ասում է:»

> *Եվ եթե մի բան* ուզում են *սովորել, թող տանը հարցնեն, հարցնեն իրենց ամուսիններին, որովհետև եկեղեցում կնոջը վայել չէ խոսել:*
>
> *Մի՞թե...*

153 Հիմա նայեք ձեր Աստվածաշնչերում հարցական նշանին. «Մի՞թե»-ի վրա: Ի՞նչը ստիպեց Պողոսին ասել դա և այդպես վարվել: Հիմա, եթե երբևիցէ կարդայիք այն նամակները, որոնք կորնթացիները գրել են Պողոսին: Հիմա, ցանկացած լավ գրադարանում դուք կարող եք ձեռք բերել դրանք, հասկանում եք, որոնք կորնթացիները գրել են Պողոսին: Նրանք գրել և պատմել էին նրան, այն բանից հետո, երբ այս կանայք, ովքեր դավանափոխ էին եղել...Նրանք այնտեղ Դիանա անունով մի, մի աստվածուհի ունեին: Եվ այն Եփեսոսում էլ կար: Եվ կորնթացիներն էլ էին նույն աստվծուհուն պաշտում, որովհետև դա հեթանոսական պաշտամունք էր: Եվ մի օր նրանք դաշտում մի քար են գտնում, որը կնոջ ուրվագծի տեսք ուներ: Նրանք ասում են. «Աստված կին է, և նա իր պատկերը իջեցրել է մեզ մոտ»: Պատմիչներն ասում են, որ նրանց տաճարը գերազանցում էր Սողոմոնի տաճարը: Ո՛հ, այն ամբողջությամբ մարմարից էր, ոսկով պատած, մինչդեռ Սողոմոնի տաճարը մայրի ծառից էր կառուցված, ոսկով պատած: Հասկանո՞ւմ եք: Եվ դա շատ ավելին էր: Ուրեմն, ուրեմն, եթե Աստված կին էր, անշուշտ, նա կարող էր կին քահանաներ ունենալ: Անշուշտ, եթե Աստված կին է, ուրեմն կին քարոզիչը ճիշտ է: Բայց Աստված տղամարդ է: Աստվածաշունչն է ասում, որ Նա Տղամարդ է, և Նա Տղամարդ է: Հասկանո՞ւմ եք: Եվ եթե Աստված Տղամարդ էր, ապա դա էլ պետք է տղամարդ լինի:

Հիմա ուշադրություն դարձրեք այստեղ. «Մի՞թե»:

154 Հիմա, այդ կին քահանաներից ոմանք, երբ հեթանոսությունից քրիստոնեության փոխվեցին, նրանք կարծում էին, թե կարող են պահել իրենց դիրքը որպես քարոզիչ, պարզապես անցնել այս մյուս կողմը: Եթե այնտեղ քարոզում էին Դիանայի մասին, այստեղ գալիս և քարոզում են Քրիստոսի մասին:

155 Նա ասում է. «Մի՞թե Աստծո Խոսքը դուրս եկավ...»: Պարզապես լսե՛ք սա: Եղբա՛յր, ինչպե՞ս կարող են ծառայողներն անել դա: 36-րդ համարը:

Մի՞թե Աստծո Խոսքը ձեզնից դուրս եկավ կամ կամ միայն ձե՞զ հասավ:

Եթե մեկը կարծի, թե նա մարգարե է կամ հոգևոր (պարտադիր չէ, որ մարգարե լինի, պարզապես հոգևոր մտածողություն ունեցող մարդ), *թող գիտենա ինչ որ գրեցի ձեզ, որ Տիրոջ պատվիրաններն են:* (Դուք հավատո՞ւմ եք դրան):

Բայց եթե նա, *եթե մեկը տգետ է, թող տգետ մնա:*

156 Հիմա, դա այնքան պարզ է, որքան ինքս ինձ պատկերացնում եմ, որ կարող եմ ասել: Հասկանո՞ւմ եք: Նա ասում է. «Եթե մեկը հոգևոր է կամ մարգարե, կիմանա, որ ինչ որ այստեղ գրեցի, Տիրոջ պատվիրաններն են»: Բայց ասում է. «Եթե նա ուզում է տգետ մնալ, թող տգետ մնա»: Հասկանո՞ւմ եք: Դա միակ բանն է, որ դուք կարող եք անել: Եթե նրանք ցանկանում են գնալ դրան, դուք պարզապես պետք է բաց թողնեք նրանց, որովհետև նա տեսել էր, որ դա սկսվել է այնտեղ:

157 Մի կին ինձ ասաց. «Ո՛հ, Պողոսը պարզապես ծեր կնատյաց էր»:

158 Նա կնատյաց չէր: Դուք գիտեք, որ Պողոսն առաքյալ էր հեթանոսական եկեղեցու համար: Նայե՛ք այստեղ: Դուք գիտեի՞ք, որ Պողոսը...Քանի՞սն են հավատում, որ դա այն է, ինչ Պողոսն է քարոզել: Արդյոք դա այն է, ինչ նա, նա ասե՞լ է այստեղ: Եվ Պողոսն ասում է...

159 Դուք կասեք. «Մի րոպե սպասեք, Բրանհամ եղբայր: Մեկ րոպե: Հիմա, մեր եպիսկոպոսն ասում է, որ ամեն բան կարգին է: Գլխավոր դիտորդը, Համագումարներն ասում են, որ ամեն բան կարգին է: Միադավանների եպիսկոպոսն ասում է, որ ամեն բան կարգին է»:

160 Ինձ համար կարևոր չէ, թե նրանք ինչ են ասում. Դա կեղծ է: Եվ ես ձեզ ասել էի, որ մենք պետք է կառչենք դրանից: Սուտ մարգարեներն այդպես կասեն: Որովհետև Աստվածաշունչն ասում. «Եթե մեկը կարծի, թե նա հոգևոր է կամ մարգարե, թող գիտենա ինչ որ ասացի, որ Տիրոջ պատվիրաններն են»: Եվ եթե նրա հոգին վկայություն չի տալիս այդ Խոսքի հետ, նա հենց սկզբից էլ սուտ մարագե է: Ես ավելի լավ է կնատյաց լինեմ, քան կնասեր, որ գնամ նման բաների, համակերպվեմ

այնպիսի բաների հետ, ինչպիսիք Աստծո Եկեղեցում են՝ Աստծո կանոններին հակառակ: Եվ Պողոսն ասում է... Վերցրե՛ք Գաղաթացիս 1.8: Պողոսն ասում է. «Եթե մի Հրեշտակ եկրնքից իջնի ու քարոզի մեկ ուրիշ ավետարան, որը տարբեր է իմ Ավետարանից, թող նզովյալ լինի»: Ի՞նչ եք հիմա անելու դրա հետ:

161 Հիմա դուք կասեք. «Իսկ ի՞նչ կասեք այն համարի մասին, որտեղ Հովելի մարգարեության մեջ ասվում է. «Ձեր տղաներն ու աղջիկները կմարգարեանան», և, և որը Պենտեկոստեի օրը Պետրոսը մեջբերեց»: Դա միանգամայն ճիշտ է:

162 Գիտեի՞ք, որ Հին Կտակարանում, որ միակ ձևը, որ միակ ձևը հիմա, որով որևէ մեկը կարող էր ուխտի մեջ մտնել...Աբրահամն էր այն մեկը, ում տրվեց խոստումը, և խոստմունքի կնիքը թլփատության միջոցով էր: Քանի՞սը դա գիտեն: Դա Աստված էր հաստատող:

163 Ինչպես մկրտական մի եղբայրը, որն ասաց. «Բրանհամ եղբայր, մենք՝ մկտրականներս ստացել ենք Սուրբ Հոգին»:

Ես ասացի. «Ե՞րբ եք ստացել»:

Ասաց. «Այն ժամ, երբ հավատացինք»:

164 Ես ասացի. «Պողոսն ասաց. «Արդյոք Սուրբ Հոգին ստացա՞ք, երբ հավատացիք»: Տեսնո՞ւմ եք: Ես ասացի. «Հիմա, դուք՝ մկրտականներդ, եկաք ինչ–որ մաս վերցրեցիք Դրանից, և մենք ձեզ հետ կխոսենք հավիտենական ապահովության մասին: Ես ասացի. «Բայց որտեղի՞ց եք դուք նման բան վերցնել»: Հասկանո՞ւմ եք:

165 Նա ասաց. «Արդյոք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, *երբ* հավատացիք»: Նրանք հավատացյալներ էին, աղաղակում էին, ուրախանում էին և նման բաներ, բայց դեռևս չէին ստացել Սուրբ Հոգին: Պողոսն ասում է, որ չէին ստացել: Հասկանո՞ւմ եք: «Արդյոք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ հավատացիք»:

Նրանք ասացին. «Մենք չենք էլ իմացել, որ Սուրբ Հոգի կա»:

Ասաց. «Ուրեմն ինչպե՞ս մկրտվեցիք»:

166 Նրանք ասացին. «Մենք արդեն մկրտվել ենք»: Բայց կեղծ, տեսնում եք: Դրա համար նա պետք է նորից մկրտվեր: Շատ լավ:

167 Հիմա, այժմ ուշադրություն դարձրեք այս բանին, որ այս կին քարոզիչները, երբ եկան, նրանք կարծում էին, թե կստանան իրենց լիազորությունները: Բայց այդպես անելն Աստծո կողմից բացարձակապես չի թույլատրվում: Եվ թող...քանի դեռ այս թեմայի մեջ ենք, այս կանայք, հասկանում եք: Եվ դա, հիմա, նա սաց. «Եթե ձեր մեջ լինի մեկը, ով հոգևոր է կամ մարգարե, թող գիտենա ինչ որ գրեցի ձեզ, որ Տիրոջ պատվիրաններն են: Բայց եթե նա տգետ է, թող տգետ մնա»: Դրա համար...այս խորանը չի վերցնում և նշանակում կին քարոզիչներ, կին սարկավագներ կամ էլ ինչ-որ բան կանաց համար, որ կատարեն որպես այս եկեղեցու պաշտոն, որովհետև այս Սուրբ Գրիքը գտնվում է այստեղ և այն բաց է:

168 Հիմա, Աստվածաշունչն է ասում. «Ձեր տղաներն ու ձեր աղջիկները կմարգարեանան»: Հիմա, ի՞նչ է նշանակում *մարգարեություն* բառը: Նայեք դրան: Նշանակում է «մի բան ասել ներշնչանքի տակ, կամ էլ «կանխասել ինչ-որ մի բան»: Սա բարդ բառ է:

169 Ճիշտ այնպես, ինչպես *«սրբացնել»* բառն է նշանակում «մաքրված և մի կողմ դրված ծառայության համար»: Հասկանո՞ւմ եք: Կամ էլ, սա բաղադրյալ բառ է, որը մեկից ավելի իմաստներ ունի, ինչպես որ մենք ունենք այստեղ Անգլերենում:

170 Ինչպես, ասենք, «board» բառը: Ի՞նչ է նշանակում *board* բառը: Դուք կասեք. «Դե, նա ուզում է ասել, որ ինքը վճարել է իր *հաշիվը*»: «Ոչ: Նա ուզում էր ասել, որ անցք է *ծակել*»: «Ոչ: Նա ուզում էր ասել, որ ինքը *հոգնեցրել է* իրեն»: Կամ տեսնում եք, ընդամենը մի բառ է, բայց դուք պետք է իմանաք, թե ինչի մասին եք խոսում: Հասկանո՞ւմ եք:

171 Այդպես էլ այս բաղադրյալ բառի դեպքում է, որտեղ ասվում է. «Ձեր տղաներն ու ձեր աղջիկները կմարգարեանան»: Հիմա, միակ միջոցը, որով Աստված...

172 Այս մկրտականն ասաց. «Դե, մենք ստացել ենք Սուրբ Հոգին»: Ես ասացի...«Այն ժամանակ, երբ հավատացինք»: Ես ասացի...Հիմա, տեսե՛ք, նա ասաց. «Աստված Աբրահամին տվեց...»: Ասաց. «Աբրահամը հավատաց Աստծուն»: Ահա թե ինչպես նա դա ներկայացրեց: Նա ասաց. «Աբրահամը հավատաց Աստծուն, և դա նրան արդարություն համարվեց»: Քանի՞սը գիտեն, որ դա ճշմարտություն է: Այժմ նայե՛ք, թե սատանան ինչպես, ինչպես հեշտությամբ կարող է դա

գցել եղբոր վրա։ Հասկանում եք, այսքան պարզ։ Հիմա, դա Սուրբ Գիրքն է։

173 Եղբա՛յր, ասում եմ քեզ, ահա այստեղ՝ վերևում, պետք է օծված լինես, նախքան սրա մեջ մտնելը։ Պետք է մտնես գաղտնի վայր և աղոթես։ Մարդիկ ասում են. «Ինչո՞ւ դու դուրս չես գալիս և չես հանդիպում մարդկանց»։ Եղբա՛յր, եթե դու պատրաստվում ես խոսել մարդկանց հետ կամ սովորեցնել նրանց, ավելի լավ է որոշ ժամանակով ինքդ քեզ հետ առանձին մնաս Աստծո հետ ամբիոն բարձրանալուց առաջ։ Անշուշտ, տեսնում եք, որովհետև սատանան նենգ է, շատ նենգ։

174 Նա ասաց, ուշադրություն դարձրեք, ասաց. «Աբրահամը հավատաց Աստծուն և դա նրան արդարություն համարվեց»։ Դա ճիշտ է։ Նա ասաց. «Հիմա, Աբրահամը հավատալուց ավելի ի՞նչ կարող է անել»։

Ես ասացի. «Դա է այն ամենը, ինչ նա կարող էր անել»։

175 Նա ասաց. «Հավատալուց որքա՞ն ավելին դու կամ որևէ մեկը կարող է անել»։

176 Ես ասացի. «Դա է այն ամենը, ինչ մենք կարող ենք անել։ Բայց նայի՛ր, եղբա՛յր, Աստված հետո հաշտեցրեց կամ ճանաչեց Աբրահամի հավատքը։ Նա կնիք տվեց նրան, թլփատության նշան, որպես ուխտի կնիք։ Հասկանո՞ւմ եք։ Նա տվեց նրան։ Նա ասաց. «Հիմա, Աբրահամ, ես կճանաչեմ քո հավատքը, Ես հիմա քեզ մի նշան կտամ, որ Ես ընդունել եմ քեզ»։

177 Նա թլփատեց Աբրահամին, և դա ուխտի կնիք էր։ Եվ հիմա այս օրում...Հիմա, կինը չէր կարող լինել այդ ուխտի մեջ. միայն ամուսնացած կինը։ Պարզեք, կնոջը չէին կարող թլփատել, ուստի նրանք պետք է մտնեին, որովհետև ինքն ու իր ամուսինը մեկ են։ Նրանք այլևս երկու չեն, այլ մեկ են։ Քանի՞սը դա գիտեն։ Սուրբ Գիրքն է այդպես ասում։ Այսպիսով, ամուսնանալով, այդ ժամանակ նա, նա մեկ է դառնում։ Իջեք ներքև և նայեք այստեղ Տիմոթեոսի թղթում նույն բանն է ասում. «Սակայն նա կփրկվի որդեծնությամբ, եթե պարկեշտությամբ մնա հավատի և սրբության մեջ»։

178 Հիմա, բայց այդ ժամանակ Հին Կտակարանյան թլփատությունը մարմնում էր, սակայն այս Նոր Կտակարանում Հովելն ասում է. «Եվ պիտի լինի սրանից հետո, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամեն

մարմնի վրա, և ձեր տղաներն ու ձեր աղջիկները պիտի մարգարեանան»: Հիմա, *մարգարեություն* բառը չի նշանակում սովորեցնել: *Մարգարեություն* նշանակում է կամ «պատմել փորձառությունը ներշնչանքի ներքո», կամ էլ «կանխասել մի բան, որը կատարվելու է»: Եվ մենք գիտենք, որ Հին Կտակարանում մարգարեուհիներ են եղել: Նրանք չէին կարող խոսել շենքում, եկեղեցում, ժողովի մեջ որպես վարդապետ: Բայց Աննան և նրանցից շատերը մարգարեուհիներ էին տաճարում, և նրանք...Մարիամը մարգարեուհի էր կամ դրա նման մի բան: Նա իր վրա Հոգի ուներ, դա ճիշտ է, բայց նա իր սահմանափակումներն ունեն տեղի վերաբերյալ: Կանայք այսօր, բացարձակապես, կարող են մարգարեուհիներ լինել, բայց ոչ վարդապետներ և այլն, այստեղ հարթակում: Եթե այդպես եք անում, դուք ստիպում եք, դուք ստիպում եք, որ Աստվածաշունչը հակասի ինքն իրեն: Աստվածաշունչը չի կարող *այստեղ* մի բան ասել, *մեկ ուրիշ տեղ*՝ մեկ այլ բան: Այն միշտ նույն բանը պետք է ասի, այլապես Աստծո Խոսք չէր լինի: Հասկանո՞ւմ եք: Եվ այսպես. «Ձեր տղաներն ու ձեր աղջիկները պիտի մարգարեանան», նշանակում է, որ նրանք պետք է կամ «կանխասեն» կամ «վկայեն»: Հիմա, քննեք այս բառը, վերցրեք Աստվածաշնչյան բառարանը և տեսեք, թե արդյոք դա ճիշտ չէ: «Ձեր տղաներն ու ձեր աղջիկները պիտի մարգարեանան»:

179 Հիմա, Աստվածաշունչը նաև խոսում է մի կնոջ մասին, ով հավակնում էր, որ ինքը, որպեսզի, կամ հայտարարում էր, որ ինքը...Սա կաշխատեր թե՛ կաթոլիկ եկեղեցու դեպքում, թե՛ նաև...այս թեմայի հետ, որի մասին մենք հիմա պատրաստվում եք խոսել: Եկե՛ք անդրադառնանք Հայտնության գրքին և կարդանք 2-րդ գլխի 20-րդ համարը, որ մենք հենց այստեղ մոտ ենք դրան, որ դուք նկատեք և պարզապես տեսնեք, թե որքան սատանայական կարող է լինել այդ բանը, խոսելով այս վերջին օրերին, թե ինչ կկատարվի... ինչպիսին կլինի այդ կինը: Հիշում եք, կաթոլիկ եկեղեցին կին է: Նոր կարդացինք դա, այդպես չէ՞: Հիմա լսեք սա, թե ինչպես է ասվում: Հայտնություն 2.20. «Բայց...»: Նա դիմում է Թիվատիրի եկեղեցուն, տեսե՛ք. «Բայց...»: Որը միջնադարի եկեղեցին է՝ խավար ժամանակաշրջանի միջով անցած:

Հիմա *բայց քո դեմ որոշ բաներ ունեմ, որովհետև*

դու թույլ ես տալիս այդ Հեզաբել կնոջը, որ ինքն իրեն մարգարեուհի է անվանում, Իմ ծառաներին ուսուցանել ու մոլորեցնել, որ պոռնկություն անեն ու կուռքերին զոհ արված բաներ ուտեն: (Տեսնո՞ւմ եք):

180 Հիմա, եթե նկատեք, հետևեք եկեղեցու այդ ժամանակաշրջաններին, հետո կավարտենք: Հետո առավոտյան մենք ուրիշ բաներ կվերցնենք: Նայե՛ք: Հրեական խորանի ոսկե աշտանակների տակ՝ ներսում, որտեղ առաջավորության հացն էր և այլն, կային յոթ ոսկե աշտանակներ: Բոլորդ դա գիտեք: Հասկանո՞ւմ եք: Դրանք եկեղեցու յոթ ժամանակաշրջաններն են: Դա խոսում է երեկեղեու յոթ ժամանակաշրաջանների մասին, լույսը: Հիմա եթե ուշադրություն դարձնեք Հայտնության 1-ին գլխին, մենք տեսնում ենք Հիսուսին կանգնած եկեղեցու այդ յոթ ժամանակաշրջաններում, յոթ ոսկե աշտանակների մեջտեղում, երբ Հովհաննեսը շրջվեց և տեսավ Մեկին, ով Մարդու Որդու նման էր, կանգնած, հագած ինչպես որ կար: Դա Հարսն էր կանգնած վառվող աշտանակների մեջտեղում:

181 Հիմա, Հին Կտակարանում վերցնում էին...այս մեկ մոմը և վառում էին այն, մյուսը մոմը վերցնում և վառում էին դրանից, այդպես մեկը մյուսի հետևից վառում էին, մինչև որ բոլոր յոթ աշտանակները վառվեն:

182 Եթե դուք ուշադրություն դարձնեք սկզբում, երբ Աստված սկսեց գործ ունենալ հրեաների հետ, և նրանք անցան ոսկե ժամանակաշրջանի միջով: Եվ հետո հրեաների պատմության ամենամութ ժամանակաշրջանը, որ Աստված գործեց նրանց հետ, եղել է Աքաաբի թագավորության ժամանակ: Եթե ուշադրություն դարձնեք, կարդալով եկեղեցու այդ ժամանակաշրջանները, Նա նորից վերադառնում է դրան: Նա ասաց, հիմա. «Որոշ բաներ», և ասաց...Հիմա, հենց այդ խավար ժամանակաշրջանում, տասնհինգ դար առաջ, կամ նախ Աքաաբի և հրեաների ժամանակ: Նրանք ունեցան ամենախավար ժամանակաշրջանը, երբ Աքաաբն ամուսնացավ Հեզաբելի հետ և կրակապաշտություն բերեց Իսրայելի մեջ, և ստիպեց բոլոր մարդկանց երկրպագել Աքաաբի...Հեզաբելի աստվածներին: Հիշում եք, նրանք անտառակներ հաստատեցին և հեռացրին Աստծո զոհասեղանները: Եղիան աղաղակեց, որ նա «միակն էր», բայց Աստված

յոթ հարյուր հոգի ուներ, ովքեր իրենց ծնկները չէին ծռել Բահաղի առջև: Հիշո՞ւմ եք դա: Դա այդ ընտրված Եկեղեցու դուրս գալու խորհրդապատկերն է: Տեսնո՞ւմ եք այնտեղ: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես է դա:

183 Հիմա, այս եկեղեցում, եթե ուշադրություն դարձնեք առաջին եկեղեցուն, առաջին եկեղեցին, Եփեսոսի եկեղեցին, հզոր եկեղեցի էր: Նա ասաց. «Դու դեռ լույս ունես»: Եվ եթե նկատեք, ամեն եկեղեցին, այն սկսում է խամրել, խամրել, խամրել, մինչև որ հասնում է Թիվատիրի եկեղեցուն: Հետո, տասնհինգ դար: Հետո Նա մյուս կողմից է դուրս գալիս. «Դու ընդամենը մի քիչ լույս ունես: Հաստատիր այն, ինչ ունես, ապա թե ոչ, քո ճրագակալն իր տեղից կշարժեմ»: Եվ դա գալիս է մինչև Ֆիլադելֆիայի եկեղեցական ժամանակաշրջանը, իսկ հետո Լավոդիկեայի եկեղեցական ժամանակաշրջանի մեջ:

184 Հիմա, ահա գեղեցկությունը: Ո՛հ, Աստված իմ: Ես պարզապես սիրում եմ սա, եղբայր Սմիթ: Տե՛ս, նայի՛ր սրան: Հիմա, *այս* եկեղեցական ժամանակաշրջանում, ինչպես արդեն անցել ենք...Հիմա նայե՛ք սրան: Առաջին եկեղեցական ժամանակաշրջանը Եփեսոսն էր, Եփեսոսի եկեղեցական ժամանակաշրջանը: Հիմա, այդ եկեղեցական ժամանակաշրջաններից յուրաքանչյուրը, մինչև այս տասնհինգ դարին հասնելը, եթե ուշադրություն դարձնեք...Կարդացե՛ք դա, երբ տուն վերադառնաք այսօր, եթե ժամանակ ունենաք, կամ առավոտ կանուխ եկեղեցի գալուց առաջ, Հայտնության 1–ին, 2–րդ և 3–րդ գլուխները: Դուք կտեսնեք, թե այդ եկեղեցական ժամանակաշրջաններից որ մեկում է Նա ասում. «Դու մի քիչ ուժ ունես և անունս չուրացար», մինչև որ հասավ Թիվատիրի այս տասնհինգ դարին, խավար ժամանակաշրջանին: Այնուհետև Նա դուրս եկավ մյուս կողմից և ասաց.

> ...դու *անուն ունես, թե* կենդանի ես, բայց *մեռած ես:*

185 Եվ դրանք, մյուս այս եկեղեցական ժամանակաշրջաններից և ոչ մեկը, դա կամ Ֆիլադելֆիայի եկեղեցական ժամանակաշրջանը չբարձրացրին նորից այդ Անունը: Անունը երբեք չի եղել, որովհետև այն ժամանակ դա բաց է թողնվել: Հիմա, ո՛հ, ինչպես մենք կարող էինք հիմա այդ կեղծ ուսմունքները դնել նրանց վրա, հենց այստեղ, ցույց տալ ձեզ, որ սա

մայրն է, Կաթոլիկ եկեղեցին, դրանց բոլոր մայրը, թե նա ինչպես է «մայր, խորհուրդ, Բաբելոն»: Եվ դա, նայե՛ք, այս եկեղեցական ժամանակաշրջանը, երբ նա դուրս եկավ, մի քիչ լույս ուներ, հետո հետզհետե խամրեց, հետո մտավ կազմակերպության մեջ այդ տասնհինգ դարերի ժամանակ: Եվ հիմա նա դուրս է եկել, ոչ թե որպես Տեր Հիսուս Քրիստոսի Եկեղեցի, այլ որպես կաթոլիկ եկեղեցի: Լյութերն ինչպե՞ս դուրս եկավ: Որպես լյութերական եկեղեցի: Մկրտականներն ինչպե՞ս դուրս եկան: Որպես մկրտական եկեղեցի: Ոչ թե Նրա Անունը, ոչ թե Նրա Անունը, մեկ այլ անունով, «դու անուն ունես»: «Որովհետև երկնքի տակ տրված ուրիշ անուն չկա, որով կարող եք փրկվել, Հիսուս Քրիստոսի Անունից բացի»: «Դու անուն ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես», դա այդ հարանվանության հետ է:

186 «Ո՛հ, ես երիցական եմ», և մեռած ես: «Ո՛հ, ես մկրտական եմ», և մեռած ես: Դու կենդանի ես միայն այն ժամանակ, երբ կենդանանում ես Հիսուս Քրիստոսի մեջ: Դա ճիշտ է: Ձեր սուտ մկրտությունները, ջուր, կեղծ մկրտություն. շաղ տալ, լցնել, ընկղմելու փոխարեն, Տեր Հիսուս Քրիստոսի Անվան փոխարեն օգտագործելով «Հայր, Որդի և Սուրբ Հոգի» բանաձևը: Այդ բոլոր կեղծ բաներն անմիջապես իջնում են, Աստվածաշնչի ասելով, թափանցում են դրա մեջ այնքան խորը, որքան կարող են: Իսկ մենք դրա հետ համակերպվում ենք. «Դե, իմ եկեղեցին *այդպես* է դրան հավատում»: Բայց Աստվածաշունչը *Սա* է ասում: Հասկանո՞ւմ եք: Նման բաներ չկան: Նման բան չկա:

187 Եվ Աստվածաշնչում ոչ մի տեղ չի ասվում, որ նրանք դուրս են հանել իրենց լեզուն և սուրբ Եվխարիստիա են ընդունել, իսկ քահանան գինի է խմել և դա Սուրբ Հոգի են անվանել: Աստվածաշնչում երբեք ձեռք չեն սեղմել և չեն տվել ընկերակցության աջը և այն անվանել Սուրբ Հոգի: Երբեք որևէ մեկը վեր չի ելել և ասել. «Հիմա ես հավատացյալ եմ», և ստացել է Սուրբ Հոգին: Եթե այդպես լիներ, ահա թե ինչպես կկարդացվեր Գործք 2-ը. «Եվ երբ Պենտեկոստեի օրը եկավ, ճանապարհով եկավ մի հռոմեացի քահանա շրջված օձիքով: Նա բարձրացավ և ասաց. «Բոլորդ հանեք ձեր լեզուն և ընդունեք սուրբ Եվխարիստիան, առաջին հաղորդությունը»: Արդյոք չէր կարելի այդ ժամանակ այդպես կարդա՞լ Գործք 2:

188 Դուք՝ բողոքականներդ էլ նույնքան վատն եք:

Վերադարձեք այնտեղ և ասեք. «Մենք հիմա կմոտենանք ձեզ՝ մեթոդականներ. նրանց դրեք աջ կողմում կամ տվեք նրանց ընկերակցության աջը, և վեց ամիս փորձաշրջան»: Որտե՞ղ եք դա կարդացել Գործք 2-ում: Հասկանո՞ւմ եք: Որտեղի՞ց եք դա վերցրել: Տեսնո՞ւմ եք:

189 Ասվում է. «Երբ բոլորը միաբան մեկտեղ էին»: Այնտեղ ոչ մի եպիսկոպոս չեկավ և *այս բանն* արեց, ոչ էլ քահանա եկավ և *այս բանն* արեց: «Բայց հանկարծ երկնքից մի ձայն եկավ՝ սաստիկ փչող քամու պես և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին»: Ահա թե ինչպես նրանք Դա ստացան, այո՛, պարո՛ն, սաստիկ փչող քամու պես, որ գալիս է Փառքից: Ով ոչ թե ճանապարհից կամ ինչ-որ հարանվանությունից էր:

...դու անուն ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես:

190 Տեսնում եք, ձեր հավատամքներն ու հարանվանություններն այնպես զերծ են պահել Աստծուն. որ. «Մենք հավատում ենք *սրան*, և հավատում ենք նաև, որ հրաշքների օրերն անցել են»: Սա սուտ մարգարեն է, որ ասում է դա: Սուտ մարգարեն է, որ ձեզ ասում է, որ «դուք կարող եք ձեռքը սեղմել և ստանալ Սուրբ Հոգին»: Սուտ մարգարեն է, որ ձեզ ասում է, որ՝ «Երբ հավատում եք, ստանում եք Սուրբ Հոգին: Սուտ մարգարեն է, որ ձեզ ասում է. «Մկրտվելու փոխարեն ձեզ վրա պետք է ջուր լցնեն և ջրցողեն»: Սուտ մարգարեն է, որ ձեզ ասում է. «Մկրտվեք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով», երբ Աստվածաշնչում չկա որևէ այդպիսի համար: Դա ճիշտ է: Աստվածաշնչում չկա այնպիսի համար, որն ասում է ձեզ, որ մկրտվեք, որտեղ որևէ մեկը երբևէ մկրտվել է, եթե ոչ Հիսուս Քրիստոսի Անունով: Միայն Հովհաննեսի աշակերտները. նրանք պետք է գային և վերամկրտվեին Տեր Հիսուս Քրիստոսի Անունով Սուրբ Հոգին ստանալու համար: Դա ճիշտ է: Հիմա, դա «Միայն Հիսուս» վարդապետությունը չէ: Ես ծանոթ եմ «Միայն Հիսուս» վարդապտությանը: Դա այն չէ: Դա պարզապես աստվածաշնչյան վարդապետություն է: Դա ճիշտ է:

191 Բայց ահա խնդրեմ: Ի՞նչ եք դուք անում դրա հետ: Ահա ձեր մայրը: Ահա այդ հավատամքների մայրը:

192 Հիմա, հետ նայեք Աստվածաշնչի մեջ և ասեք ինձ, թե որտե՞ղ է որևէ մեկը ջրով ցողվել: Մեթոդականներ, երիցականներ, կաթոլիկներ, ասացեք ինձ, թե

Աստվածաշնչում որտեղ է մի մարդ ջրով ցողվել: Ասացեք ինձ, թե Աստվածաշնչում որտեղ է մեկի գլխին ջուր լցվել մեղքերի թողության համար: Նշեք դա: Կարո՞ղ եք դա գտնել: Եթե գտնեք, եկեք ինձ մոտ և ես կքայլեմ այս փողոցով մեջքիս գրված հետևալ գրությամբ. «Սուտ մարգարե: Ես սխալ եմ եղել»: Կամ գտեք մի տեղ ամբողջ Աաստվածաշնչում որտեղ որևէ մեկը մկրտվել է Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, այնպես, ինչպես ձեզանից ութանասուն տոկոսն է մկրտված: Գտեք մի համար, որտեղ, որևէ մեկը մկրտվել է այդ ձևով, և ես իմ մեջքին կկախեմ ցուցանակ հետևյալ գրությամբ. «Սուտ մարգարե» և *այսպես* կքայլեմ փողոցով: Ցույց տվեք ինձ նաև նոր Եկեղեցում, թե որտեղ է որևէ մեկը մկրտված եղել, որ չպիտի գար և նորից վերամկրտվեր…ոչ թե միայն «Հիսուս» անունով, այլ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: Դա ճիշտ է: Տեսե՛ք, թե արդյոք դա այդպես չէ:

193 Իսկ այստեղ, ի՞նչ է սա: Նա պոռնիկների մայր էր: Ի՞նչը նրան պոռնիկ դարձրեց: Ի՞նչը նրան անառակ դարձրեց: Իր ուսմունքը: Ի՞նչը նրանց պոռնիկ դարձրեց: Իր ուսմունքը:

194 Դրա համար մենք չենք համակերպվում իրենց հարանվանությունների և իրենց դոգմայի հետ: Մենք մաքուր ենք մնում այս Աստվածաշնչի հետ: Ես չգիտեմ, թե որքան լավ եք ապրում դրանով, բայց ամեն դեպքում ձեզ ուսուցանվում է սա: Ճիշտ է: Դա ձեր գործն է: Ես չեմ կարող ստիպել ձեզ ապրել դրանով: Ես միայն կարող եմ ասել, թե որն է Ճշմարտությունը: Դրա համար մենք հարանվանություն չենք: Ես չէի, չէի ուզենա, որ մենք պղծեինք ինքներս մեզ մտնելով նման բաների մեջ, մատնվելով ինչ-որ դոգմայի: Ես նախընտրում եմ գնալ իմ ճանապարհը Տիրոջ արհամարվածների փոքր խմբի հետ: Ես նախընտրում եմ մաքուր և անբիծ մնալ Աստծո և Խոսքի առջև և կանգնել այստեղ և ասել. «Ես սուրբ եմ որևէ մարդու արյունից»: Դրա համար ենք մենք մնում Բրանհամի խորանում: Դրա համար մենք Ասամբլեաներ չենք: Դրա համար մենք միադավաններ չենք: Դրա համար մենք Միայն Հիսուս չենք: Դրա համար մենք մեթոդականներ չենք: Դրա համար մենք մկրտականներ չենք: Պարզապես, պարզապես մի փոքրիկ խորան ենք այստեղ: Մենք ընդհանրապես ոչ մի հարանվանություն չունենք: Մենք ազատ ենք Քրիստոսով: Դրա համար ենք մենք մնում այնպես, ինչպես որ կանք: Եվ Աստված օրհնել

է մեզ և օգնում է մեզ։

195 Հիմա, մենք կարող ենք ձեզ ասել, թե ինչու ենք մենք հաղորդություն ընդունում, թե ինչու ենք մենք ոտնլվա անում, թե ինչու անդամներին թույլ չենք տալիս վերցնել այն, եթե գիտենք, որ նրանք մեղքի մեջ են։ Դրա համար այս երկու–երեք շաբաթվա ընթացքում ես գնում էի մի անդամից մյուսի մոտ, որտեղ դուք նույնպես ունեիք փոքրիկ ընդհարումներ։ Մեկը մյուսի հետ չի խոսում, իրար կողքով անցնելով գլուխները շրջում են։ Ամոթ ձեզ, ով ընդունում եք Աստծո օրհնյալ բաժակն այն զոհասեղանի վրայով, իրար եղբայր և քույր եք անվանում, իսկ հետո վերցնում եք խոսափողը և մեկը մյուսի մասին բամբասում։ Դուք արժանի չեք քրիստոնյաներ կոչվելու, երբ այդպիսին եք։ Ճիշտ է։ Կտրեք ձեր հեռախոսները, եթե չեք կարող լավ բան ասել որևէ մեկի մասին, ընդհանրապես մի խոսեք։ Հիշե՛ք, դուք պատասխան եք տալու Աստծո առջև։ Քանի դեռ այդպիսի ոգին ձեզ մեջ է, դուք գիտեք, որ Աստծո առաջ շիտակ չեք։ Եթե չեք զգում…

196 Եթե մարդը սխալմունքի մեջ է, գնացե՛ք նրա մոտ և հաշտվե՛ք։ Եթե չկարողանաք հաշտվել, վերցրեք մեկին ձեզ հետ։ Զարմանալի չէ, որ Աստված չի կարող կարգավարժել Իր Եկեղեցին, որովհետև ճիշտ չեք անում դա։ Հեռախոսից կախվելու և այդ մեկի մասին խոսելու փոխարեն, թե ինչ է տեղի ունեցել, փոքրիկ պաշտամունքներ և նման բաներ։ Դրա փոխարեն ինչո՞ւ չեք անում այն, ինչ Աստվածաշունչն է ասում։ Եթե մի եղբայր բռնվել է մի սխալի մեջ, գնա նրա մոտ և տես, արդյոք չես կարողանա հաշտվել նրա հետ։ «Դե, հիմա, նա է ինձ վիրավորել»։ Ինձ համար մեկ է, թե ինչ է արել նա, միևնույնն է գնա նրա մոտ։ Չի ասվում, որ նա քեզ մոտ գա։ Դու գնա նրա մոտ, եթե նա սխալ է։ Դուք ասում եք. «Դե, նա է սխալմունքի մեջ։ Նա պիտի գա ինձ մոտ»։ Դա չէ այն, ինչ Աստվածաշունչն է ասում։ Աստվածաշունչն ասում է, դու գնա նրա մոտ։ Եթե նա սխալ է, դու գնա նրա մոտ։

197 Հետո եթե քեզ չլսի, վերցրու քեզ հետ մեկին որպես վկա։

198 Հետո եթե այդ վկային էլ չլսի, այդ ժամանակ ասա. «Ես հիմա քո հովվին կբերեմ»։ Հետո ասա նրան, ասա. «Ես սա ասելու եմ եկեղեցուն, և այս պահից սկսած՝ երեսուն օրվա ընդացքում, եթե դուք, եղբայրներ չշտկեք դա…Այս եղբայրն ուզում է հաշտվել, դու՝ չես ուզում։

Եվ եթե երեսուն օրվա ընթացքում դու չշտկես դա, կլինի հետևյալը: Դու այլևս մեզանից մեկը չես լինի»:

199 Աստվածաշունչն է ասում. «Եթե եկեղեցուն էլ չլսի, թող քեզ համար հեթանոսի ու մաքսավորի պես լինի»: Տեսե՛ք, քանի դեռ եղբայրն այդ եկեղեցու պաշտպանության ներքո է, Քրիստոսի արյունը պաշտպանում է նրան: Դա է պատճառը, որ մենք չենք հասնում նրան, որ եկեղեցին շարժվի իր ճանապարհով: Հիմա, ճիշտ է, *Սա* մկր-... մկրտական եկեղեցու ուսմունքն է, այսինքն՝ Բրահամի խորանինը, եթե կանեք դա: Տեսնում եք, թե ինչու չի կարող...

200 Դուք գալիս եք այստեղ, ասենք՝ օրինակ, երկու տղամարդ, ասենք՝ Լեոն և ես: Դուք ինձ...Եվ ես ասում եմ. «Դե, նա, նա է մեղանչել իմ դեմ»: Դա ոչ մի նշանակություն չունի: Ես պիտի գնամ նրա մոտ: Նա այս եկեղեցու անդամն է: Նա, նա քրիստոնյա է դարձել: Նա ինձ հետ այստեղ հաղորդություն է ընդունել: Եվ մենք մկրտվել ենք Տեր Հիսուսի Անունով: Միմյանց առաջ ուղղիղ ենք քայլել որպես եղբայրներ, հետո ինչ–որ բան է կատարվել:

201 Դա մարդը չէ: Դեպքերի ինսուն տոկոսում սատանան է սողոսկում մարդկանց միջև: Դա ոչ թե մարդիկ, այլ սատանան է: Քանի դեռ դուք թույլ եք տալիս սատանային անել դա, վնասում եք ձեր եղբորը: Դա ճիշտ է:

202 Դե, ինչ–որ բան կարգին չէ իմ և Լեոի հետ. եկեք պատկերացնենք դա: Եվ եթե դուք տեսնում եք, որ ինչ–որ բան կա, դա ձեր պարտքն է գալ մեզ մոտ և ասել. «Տղանե՛ր, դուք, երկուսդ եկեք այստեղ և իրար կողք կանգնեք: Մենք հիմա դա կկարգավորենք»: Հիմա, ուրեմն, եթե նա գալիս է այնտեղ, և այնտեղ է գալիս պարզելու, ուրեմն՝ ահա մենք: Ես ասում եմ. «Դե, նախ եթե մենք, մենք չենք կարողանում համաձայնության գալ, ուրեմն դուք այդպես եկեք եկեղեցի:

203 Եվ հետո, քանի դեռ դուք դրա հետ կապված ոչինչ չեք անում, չնայած կատարվածին, Հիսուս Քրիստոսի Արյունը մեզ երկուսիս պատշպանում է: Հասկանո՞ւմ եք: Բայց հետո այդ, այդ հին քաղցկեղը մեկ այլ քաղցկեղ է առաջացնելու, իսկ այդ քաղցկեղը՝ մեկ այլ քաղցկեղ, և ամբողջը հիվանդանալու է, ողջ, ամբողջ եկեղեցին: Հետո հասնում եք այն բանին, որ մտնում եք եկեղեցի, այնպիսի սառնություն է, որ ստիպված ես ժողովը մտնելուց առաջ դռնապանին կանչել, որ գա սառցալեզվակները ջարթի: Հիմա, դուք գիտեք, որ դա ճիշտ է: Եվ ցուրտ է: Մեկը

նստում է կողդ, գիտեք, և ոչինչ չի ասում. «Դե, մենք այնքան հոգևոր էինք»: Ի՞նչ պատահեց: Դուք լավ էիք վազում, ի՞նչ եղավ: Տեսնում եք, ձեր մեղքը բաժանում է ձեզ: Դուք Աստծո առջև պատասխան եք տալու դրա համար, եղբայրներ: Ես այս բանը կշտկեմ:

204 Ինձ հետ ամեն ինչ կարգին է Լեոի հետ ամեն ինչ կարգին է. դա սատանան է մտել մեր միջև: Դա ճիշտ է: Կարգավորեք այդ հարցը: Գնացեք նրա մոտ: Հետո, եթե նա չլսի կամ ես չլսեմ, ինչ ձևով էլ որ լինի, այդ ժամանակ ասեք դա եկեղեցուն: Եթե 30 օրվա ընթացքում նա չգա և չհաշտվի այդ եկեղեցու հետ, այդ դեպքում նա Հիսուսի պաշտպանությունից դուրս է: Մենք արձակում ենք նրան: Դա միանգամայն ճիշտ է: Հետո տեսեք, թե ինչ է կատարվում: Այդ դեպքում թող Աստված կարգուկանոն հաստատի: Դուք ձեր ձեռքերը լվանում եք: Դուք հնարավոր ամեն բան արել եք: Թող մի քիչ էլ Տերը զբաղվի նրանով. Նա կհանձնի իրեն սատանային: Այդ ժամանակ կգա: Եթե չգա, ուրեմն նրա կյանքը կարճ է տևելու:

205 Հիշո՞ւմ եք Աստվածաշնչում մի եղբայր կար, ով չէր ուզում հաշտվել Աստծո հետ: Քանի՞սն են հիշում այդ դեպքը: Նա ապրում էր իր խորթ մոր հետ, և նրանք չէին կարողանում շտկել նրան: Պողոսն ասում է. «Հանձնեք նրան սատանային՝ կորստյան համար»: Երկրորդ Կորնթացիներում տեսնում եք, որ նա շտկվեց:

206 Ես մի եղբայր, լավ ընկեր ունեմ, ես կուզեյի այստեղ ասել նրա անունը, քարոզիչ եղբայր է: Եվ այս քարոզիչ եղբայրը, նրա անունը Ռասմուսեն է: Այստեղ նստած ծառայողներից շատերը, նրա անունը ձեր թերթերի վրա է: Դա այն միջհարանվանականն է Չիկագոյից: Նայե՛ք: Նա մի տղա ուներ՝ սպասավոր, և նա գնում և ամուսնանում է կաթոլիկ մի աղջկա հետ, և այդպես սկսվում է: Նրանք պատրաստվում էին *այս, այն* և *այլ* բանն արել, և, և այլն. ինչ–որ խնդրի մեջ է ընկնում: Եվ նրա հայրը գնում է նրա մոտ և ասում է. «Նայի՛ր, որդյա՛կ, դու պատրաստվում ես հաշտվե՞լ»:

Ասում է. «Հայրի՛կ...»:

Նա նրանց՝ իր հոր եկեղեցին, սուրբ թռչկոտողների խումբ էր անվանել: Նա ասում է. «Հիմա, նայի՛ր, դու պատրաստվում ես շտկե՞լ այդ հարցն այս եկեղեցու հետ»:

207 Նա ասում է. «Հայրի՛կ, դու իմ հայրիկն ես, և ես չեմ ուզում քո հետ որևէ խնդիր ունենալ»: Շատ լավ:

208 Նա գնում վերցնում է սարկավագներից մեկին և գալիս է նրա տուն: Ասում, ասում է. «Ուեսլե՛յ, ես ուզում եմ խոսել քեզ հետ»: Ասում է. «Դու պատրաստվո՞ւմ ես շտկել այս հարցը եկեղեցու հետ»: Եվ նա նրան այդպիսի երկակի կարճ պատասխան է տալիս: Ասում է. «Հիշի՛ր, Ուեսլե՛յ, ես այդ եկեղեցու հովիվն եմ: Ես քո հայրն եմ, բայց ես անելու եմ այն, ինչ Աստված է պատվիրում անել: Ես տալիս եմ քեզ 30 օր, որ շտկես դա այն եկեղեցու հետ, հակառակ դեպքում մենք կհեռացնենք քեզ Աստծո Ներկայությունից: Դու իմ որդին ես. դա իմ Փրկիչն է»: Ասում է. «Ես սիրում եմ քեզ: Եվ դու գիտես, որ սիրում եմ քեզ, Ուեսլեյ: Ես հենց հիմա կյանքս կտամ քեզ համար: Բայց դու պետք է ուղղվես Աստծո Խոսքի հետ: Հասկանո՞ւմ ես»: Նա ասում է. «Ես եմ հովիվը: Ես եմ այդ հոտի հովիվը: Լինի իմ երեխան, կամ ով էլ որ լինի, դու պետք է ուղղվես Աստծո Խոսքի հետ: Եթե դու չանես այդ, ուրեմն ես արժանի չեմ Նրա հովիվը լինելու»:

209 Ա՜յ դա հովիվ է: Այ սա տղամարդ է: Այդպես չե՞ք կարծում: Ա՜յ սա տղամարդ է: Նա ասեց դա իր տղային: «Եվ ցավ պատճառեց նրան»,— ասաց նա: Բայց ասում է. «Դե ի՞նչ: Ո՞ւմ ես դու ուզում վիրավորել. մարդո՞ւն, թե՞ քո Փրկչին: Լավ,—ասում է նա,— ուրեմն մենք շարունակեցինք»: Եվ ասում է. «Նա չուզեց դա անել»: Եվ մենք...Ես պատմեցի եկեղեցուն»:

210 Նա ասում է. «Իմ որդին՝ Ուեսլեյը, այս հարցում հրաժարվում է լսել ինձ: Նա հրաժարվում է լսել սարկավագին: Եվ դու սրա վկա՞ն ես, *այսինչ–այսինչ* եղբայր»:

«Այո»:

«Շատ լավ: Հաջորդ կիրակի ժամը ութին, այս պահից չորս շաբաթ հետո, եթե նա չշտկի դա այս եկեղեցու հետ, մենք Ուեսլեյին՝ իմ որդուն, կմատնենք սատանային, որպեսզի մարմինը կորչի: Նրա Արյունը, Հիսուս Քրիստոսի Արյունը և այս եկեղեցին այլևս չեն պաշտպանելու նրան»:

211 Եվ այդ երեկոն եկավ: Կանգնում է ամբիոնի հետևում և ասում է. «Նա ևս երկու րոպե ունի»: Ժամանակը եկավ: Նա ասում է. «Հիմա, քանի որ իմ որդին՝ Ուեսլեյ Ռասմուսենը...ասել է այս ժողովին, Քեզ՝ Ամենակարող

Աստծուն. Մենք ամեն հնարավորն արել ենք Քո Խոսքերի և Քո, Քո Որդու՝ մեր Փրկչի հանձնարարությունների համաձայն, որ մեզ թողել է: Մենք հիմա, ես իմ տղային այս եկեղեցու հետ միասին հանձնում ենք կոր-…սատանային իր մարմնի կորստյան համար, որպեսզի նրա հոգին փրկվի»: Դա էր ամենը, ինչ ասվեց: Մոտ մեկ թե երկու շաբաթ, գուցե մեկ թե երկու ամիս ոչինչ տեղի չի ունենում:

212 Մի գիշեր Ուեսլեյը հիվանդանում է: Եվ երբ հիվանդանում է, վիճակը գնալով ավելի ու ավելի վատանում է: Նա բժիշկ է կանչում: Բժիշկը գալիս և զննում է նրան: Ջերմությունը հարյուր հինգ է լինում: Դրա համար նա ոչ մի պատճառ չի կարողանում գտնել: Պատրզապես գնալով վատանում է: Բժիշկն ասում է. «Տղա՛, ես չգիտեմ, թե քեզ հետ ինչ է պատահել»: Նա չգիտեր, թե ինչ աներ: Ասում է. «Մենք մասնագետ կկանչենք»: Նրանք մասնագետ են կանչում և մասնագետը գալիս է: Նրան հիվանդանոց են տանում, զննում են և այլն: Ասում է. «Ես ոչինչ չեմ կարող ասել: Տղան ուղղակի, ուղղակի մեռելի տեսք ունի»: Նրա կինն այնտեղ կանգնած՝ լաց էր լինում և նման բաներ: Երեխաները մահճակալի շուրջը կանգնած էին, և ուրիշ մարդիկ այդպես: Բժիշկն ասում է. «Նա մահանում է: Դա վերջն է»: Ասում է. «Նրա զարկերակն ու շնչառությունը գնալուվ թուլանում են»:

213 Նա ասում է. «Կանչեք հայրիկին»: Ո՛հ, այո: Այդ ճանապարհով պիտի արվեր: Ահա: «Կանչեք հայրիկին»: Եվ նրա հայրը շտապ վազում է հիվանդանոց, որ տեսնի նրան: Նա ասում է. «Հայրի՛կ, ես չեմ կարող հիմա, բայց Աստված լսում է իմ խոսքերը: Ես կշտկեմ ամեն ինչ: Ես կշտկեմ դա: Այո, ես կանեմ»: Այո, պարո՛ն, եղբա՛յր: Նույն պահին նրա շնչառությունը սկսում է կարգավորվել:

214 Հաջորդ կիրակի նա կանգնում է եկեղեցու առաջ: Նա ասում է. «Ես մեղանչել եմ Աստծո դեմ այս եկեղեցու ներկայությամբ: Ես հրաժարվել եմ լսել հովվի խոսքերը: Ես, ես հրաժավել եմ լսել այստեղի սարգավագին»: Եվ ասում է. «Ես խնդրում եմ այս եկեղեցուն ներել ինձ իմ կատարած նման չարության համար»: Ասում է. «Աստված խնայել է իմ կյանքը»: Ասում եմ ձեզ, նա շտկվեց: Այո: Ահա թե ինչ պետք է դուք անեք, հասկանում եք: Հասկանո՞ւմ եք: Դուք, եթե միայն դուք անե՞ք դա Աստծո ձևով: Հասկանո՞ւմ եք:

215 Հիմա, տեսե՛ք ինչպես ենք մենք անում, մենք խորհրդի

ժողով ենք հավաքում և ասում ենք. «Դե, հիմա, պետք է մենք արդյոք...»: Ես այս խորանին չեմ ասում, այլ նկատի ունեմ մեզ՝ բողոքականներիս: Մենք անցկացնում ենք խորհուրդի նիստ և ասում ենք. «Ի՞նչ եք մտածում Ջոնսի մասին: Ի՞նչ եք կարծում, ինչ պիտի է անենք նրա հետ: Ես կարծում եմ, որ նա ավելի լավ անդամ կլիներ մեթոդականներին, քան մեզ»: Ահա խնդրեմ: Դա, դա սխալ է: Դրա համար մենք չպիտի հետևենք իրենց ավանդույթներին: Եվ ինչ-որ եպիսկոպոս, մենք պիտի նրան կանչենք (երբևէ...ի՞նչ եք դուք նրան կոնչում. շրջանայի՞ն մարդ այս հոգեգալստական եկեղեցում. «շրջանային երեց»), կանչում եք նրան, որ տեսնի այդ մարդու վարքը:

216 Աստվածաշունչը մեզ ասում է ինչ անել: Դրա համար մենք խաբված չենք նրանց հարանվանություններով: Մենք ազատ ենք մնում այդ բանից: Ամե՛ն: Չե՞ք բարկանում ինձ վրա, ո՞չ: Մի արեք դա: Շատ լավ: Ես հավանաբար վաղը երեկոյան մի քանի շատ լավ հարցեր կստանամ: Բայց, դե, դա ճիշտ է: Հասկանո՞ւմ եք: Հիշե՛ք: Իմանալ...

217 Ես հիմա կասեմ սա: Դուք, մարդիկ, որ տարբեր հարանվանական եկեղեցիներից եք այստեղ, ձեր հարանվանությունը և, եղբայր, ես չեմ ասում, որ դուք քրիստոնյա չեք: Ես չեմ ասում, որ ձեր հարանվանությունում չկան հազարավոր հիանալի քրիստոնյաներ: Ես փորձում եմ ասել պատճառը, թե ինչու մենք հարանվանութուն չենք: Որովհետև ես պարզապես դա չէի տանի: Ո՛չ, պարո՛ն: Անկասկած, ոչ: Նրանք փորձում են ձեզ ասել, թե ինչ անեք: Եթե Աստված ինձ կանչել է Ավետարանը քարոզելու, ուրեմն ես այն կքարոզեմ այնպես, ինչպես Տերն է ինձ պատվիրում դա անել: Դա ճիշտ այնպես է, ինչպես գրված է այստեղ այս Աստվածաշունչում: Մի՛ համակերպվեք դրա հետ, ուրեմն դա...Աստված դատելու է ինձ դրա համար: Բայց եթե ես, եթե ես տեսնեմ մոտեցող գայլին կամ թշնամուն և չզգուշացնեմ նրանց, Աստված կպահանջի դա ինձանից: Բայց եթե ես ձեզ զգուշացնում եմ, այդ դեպքում դա արդեն ձեր գործն է: Հասկանո՞ւմ եք:

218 Հիշե՛ք. «Վերջին օրերում չար ժամանակներ պիտի գան, մարդիկ կլինեն ինքնասեր, անբարտավան, հպարտ, հայհոյիչ»: Տեսնում եք, հայհոյիչ. «Ո՛հ, նրանք հիմարների խումբ են: Հրաշքների ժամանակներն անցել են: Նման

բան չկա»։ Նա ծեր սուտ մարգարե է։ «Հիմա, մենք գիտենք, որ մեր կանայք նույնքան գիտակցություն ունեն ինչպես մեր տղամարդիկ»։ Ես չեմ վիճում դրա հետ, բայց Աստվածաշունչն ասում է հեռու պահել նրան ամբիոնից։ Ինձ համար դա, դա բավական է, հասկանում եք։ Դա ճիշտ է։ Շատ լավ։ Հասկանո՞ւմ եք։

Նաև ասում են. «Դե, հիմա, մեր հարանվանությունները, մենք նույնքան հաճելի մարդիկ ունենք, որքան որ դուք այնտեղ՝ խորանում»։ Ես ոչինչ չեմ ասում, բայց Աստվածաշունչը դատապարտում է հարանվանությունները։ Դա ճիշտ է։ Ես չեմ ասում, որ դուք չունեք հիանալի անդամներ ձեր եկեղեցում։ Դա հրաշալի է։ Նրանք հիանալի մարդիկ են։ Լավագույն մարդկանցից են, բոլոր հարանվանություններում էլ՝ կաթոլիկ և մնացածը, ես հանդիպել եմ նրանց։ Բոլորի մեջ, ես հրաշալի անդամների եմ հանդիպել։

219 Հիմա, այն ձևը, որով մենք շարադրելու ենք սա, բարեկամներ, եթե Տերը կամենա առաջիկա երկու ուսումնասիրությունների ժամանակ, գուցե…Ես ձեզ վաղը առավոտյան կասեն, թե վաղը երեկոյան սա կվերլուծե՞նք սա, թե՞ ոչ։ Պատճառը, թե ինչում ենք մենք փորձում դա անել, այն է, որ ես հիմա ուզում եմ բերել դա մի կետի։ Հիմա, եթե կուզենաք որևէ մեկին ձեզ հետ բերել, խնդրեմ, կարող եք դա անել։ Բայց հիմա հիշեք. դուրս մի՛, մի՛ գնացեք և փորձեք սխալ գտնել։ Եկեք այստեղ…Ես իմ, իմ եկեղեցուն եմ դիմում, հասկանում եք։ Ես այս բաներն իմ եկեղեցուց դուրս չեմ սովորեցնում, որովհետև դա ուրիշի գործն է։ Դա, նա է այդ հոտի հովիվը։ Իսկ ես, ես պարզապես…[Չձայնագրված հատված ձայներիզի վրա։ Ծան. խմբ]։

220 Վերադառնալով Ծննդոցին, դուք կանցնեք մինչև վերջ և կտեսնեք, թե որտեղ է դա։ Հիմա մենք վերադառնալու ենք Ծննդոց գիրք՝ պարզելու համար, թե ինչու ապօրինի երեխան չի մտնի Տիրոջ ժողովքի մեջ մինչև տասնչորս սերունդ։ Ինչպես է դա…Դա կլիներ չորս հարյուր տարի, որպեսզի այդ մեղքը կորցներ իր ուժը։ Ինչպես ենք մենք պատրաստվում պարզել, թե ինչպես է ծնողների անօրենությունը հատուցվում երեխաներից և իրենց երեխաներից, թե ինչպես դա սկսվեց Ծննդոցում և այլն։

221 Եվ դուք…հետո կտեսնեք, թե ինչպես է դա, հետ գնացեք մինչև վերջ, որ Աստված աշխարհի հիմնադրումից առաջ, նախքան մեկ ատոմի գոյանալը,

նախքան երբևէ լույսի երևույթի գոյանալը, Աստված գիտեր յուրաքանչյուր արարածին և այլն, ամենը, ինչ երբևէ լինելու էր երկրի վրա: Կա՞ այստեղ մեկը... Դուք չէիք կարողանա բացատրել, թե այդ բառը, և մեկնաբանել այն և ասել, թե «անսահման» բառն ինչ է նշանակում: Ճիշտ ինչպես ձեր տեսախցիկը դարձնեք դեպի անսահմանություն: Պարզապես, պարզապես մինչև այստեղ, և վերջ: Հասկանո՞ւմ եք: Անսահմա՛ն: Եվ այս սահմանափակ մտքով մենք երբևէ չենք կարողանա հասկանալ, թե անսահման Միտքն ինչ կարող է պարունակել իր մեջ: Տեսնում եք, մենք չենք կարող դա անել: Դուք, դուք չեք կարող դա անել: Հասկանո՞ւմ եք: Բայց եթե միայն դիտեք, մնաք Հոգու մեջ, դուք կարող եք զգալ դա այնտեղ՝ այստեղից հեռու: Եվ, և վերադառնալով այստեղ՝ Սուրբ Գրքի մեջ, կտեսնեք, տեսնում եք, աշխարհի հիմնադրումից շատ առաջ:

222 Հիմա, Աստվածաշունչն ասում է, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Գառն էր: Այժմ շատ ուշադիր լսեք, եթե ձեզանից ոմանք վաղը չեն լինելու, որպեսզի մինչև վերջը լսեք: Աստվածաշունչն ասում է, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Գառն էր, որը մորթվեց աշխարհի հիմնադրումից առաջ: Ճի՞շտ է այդ: Ե՞րբ մորթվեց: Հիմնադրումից առաջ: Սա աշխարհն է, եթե այն կազմվել է արևից դուրս բերված մի փունջ տրոհված ատոմներից, դա դրանից առաջ էր: Ուրեմն նախքան գոնե մեկ ատոմ կտրոհվեր արևի մեջ, եթե դա արևի վրա ժայթքում է եղել, ուրեմն մինչև հարյուր բիլիոն, տրիլիոն, տրիլիոն տրիլիոն տարի առաջ մինչև առաջին լույսի շողի լինելը, Քրիստոսը մորթվեց: Երբ Աստծո մեծ միտքը կենտրոնանում է մի բանի վրա, ուրեմն դա ավարտված գործ է: Երբ Աստված ասաց. «Թող լինի», դա արդեն ավարտված էր: Անգամ եթե դրա համար պահանջվեր հարյուր բիլիոն տարի, որպեսզի ավարտվի, այն արդեն ավարտված էր, հենց որ Նա ասաց դա: «Եվ աշխարհի հիմնադրումից առաջ, երբ Գառնուկը մորթվեց,—նույն Աստվածաշունչը, նույն Հոգին գրեց և ասաց,— մեր անունները տեղադրված էին Գառան Կյանքի Գրքում աշխարհի ստեղծումից առաջ»:

223 Ուստի այն մարդը, ով գրել այս երգը. «Փառքի մեջ նոր անուն կա գրված», լավ մտքեր եք ունեցել, բայց նա սուրբգրային չէր: Հասկանո՞ւմ եք: Այդ անունը գրվել է Փառքի մեջ, երբ աշխարհը...նախքան աշխարհի սկիզբը: Երբ Գառնուկը մորթվեց, մեր անունները տեղադրված էին

Գառան Կյանքի Գրքում:

224 Թո՛ւյլ...թո՛ւյլ տվեք ինձ ընդամենը մեկ փոքրիկ սուրբգրային համար ձեզ տալ: Ընդամենը մեկ րոպե էլ կսպասե՞ք: Դա պարզապես գալիս է մտքիս մեջ: Կարծում եմ՝ անմիջապես կարող եմ դրան անդրադառնալ: Վստահ չեմ: Ցավում եմ, որ ձեզ այսքան երկար պահեցի, բայց ես ձեզ ասել էի, որ այն կտևի մինչև կեսգիշեր. այնքան էլ վատ չէ: Բայց ես, ես ուզում եմ միայն սա կարդալ, ընդամենը սուրբգրային մեկ համար:

Բացեք ինձ հետ Հռոմեացիների թուղթը, և ես ուզում եմ, որ ինձ հետ կարդաք սա: Հիմա, եկե՛ք տեսնենք, Հռոմեացիս, եթե կարողանամ գտնել դա, մոտավորապես այս մասերում է: Հիմա եկե՛ք վերցնենք Հռոմեացիս 8, և, և սկսենք Հռոմեացիս 8–րդ գլխի 28–րդ համարից: Ես ուզում եմ, որ հիմա ուղղակի աղոթքով ինձ հետ սա կարդաք: Լսե՛ք, թե ինչ է Աստված ասում այստեղ.

Գիտենք նաև, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից նրանց համար, ովքեր կանչված են ըստ Նրա նպատակի:

Որովհետև նրանց, ում սկզբից ճանաչեց...

225 Դա ձեզ տալիս է...Կարո՞ղ եք ինձ հետ կարդալ: «Որովհետև...»:

Որովհետև նրանց, ում սկզբից ճանաչեց, նույնպես նախասահմանեց (շատ լավ) *Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա շատ եղբայրների մեջ անդրանիկը լինի:*

Եվ նրանց, ում նախասահմանեց, նաև կանչեց, և ում կանչեց, նաև արդարացրեց, և ում արդարացրեց, նաև փառավորեց:

226 Աշխարհի հիմնադրումից առաջ: Երբ Աստված նայեց ցած...Հիմա, Աստված չթողեց Իր գրասենյակը և ասաց. «Դե, հիմա ես պատրաստվում եմ...Ո՛հ, ի՞նչ եք անելու հիմա»: Հասկանո՞ւմ եք: Չկա ոչինչ...

227 Հիշե՛ք. անարդարությունը, մեղքը, խեղաթյուրված արդարություն է: Սատանան չի կարող արարել: Բոլո՞րն են հասկանում դա: Դա այս եկեղեցու վարդապետությունն է: Սատանան չի կարող արարել: Նա կարող է խեղաթյուրել այն, ինչ ստեղծել է Աստված: Հիմա, ի՞նչ է աղավաղումը: Ահա, հիմնականում ձեզանից բոլորն էլ հասուն տեսք ունեն: Լսե՛ք սա: Մենք ամուսնացած մարդիկ ենք: Եվ դուք ամուսնացած տղամարդիկ, և դուք՝

ամուսնացած կանայք, կարող եք միասին ապրել որպես ամուսին և կին, և նրանք՝ կանայք, ճիշտ այնպես են, կարծես երբեք...Դուք կույսեր եք, քանի դեռ ապրում եք ձեր ամուսինների հետ: Դա ճիշտ է: Հիմա, դա իրավական է և օրինական, և դրա հետ ամեն ինչ կարգին է: Այդպես անելը Աստծուց է սահմանվել: Մեկ այլ կին կարող է քո կնոջ հետ նույն բանն անել՝ նրանցից մեկը, դու Աստծո առաջ արդար ես. իսկ նույն բանը մեկ այլ կնոջ հետ անելու դեպքում դու Աստծո առջև դատապարտվում ես մահվան: Ի՞նչ է սա: Աղավաղված արդարություն, հասկանում եք, աղավաղված արդարություն: Հիմա, սատանան չի կարող արարել, բայց նա խեղաթյուրում է այն, ինչ Աստված արդեն ստեղծել է:

228 Ի՞նչ է սուտը: Աղավաղված ճշմարտություն: Եթե մեկն ասեր. «Ո՛հ, նայի՛ր, դա շաբաթ օրը գիշերն էր՝ ժամը իններին, այո, Բիլլի Բրանհամը Ջեֆերսոնվիլում էր», ճիշտ է: «Անտցայի» սրահում էր, խմած», սուտ է: Ի՞նչ էր սա: Ես Ջեֆերսոնվիլում եմ եղել: Դա է ճիշտը: Դա էր ճիշտը ստի խեղաթյուրված: Հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ եմ ուզում ասել: Տեսե՛ք, սուտը խեղաթյուրում է ճիշտը: Կա մի բան է, որ ասում է, թե ես որտեղ եմ եղել: Հիմա, եթե ասվեր. «Եկեղեցում քարոզում էր», ճիշտ է: Դա է արդարությունը: Նա ճիշտն է ասել: «Պանդոկում խմում էր», սուտ է: Աղավաղված է. տեսնում եք, աղավաղված ճշմարտություն է: Հասկանո՞ւմ եք, ինչ եմ ուզում ասել: Ողջ անարդարությունը աղավաղված արդարություն է:

229 Ի՞նչ է մահը: Խեղաթյուրված կյանք: Հիվանդությո՞ւնը: Խեղաթյուրված առողջություն: Դու պետք է լավ, ուժեղ տղամարդ լինեիր: Շատ լավ: Եթե դու հիվանդոտ ես, ի՞նչ է սա: Քո առողջությունը խեղաթյուրվել է: Հասկանո՞ւմ եք: Ահա և վերջ այդ առումով: Ի՞նչ է սա: Դուք երիտասարդ, գեղեցիկ կանայք էիք. և ուժեղ, գեղեցիկ տղամարդիկ: Հիմա դուք կնճռոտվում եք, ծերանում: Ի՞նչ է սա: Կյանք, աղավաղված, հասկանում եք, նորից վերադառնում է: Հասկանո՞ւմ եք: Եվ այն պետք է վերադառնա: Տիրոջ Անունը օրհնյա՜լ լինի: Աստված խոստացել է հետ բերել դա: Եվ նույնքան հաստատ, որքան այն, որքան այն կա (մենք գիտենք, որ այն այստեղ է), նույնքան էլ հաստատ է, որ Աստված նորից հետ կբերի այն: Նա խոստացել է և երդվել, որ կանի դա: Ահա, թե ինչ է դա տալիս:

230 Հիմա, ինչպես, ինչ մարդիկ մենք պետք է լինենք:

Հիմա ուշադրություն դարձրեք, թե այս բաներն ինչպես են կատարվում: Հիմա, նրանց, ում առաջուց ճանաչեց, նաև կանչեց, և ում կանչեց, նաև արդարացրեց: Ե՞րբ: Աշխարհի հիմնադրումից առաջ, մինչև աշխարհի սկիզբը: Հիմա, եթե մենք կարողանայինք վերցնել սուրբգրային այս համարը և իրոք հիմնավորեինք այն, դա մեզանից ժամեր կպահանջեր, բայց, մենք, մենք չենք ուզում դա անել: Բայց այս ամբողջ անիրավությունն այստեղ, արդարությունը խեղաթյուրված է անիրավության: Ահա թե ինչ է անում սատանան:

Երբ դուք հասնում եք պատասխանատվության տարիքի, և գիտեք, որն է ճիշտը, որը՝ սխալ, դուք պետք է հրաժարվեք ձեր սխալից: Որովհետև դուք մեղքի մեջ եք ծնվել, և անօրենության մեջ եք ձևավորվել և եկել եք աշխարհ՝ սուտ խոսելով: Իրականում դուք, դուք ծնվել եք որպես սեռական ցանկություն, և հետո պետք է վերածնվեք, որպեսզի նոր Ծնունդ ստանաք երկինք մտնելու համար: Որովհետև այս տեսակի ծնունդը, որ դուք ունեք այստեղ...

231 Տեսնում եք, թե Եհովայի վկաները որքան են սխալվել այստեղ, կարծելով, որ նոր Ծնունդը դա մարմնի հարությունն է: Տեսնո՞ւմ եք, դա այդպես չի կարող լինել: Հասկանո՞ւմ եք: Դա պետք է լինի մի բան...

232 Դուք...դուք ժամանակի տարածության մեջ եք գտնվում: Միակ բանը, որ հավիտենական է, այն է, որ ոչ սկիզբ է ունեցել, ոչ էլ վերջ է ունենալու: Ցանկացած հավիտենական բան երբեք սկիզբ չի ունեցել, կամ էլ երբեք վերջ չի ունենա: Հասկանո՞ւմ եք: Դրա համար եթե դուք Աստծո մասնիկ եք, Սուրբ Հոգին, որ ձեր մեջ է երբեք սկիզբ չի ունեցել, կամ էլ երբեք վերջ չի ունենալու, և դուք հավիտենական եք այն Հոգով, որ ձեր մեջ է: Հասկանո՞ւմ եք: *Ագապե* սիրո պես, հետո այն գալիս *է ֆիլեո* սիրո, հետո իջնում է ցանկասիրության: Այն ուղղակի իջնում է ներքև և ներքև, այլասերվելով, մինչև այն վերածվում է ընդամենը մի խառնաշփոթի: Դե, միակ ճանապարհն է՝ Հիսուսն իջավ այստեղ այդ նույն սանդուղքով, որ վերցնի և բարձրացնի ամենացածրից նորից հետ տանի դեպ այդ ամենաբարձր ձևը. մահից դեպի կյանք, հիվանդությունից դեպի առողջություն, անարդարությունից դեպի արդարություն: Հասկանո՞ւմ եք: Նա Ամենաբարձրից դարձավ ամենացածրը, որպեսզի կարողանա ամենացածրից բերել դեպի ամենաբարձրը:

Նա դարձել է ես, որպեսզի ես Նրա շնորհքով կարողանամ դառնալ Նա՝ Փառքի մեջ Գահի ժառանգորդ: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել: Այդ բաները:

Հիմա, նայե՛ք: Մինչև այս աշխարհի ծնվելն այն ատոմներում, երբ Աստված տեսավ, թե ինչ է լինելու, հենց այնտեղ Նա տեսավ ինձ, տեսավ քեզ, տեսավ յուրաքանչյուր լուին, յուրաքանչյուր ճանճին, յուրաքանչյուր գորտին, յուքաքանչյուր մոծակին: Այն ամենը, ինչ լինելու է երկրի վրա, հենց այդ ժամանակ Նա տեսավ դա: Իհարկե, Նա տեսավ:

233 Հիմա, նա երբեք չասաց. «Ես կուղարկեմ Իմ Որդուն և թող Նա մեռնի, և միգուցե ինչ-որ մեկը կխղճա Նրան: Դա այնպիսի խղճուկ իրավիճակ է լինելու, որ գուցե հնարավոր է ինչ-որ մեկը փրկվի»:

234 Նա նախօրոք գիտեր, թե ով է փրկվելու: Այո՛, պարո՛ն: «Եսավին ատեցի, իսկ Հակոբին սիրեցի», նախքան որևէ մեկը հնարավորություն կունենար ապացուցելու իր ով լինելը, որովհետև Նա գիտեր, թե ինչ են նրանք: Նա գիտեր: Նա գիտի ամեն բան: Նա գիտեր, թե դուք ինչ եք անելու, մինչև ձեր ծնվելը, կամ երբ աշխարհը սկսվեց:

235 Հիմա նայե՛ք: Ինչպես դուք գիտեք, ես, ես, ես հրաձիք եմ: Ես, ես հրացաններ շատ եմ սիրում: Եվ մի կին Թեքսասում, կարծեմ դա Թեքսասում էր, ինձ «Swift» բերեց, 22 տրամաչափի «Swift»: Ես միշտ ուզեցել եմ այդպիսինը: Միշտ ուզեցել եմ փորձարկել այն: Դա ամենահզոր կրակոցով փոքրիկ հրացանն է: Նրա փամփուշտը 22 տրամաչափի է, երեք գրամանոց գնդակ է: Եվ դու կարող ես ձեռքով լիցքավորել այն: Հիմա, գործարանն ասում է. «Մի՛ արեք դա. չափազանց վտանգավոր է»: Սակայն դու ձեռքով կարող ես լիցքավորել այդ փամփուշտը թեև գնդակի արագությունն է 1500 մ վայրկյանում, և թերևս հրացանը կարող ես ձեռքերումդ պահել: 1500 մ արագությամբ, մեկուկես կիլոմետր վայրկյանում: Այլ կերպ ասած՝ երկու հարյուր յարդ հեռու բազեն նստած է: Դու կարող ես կրակել բազեին և տեսնել, թե փետուրներն ինչպես են թռնում, նախքան հրացանի հետհարումը զգալը: Տեսնո՞ւմ եք: Դա, բայց վերցրեք ատամքորիչի հարթ մասը և վերցրեք վարոդը և *ավելին* լցրեք մեջը, հենց այնքան, որքան որ կտեղավորվի փայտիկի վրա. և կրակեք արջամուկի վրա, որը նստած է այս շենքի վերջում, և ինքը կնստի ու կնայի ձեզ: Ինչո՞ւմն է բանը: Գնդակը քայքայվում է,

այն այնքան արագ է սլանում, որ ան-...Դուք կարող եք սավան կախել մեջտեղում՝ այստեղ և այնտեղ, և նույնիսկ ամենափոքրիկ փշուրը չեք տեսնի սավանի վրա: Այն ուղղակի վերածվում է. ոչ թե մոխրի՝ հրաբխային մոխրի, այլ ավելին է անցնում: Այն վերադառնում է սկզբնական թթուների, որոնք ստեղծել են պղինձն ու կապարը, որը նրանում է: Այն վերադառնում է այն վիճակին, որ եղել է հարյուր բիլիոն տարի առաջ: Հիմա, ահա փոքրիկ փամփուշտը, երեք գրամանոց փամփուշտը, ես այն պահում եմ իմ ձեռքում, իսկ հաջորդ վայրկյանին այն վերադառնում է այն վիճակին, ինչ որ եղել է հարյուր միլիոն տարի առաջ: Եվ եթե աշխարհը շարունակեր և՛ս հարյուր միլիոն տարի գոյատևել, այն կարող էր նորից գնդակ դառնալ, կարող էր հետ վերադառնալ, որովհետև այն կձևավորվեր պղինձի մեջ:

236 Հիմա տեսե՛ք, թե ինչ արեց Աստված, և այդ ժամանակ Դուք կսիրեք Նրան: Հետո կգնաք տուն և առավոտը մի քիչ երկար կքնեք: Եվ, և դուք, դուք կսիրեք Նրան ավելի քան երբևէ: Հիմա, Աստված Կապալառու է: Քանի՞սը դա գիտեն: Նա Ճինարար է: Ճատ լավ: Ճատ ուշադիր լսե՛ք: Հիմա, Աստված այնտեղ, կամ, նրանք ասում են... Մենք հիմա վերցնելու ենք դրա ժամանակագրական գաղափարը: Աստված հարյուր բիլիոն տարի առաջ, երբ պատրաստվում էր ստեղծել աշխարհը, դե, երբ նոր սկսեց: Հիմա, Նա ուներ...Նա Իր մտքում մի գաղափար ուներ:

237 Հիմա դուք կասեք. «Եթե Նա այնքան հզոր է, Բրանհամ եղբայր, այդ դեպքում ինչպե՞ս թույլ տվեց, որ սատանան մեղք գործի»: Մինչև սատանայի ստեղծելը Նա գիտեր, որ ինքը սատանա է լինելու: Փա՛ռք: Ես ինձ հիմա կրոնավոր եմ զգում: Ո՛հ, Աստված իմ: Մինչև սատանայի ստեղծելը, Նա գիտեր, որ ինքը սատանա է լինելու: Դուք հիմա կհարցնեք. «Ինչպե՞ս թե»: Դուք ասում եք. «Այդ դեպքում ինչո՞ւ Նա թույլ տվեց, որ ինքը սատանա լինի»: Որպեսզի ապացուցվի, որ Նա Աստված է: Դրա համար Նա արեց դա: «Ինչո՞ւ հայտնվեց անարդարը»: Ինչո՞ւ:

238 Ո՞վ հայտնվեց առաջինը՝ Փրկի՞չը, թե՞ մեղավորը: Ո՞վ հայտնվեց առաջինը: Փրկիչը: Ո՞վ հայտնվեց առաջինը՝ Բժի՞շկը, թե՞ հիվանդը: Ինչո՞ւ թույլ տրվեց, որ մեղավոր լինի: Որովհետև Նրա հատկություններից մեկը Փրկիչ է: Եթե մեղավոր չլիներ, Նա երբեք չէր ճանաչվի որպես Փրկիչ: Ալելո՛ւիա: Նա կարող է այնպես անել, որ ամեն բան գալարվի Իր փառքի շուրջ: «Մի՞թե բրուտը կարող

է ասել...Կամ կավը կարող է ասել բրուտին. «Ինչո՞ւ ես ինձ այսպես ստեղծել»: Ո՞վ է ղեկին: Ո՞ւմ մոտ է կավը: Ո՞ւմ ձեռքերն են դրա մեջ: Պողոսն ասում է. «Ո՛հ, հիմար, մի՞թե Նա չասաց, որ Ինքը այս նպատակի համար բարձրացրեց Փարավոնին»: Անկասկած: Նա գիտեր դա: Մինչև աշխարհի լինելը, Նա գիտեր, թե ով ինչ է լինելու: Եվ Նա թույլ տվեց, որ մեղք լինի, որպեսզի կարողանա Փրկիչ լինել: Նա թույլ տվեց, որ հիվանդություն լինի, որպեսզի կարողանա Բժիշկ լինել: Նա թույլ տվեց, որ ատելություն լինի, որպեսզի կարողանա Սեր լինել: Իհարկե Նա թույլ տվեց: Նա Աստված է, և դա Նրա հատկություններն են: Եվ Նրան պետք է, որ ինչ-որ բան լինի, որպեսզի դրսևորի Իր հատկությունները:

239 Ինչպե՞ս կիմանայիք, որ գիշեր կա, ինչպե՞ս կիմանայիք, որ որևէ բան է եղել: Եթե օրը լիներ միայն լուսավոր, ինչպե՞ս կիամանայիք, որ գիշեր կա: Գիշերը գոյություն ունի ցերեկային լույսն ապացուցելու համար: Անկասկած: Ամեն: Տեսնո՞ւմ եք, թե ինչ արեց Նա:

240 Բայց երբ Ինքն այնտեղ էր, աշխահրի հիմնադրումից առաջ, նախքան այս Արեգակը վերցնելը և այս աստղի շուրջ պտտեցնելը, որ վրա ապրում ենք մենք՝ Երկրի վրա, և ձևավորեց դա այստեղ արևի միջոցով և տեղադրեց դա արևի շուրջ: Ենթադրենք՝ *ահա* արևը: Նա ձևավորեց այն *այս* կողմում և թողեց որ կախվի այնտեղ հարույրավոր բիլիոն տարիներ: Ի՞նչ էր Նա ստեղծում: Գազեր: Նա շրջեց *այս* կողմ, և ինչ-որ բան էլի արեց: Ի՞նչ էր Նա անում այնտեղ: Պոտաշ: Նա շրջեց *այս* կողմ, և ի՞նչ էր անում Նա այնտեղ: Կալցիում էր ստեղծում: Ի՞նչ էր Նա անում: Ինձ և քեզ էր ստեղծում: Ի՞նչ էր Նա անում: Ինչպես կապալառուն, որ ամեն բան շարում է երկուսը չորսի, երկուսն ութի վրա, իր ծածկը, իր երեսպատումը, նա գիտեր, թե քանի շենք է կառուցելու: Մենք կազմված ենք երկրի տասնվեց տարրերից, և Նա ստեղծում էր մեզ բոլորիս, և դնում էր այնտեղ նախքան աշխարհի հայտնվելը: Եվ Նա...Երևի այդ ժամանակ դա երկար է տևել. ես չգիտեմ, թե ինչ է դա եղել: Ինչի՞ համար էր Նա ստեղծում ոսկին, պղինձը, արույրը, ջուրը, և մնացած բոլոր բաները: Նա Կապալառու է: Նա կարող է...Ճինարարը, Նա ամեն բան դնում էր այնտեղ, կտրած ձևած ամեն բան ուներ: Երբ Նա ամեն բան ստեղծեց, դա պարզապես հրաբխային հզոր մի մեծ ժայթքում էր: Նա թողեց, որ այդ հին հրաբուխներն իշխեն այնտեղ

հարյուրավոր միլիոն տարիներ՝ կալցիում ստեղծելու համար: Ի՞նչ է դա: Սա ձեր մասնիկն է:

241 Եվ հետո, նախքան երկրի վրա կյանքի փոքրիկ մասնիկի հայտնվելը մեր մարմինները դրված էին այստեղ: Ալելո՛ւիա: Նախքան խոնավության մի կաթիլի ընկնելը երկրի վրա, մենք այստեղ դրված էինք: Երբ Ադամը Եդեմի պարտեզում այստեղ-այնտեղ ման էր գալիս, ես դրված էի այստեղ: Ամե՛ն: Այո՛, պարո՛ն: Ո՛հ, փա՛ռք: Երբ Քերովբեները, առավոտյան աստղերը միասին երգում էին, և Աստծո որդիները ուրախությամբ աղաղակում էին, ես դրված էի այստեղ՝ սպասելով կյանքի շնչի գալուն: Ես այստեղ էի: Նա ստեղծեց ինձ այստեղ, իմ մարմինը դրված էր այստեղ: Այո՛, պարո՛ն: Եթե այստեղ չլիներ, ուրեմն որտեղի՞ց հայտնվեց: Ըհ՞ը: Ինչպե՞ս այն հայտնվեց այստեղ: Աստված դրեց այն այստեղ: Աստված ստեղծեց այն: Մենք կազմված ենք տասնվեց տարրերից՝ նավթ, պոտաշ, տիեզերային լույս և էլի ինչ-որ բաներից: Տեսնում եք, մենք դրված էինք այստեղ:

242 Հետո ի՞նչ տեղի ունեցավ: Հետո Աստված ասաց Սուրբ Հոգուն, մենք ուղղակի կվերցնենք խորհրդանշական ձևով. «Հիմա գնա և սիրո հարաբերություններ ստեղծիր այդ աշխարհի հետ: Որովհետև Ես սեր եմ, և Դու Իմ արտադրությունն ես, դրա համար հիմա գնա և սիրո հարաբերություններ ստեղծիր աշխարհի հետ»: Եվ հսկայական Սուրբ Հոգին, մենք կարծում ենք, եկավ այստեղ, պարզապես խորհրդանշական ձևով: Դա այդպես չէր: Որովհետև Սուրբ Հոգի և Աստվածը նույն նպատակն է, նույն նպատակն է, Անձնավորությունն է: Ներեցեք: Եվ պարզապես ասենք, որ Նա Իր թևերը տարածեց Երկրի շուրջ և սկսեց թուխս նստել: Ի՞նչ էր Նա թխսում: Ինչպես հավն է հավաքում իր ծագերին, կչկչում է, սեր է ցուցաբերում. «Կո-կո-կո» Օ՛հ:

243 «Ո՛հ, կյանք, դուրս արի,— բղավեց Նա: Նա նայեց շուրջը: «Ես գեղեցկություն եմ ուզում այս երկրի վրա: Լո՛ւյս, դուրս արի՛»: Սուրբ Հոգին շարժում է: Եվ երբ Նա արեց, ես տեսնում եմ. առու է իջնում բլուրից այն կողմ, այնտեղից մի քիչ կալցիում է թափվում և խառնվում պոտաշի հետ: Ինչի՞ է դա վերածվում: «Կյա՛նք դուրս արի՛»: Եվ Զատկի փոքրիկ ծաղիկը ժայռի տակից հանում է իր գլուխը: «Արի՛ այստեղ, Հա՛յր, նայի՛ր դրան»:

244 «Դա լավ տեսք ունի: Պարզապես շարունակիր դուրս բերել»: Նա դուրս բերեց ծաղիկներ: Նա դուրս

բերեց ամբողջ բուսականությունը, կենդանան կյանքը: Թռչունները դուրս թռան փոշու միջից: Որոշ ժամանակ անց հայտնվում են տղամարդը և կինը. հայտնվում է տղամարդը, և նա թե՛ կին էր և թե՛ տղամարդ: Հերմաֆրոդիտ չէր: Պարզապես, պարզապես նրա մեջ էր, կար կնոջ հոգին:

245 Եկե՛ք օրինակ վերցնենք մի տղամարդու, որը կնանման է, նրա հետ կարող է ամեն բան կարգին լինել, լավ հավասարակշռված լինի, բայց այնտեղ ինչ-որ բան այնպես չէ: Եվ վերցրեք մի կնոջ, ով ուզում է կտրել իր մազերը, կոմբինիզոն հագնել, դուրս է գալիս այստեղից և ասում. «Աստծո սիրուն, այստեղ լսեք»: Ինչ-որ բան այն չէ: Կնոջ մոտ կանացի հոգի է, տղամարդը մոտ՝ տղամարդկային: Մենք դա գիտենք: Դուք էլ գիտեք: Ճի՞շտ տեսք ունի կինը, որը փորձում է լինել, գործել տղամարդու նման:

246 Այո, մի անգամ ինձ հետ նման դեպք եղել է, ես խաղապահ էի այստեղ, և ես ավտոբուս նստեցի և գնում էի այնտեղ, և զրուցելով ձեռքով ոտքին էի խփում, և ես չգիտեի, որ նա կին է: Նա կրում էր զոդողի գլխարկ և *այդպիսի* մեծ պաշտպանող ակնոցներ, իսկ ես նստած էի հետևում և նա ինչ-որ բան էր պատմում այն մասին, թե ինչ-որ մեկն ինչ է արել: Նա ասաց. «Գիտես,— ասաց,— անցած գիշեր»,— նրա տեսքն այնքան կոպիտ էր, որքան հնարավոր է պատկերացնել, ծխախոտ էր ծխում: Նա ասաց. «Անցած գիշեր, ասում եմ ձեզ, այդ տղան վերևում սայթաքեց: Նա ասաց. «Ո՛հ Աստված իմ»: Նա այնտեղով սահում էր ցած»: Ասաց. «Ես կյանքում երբեք այդքան շատ չէի ծիծաղել»:

247 Եվ ես *այդպես* ծիծաղում էի, գիտեք: Ես ասացի. «Տղա, այդպես էլ եղե՞լ է»: Նստած այնպեղ այդպես զրուցում էինք: Եվ եթե չիաներ այդ գլխարկը և չցնցեր մազերը, իսկ կատարին մազերի փունջ կար, կնոջ նման: Ես կյանքում երբեք ինձ այդքան անհարմար չէի զգացել: Ես, ես ասացի. «Դո՞ւք կին եք»:

Նա ասաց. «Իհարկե»:

248 Ես ասացի. «Ներեցեք»: Ես նման բան երբեք չէի տեսել: Հիմա, դա, դա ճշմարտություն է:

249 Մի անգամ ես տեսա հայտարարություն, որը ցնցեց ինձ: Մեծ տարեռով գրություն կար. «Տիկնայք պատրաստ են հագուստներ կրելու»: Ես մտածեցի. «Փառք Աստծուն

դրա համար»: Հասկանո՞ւմ եք: Բայց պարզվեց, որ դա մի տեսակ հագուստ էր, որը նրանք արդեն կարած ունեին, գիտեք: Իսկ ես, ես մտածում էի, որ նրանք իրոք հագնվելու են: Ես իրոք այդպես մտածեցի: Ասվեց. «Տիկնայք պատրաստ են հագուստներ կրելու»: Ես ասացի. «Փա՜ռք Աստծուն նրանց համար: Դա լավ է: Դա, ես անշուշտ, շնորհակալ եմ Տիրոջից դրա համար»: Բայց տեսեք, դա մի տեսակ հագուստ էր, որը նրանք արդեն կարած ունեին: Ինչ-որ ծիծաղելի բան պետք է լիներ, չէ՞, այս երկրում: Շատ լավ:

250 Հետո, երբ Ադամը հայտնվեց: Իսկ հետո, Ադամը միայնակ տեսք ուներ, դրա համար Նա Ադամից մի կող վերցրեց և ստեղծեց Եվային, կողմնակի արտադրանք նրա համար: Նա ստեղծեց…Նա Ադամից հանեց իգական հոգին և դրեց կնոջ մեջ՝ սիրո հոգին, կանացի, բարի, մեղմ հոգին: Իսկ արական հոգին թողեց Ադամի մեջ: Հիմա, եթե որևէ բան այլ է, ուրեմն ինչ-որ տեղ խեղաթյուրում կա: Հիմա, իսկ այդ ժամանակ նրանք երկուսը մեկ էին:

251 Ավատրելուց առաջ եկե՛ք մի փոքր դրամա վերցնել: Ահա գալիս է…Ահա Ադամը Եվային թևանցուկ արեց և նրանք գնացին: Ես պարզապես սիրում եմ այս պատմությունը: Եվ նրանք զբոսնում են, հասկանում եք: Եվան ասում է. «Ո՛հ, սիրելիս, ուզում ես ասել, որ դո՞ւ ես դա արել»:

«Այո, ես եմ դրա անունը դրել»:

«Իսկ ի՞նչ անուն ես տվել դրան»:

«Դա ձի է կոչվում: Ը՛ը»:

«Դա ի՞նչ է»:

«Դա կով է: Ը՛ը»:

«Դու ես դրե՞լ դրա անունը»:

«Այո: Ը՛ը»:

252 «Ինչպե՞ս ես անվանել դա այնտեղ, այդ երկուսին այնտեղ նստած գլուխներն իրար հենված»:

«Դրանք աղունիկներ են»:

253 «Ո՛հ, հասկանում եմ: Հասկանում եմ»: Եվ այդպես շարունակվում է: «Իսկ այստեղ ի՞նչ է»:

«Ես սրան՝ *այս* և նրան՝ այն անունն եմ դրել»:

254 Եվ. «Օ, ես տեսնում եմ: Ը՛հը: Դա գեղեցիկ է»: Եվ մի առյուծ մոնչում է: «Ի՞նչ ես դա անվանել»:

«Դա առյուծ է»։

«*Սա* ի՞նչ է»։

«Վագր»։

255 Եվ, ոհ, նման է...«Ո՛հ, տեսնում եմ»։ Ճիշտ այնպես ինչպես կատուները, գիտեք, և մլավում են շուրջը։

256 Այսպիսով, որոշ ժամանակ անց նա նայում է իր շուրջը և ասում. «Սիրելի՛ս նայի՛ր այնտեղ, արևը մայր է մտնում։ Եկեղեցի գնալու ժամանակն է»։

Դուք գիտեք, որ մայրամուտի հետ կապված ինչ–որ առանձնահատուկ բան կա, դու ուզում ես երկրպագություն անել։ Եթե այդ երեկո եկեղեցի չես գնացել, ուզում ես մտնել սենյակ և Աստվածաշունչ կարդալ։ Քանիսի՞ն է դուր գալիս այդպես անել, մեկուսանալ։ Տեսնո՞ւմ եք։ Դա ուղղակի մարդու մեջ դրված է այդպես։ Պետք է դա անեք։

«Եկեղեցի գնալու ժանամակն է»։

257 Հիմա, նրանք չասացին. «Հիմա, մի րոպե սպասիր, Ջոնսնը պատկանում է Ասամբլեաներին, իսկ մենք պատկանում ենք...»։ Ոչ, այդ ժամանակ այդպիսի բան չկար, ուստի նրանք պարզապես գնացին։ Նրանք եկեղեցի չունեին, այդպիսի հարմարավետ նստարաններ՝ նստելու համար։ Նրանք պարզապես գնացին անտառների հսկայական մի մեծ մայր տաճարի տակ և ծնկի եկան։

258 Եվ այդ Լույսապսակը կախված էր անտեղ՝ թփերի մեջ։ Հասկանո՞ւմ եք։ Ես լսում եմ մի Ձայն, որ խոսում է՝ ասելով. «Իմ զավակներին դո՞ւր եկավ երկրի վրա այս օրը, որ Տերը՝ ձեր Աստվածը, տվել է ձեզ»։

259 «Այո, Տեր, մեզ դուր եկավ այսօր»։ «Այդպես չէ՞ սիրելի՛ս»։

260 «Այո։ Այո, սիելիս, այդպես է»։ «Տե՛ր, մենք անշուշտ գնահատում ենք Քեզ։ Հիմա ես պառկում եմ քնելու»։ Հասկանո՞ւմ եք։ Եվ նա դնում է իր ուժեղ ձեռքը և կինը պառկում է նրա ձեռքին, և պառկեցնում է վագրին ու առյուծին, և բոլորը պառկում են քնելու. այդպես խախաղ։

261 Այսպիսով Աստված իջնում է ցած և իջեցնում է, ոհ, մի խումբ Հրեշտակներ, Գաբրիելին, երկնային Իր արարչությունը։ Նրանք իջնում են ցած, ոտքերի թաթերի վրա զգուշությամբ մտնում են ննջասենյակ, նայում շուրջը։ Գաբրիելն ասում է. «Արի այստեղ, Հա՛յր։ Արի

այստեղ։ Նայի՛ր։ Ահա նա։ Ահա, ահա Քո զավակները պառկած են այստեղ»։

262 Այստեղ ձեզանից քանի՞սն են երբևէ, մայրեր, հայրիկի հետ միասին մոտեցել մահճակալին և նայել փոքրիկ տղային, փոքրիկ աղջկան և իրար հիշեցրել. «Նա *այս* կամ *այն* կողմից քեզ նման չէ»։ Երբևիցէ արե՞լ եք դա։ Ես հաճախ եմ գնում և ասում Մեդային, ասում եմ Հովսեփի մասին։ Նա ասում է. «Բիլլ, նրա ճակատը քոնի պես բարձր է»։

263 «Այո։ Բայց, Մե՛դա, նրա աչքերը քոնի պես մեծ են»։ Ինչո՞ւ։ Որովհետև նա մի մասն է մեր արտ-...։ Նա, նա մեր միության պտուղն է։

264 Հիմա, և Հայ՛րն ասաց, կարող էր ասել նաև սրա մասին։ Ասաց. «Գիտես...»։ Եվ Գաբրիելն ասաց. «Գիտես, նա Քեզ նման է»։ Ահա, թե ինչ տեսք ունի Աստված. նայեք ձեզ։ Ահա թե ինչ տեսք ունի Աստված։ Նա նման է ձեզ։ Դուք նրա ժառանգն եք։ Քանի՞սը դա գիտեն։ Տեսնո՞ւմ եք։

265 Հիմա նայե՛ք։ Ո՞րն է կյանքի ցածրագույն ձևը, որ մենք ունենք։ Գորտը։ Ո՞րն է կյանքի բարձրագույն ձևը։ Մարդը։ Անկասկած։ Եվ ո՞րն է ամենաբարձ ձևը։ Այն պարզապես շարունակում էր գալ ամենացածրից վերև՝ գորտից դեպի *այս* և *այն*, և դեպի թռչուն, մինչև այսպես շարունակ՝ կյանքի ավելի բարձր ձևերը, մինչև հասավ այն բարձրագույն ձևին, որ կարող էր գալ, հետո այն ստեղծվեց Աստծո պատկերով։ Ահա խնդրեմ։ Իսկ կինը Աստծո պատկերով ստեղծված չի եղել, այլ տղամարդու պատկերով։ Հասկանո՞ւմ եք։

Հիմա, ահա նրանք։ Եվ Աստված նայեց նրանց և ասաց. «Այո, նրանք, նրանք հրաշալի տեսք ունեն»։

266 Ի՞նչ էր դա, եղբա՛յր։ Նրանք երբեք չպետք է մեռնեին։ Դա կալցիումի առաջին բուռն էր, առաջին պոտաշը, և ամեն բան այդպես սկսվեց։ Մի՞թե սա գեղեցիկ չէ։ Բայց մեղքը հայտնվեց և փչացրեց պատկերը։ Հիմա, արդյոք Աստված...Ի՞նչ Աստված թույլ տվեց անել։ Ինչո՞ւ Նա թույլ տվեց, որ լինի այնպես, ինչպես քիչ առաջ խոսում էինք այդ մասին։ Նա թույլ տվեց դա, որպեսզի կարողանա ապացուցել, որ Ինքը Փրկիչ է։ Նա արեց դա։ Նա թույլ տվեց, որ հիվանդություն լինի, որպեսզի կարողանա ապացուցել, որ Ինքը Բժիշկ է։ Նա թույլ տվեց, որ մահ լինի, որպեզի ապացուցի, որ Նա Կյանք է։ Հասկանո՞ւմ եք։ Նա թույլ տվեց, որ այս բոլոր վատ բաները տեղի

ունենան, որպեսզի ապացուցի, որ Նա բարի էր, ինչը, որ Էր: Մենք...

267 Խոսելու ենք այն մասին, որ երգելու եք փրկագնման պատմություն: Ինչու, եղբայր, երբ Հիսուսը գա, այս, այս Եկեղեցին կանգնելու է այս երկրի եզրագծի վրա և երգելու է փրկագնման պատմություններ, երբ Հրեշտակները կխոնարհեն իրենց գլուխները, չիմանալով, թե ինչի մասին ենք մենք խոսում: Դե, նրանք երբեք կորսված չեն եղել: Նրանք չգիտեն, թե մենք ինչի միջով ենք անցել: Մենք գիտենք, թե ինչ է նշանակում կորսված և գտնված լինելը: Ո՛հ, մենք կարող ենք աղաղակել Նրա գովասանքը: Նա Փրկիչ չէ նրանց համար: Նրանք երբեք որևէ փրկության կարիք չեն ունեցել: Նա նրանց համար Բժիշկ չի եղել: Ոչ: Փա՜ռք: Նա, Նա նրանց համար Կյանք չի: Անկասկած, ոչ: Նրանք երբեք մեռած չեն եղել մեղքերի և հանցանքների մեջ: Մենք եղել ենք, և կենդանացել ենք: Ահա խնդրեմ: Ի՞նչ ենք ասելու՝ հանելով մեր պսակները. «Ո՛հ, դու պատվելի *Այսինչ-այնինչ ես*»: Ոչ՛, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ: Ողջ փառքը Նրան է: Ահա: Ահա խնդրեմ: Այդ ժամանակ մենք կպատմենք պատմությունն այն մասին, թե ինչպես ենք հաղթել: Ժամանակի ընթացքում մենք ավելի լավ դա կհասկանանք:

268 Հետո, այնտեղ՝ դրանում, ի՞նչ պատահեց: Արդյոք Աստված այդ ժամանակ պարզապես ասա՞ց. «Դե, ես պարզապես կվերցնեմ և կոչնչացնեմ Իմ ամբողջ պոտաշն ու կալցիումը: Այս ամենը կվերածվի ավերակի»?: Ո՛չ, ո՛չ: Նա գիտեր, որ այդպես է լինելու:

Հիմա, եթե Սուրբ Հոգին ինձ դարձրել է այն, ինչ կամ, և ես ուտում եմ այն կերակուրը և վերադառնում եմ իմ մարմնի մեջ և կառուցում եմ այն, ինչ հիմա եմ: Հիմա, այնուամենայնիվ, ինձ ձև է տրված: Ամեն պատկեր, որ Աստված տեսավ, աշխարհի հիմնադրումից առաջ, հասունանում է, իրագործվում է: Հասկանո՞ւմ եք: Այն կնոջից դուրս եկավ, ինչպես որ Նա ասաց, որ լինելու է. հաջորդ անգամ այն Աստծուց է գալիս: Այն անգամ դա կնոջ միջոցով եկավ, այս անգամ Մարդու միջոցով է գալիս: Հասկանո՞ւմ եք: Այն անգամ եկավ սեռական ցանկության միջոցով. այս անգամ Աստծո ասված Խոսքի միջոցով: Հասկանո՞ւմ եք:

269 Կա՞ հիմա որևէ բան, որ կարող է ինձ վնասել: Ո՛չ, պարո՛ն: Չկա ոչինչ, որ կարող է ինձ վնասել: Պողոսն ասում է. «Ո՛չ ներկա և ո՛չ էլ գալիք բաները, ո՛չ

հիվանդություն, ո՛չ մահ, ոչինչ չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ Քրիստոսի մեջ է»։ Չկա ոչինչ, որ կարողանա մեզ բաժանել։

270 Ինչպես արդեն պատմել եմ փոքրիկ պատմությունը։ Ես համարյա ճաղատ եմ, ամբողջությանբ ճաղատ։ Եվ վերջերս սանրում էի այդ մի քանի մազը, կինս ասաց. «Բիլլի, դու գրեթե ճաղատ ես»։

Ես ասացի. «Բայց ես ոչ մի մազ չեմ կորցրել»։

Նա ասաց. «Ուրեմն որտե՞ղ են դրանք»։

271 Ես ասացի. «Որտե՞ղ էին դրանք մինչև հայտնվելը»։ Հասկանո՞ւմ եք։ «Դրանք միշտ այնտեղ են եղել, մինչև իմ գլխին հայտնվելը»։

Հիմա, մի ժամանակ, հարյուր տարի առաջ, այդ մազերը այստեղ նույնիսկ չկար, բայց դրանք այստեղ՝ հողի մեջ էին։ Ճի՞շտ է այդ։ Հետո հիսուն տարի առաջ դրանք սկսեցին աճել իմ գլխի վրա։ Որտեղի՞ց դրանք հայտնվեցին։ Հողից։ Իսկ հիմա դրանք վերադառնում են այնտեղ, որտեղ որ էին։ Ճի՞շտ է այդ։ Դրանք չկային, հետո կային, իսկ այժմ չկան։ Ինչ է սա։ Ի՞նչը դարձրեց նրանց այն, ինչ են։ Աստված։ Ահա Նա։ Նա նկարը նկարեց և ասաց. «Ես այդպիսին եմ դա ուզում»։

272 «Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը։ Գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթանակը»։ Օրերից մի օր դուք կարող եք ինձ թաղել այստեղ։ Ես չգիտեմ։ Բայց, եղբա՛յր, ես չեմ մեռնելու։ Ասում եմ ձեզ։ Ո՛չ, պարո՛ն։ Ո՛հ։

Մենք հարություն կառնենք (ալելո՛ւիա),
Մենք հարություն կառնենք։
Հարության օրը,
Երբ մահվան բոլոր կապանքները
կքանդվեն,
Մենք հարություն կառնենք (ալելո՛ւիա),
մենք հարություն կառնենք։

Ոչինչ ինձ չի կարող պահել հարությունից։ Ամբողջ դժոխքում բավական դևեր չկան, որ կարողանան պահել ինձ հարությունից։ Ոչ մի տեղ բավական ոչինչ չկա, որ կարողանա ինձ պահել հարությունից։ Ես Աստծո խոստումն ունեմ։ Ես Սուրբ Հոգին ունեմ։ Ես Զոե ունեմ, Աստծո հավիտենական կյանքը, որ հանգչում է այստեղ։ Այս հին մարմինը դուրս կհանվի այստեղից, Աստված ինձ կհանի հողից։ Եվ եթե Նա, Ով ինձ հանեց հողից…

273 Երբ հասունանում եմ, հիմա, ամեն անգամ եկեղեցու դողանջները լսելիս Ինչ-որ բան խոսում է ինձ հետ, փոքրիկ տղա: Հրեշտակը թփի միջից խոսեց՝ ասելով. «Երբեք չծխես և չխմես: Ես քեզ համար գործ ունեմ: Չապականես մարմինդ, անբարոյական պահվածք չունենաս կանանց հետ և այլն: Դու, Ես քեզ համար բան ունեմ անելու, երբ մեծանաս»:

«Ո՞վ ես Դու: Ո՞վ ես Դու»:

274 «Ավելի ուշ դու ավելի շատ կիմանաս դրա մասին»: Որոշ ժամանակ անց ահա Նա գալիս է: Մկրտության ժամանակ կախվում է այնտեղ: Նա ցույց է տալիս Իրեն: Հռչակում է Իրեն: Նա պատասխանում է: Ես տեսնում եմ Նրան կանգնած այնտեղ, ամենուր, ամեն տեղ:

275 Ինչպե՞ս եք դուք պատրաստվում...եթե Նա ինձ ստեղծել է այնպիսին, ինչպիսին որ կամ, առանց ընտրության որևէ հնարավորության...? Ես երբեք հետ չեմ գնացել և ասել. «Հիմա, Չարլի Բարնհամ, դու ամուսնացիր Էլլա Հարվիի հետ և ինձ դուրս բեր երկրի միջից»: Ո՛չ, պարո՛ն: Ես երբեք ոչ մի հմարավորություն չեմ ունեցել: Աստված է դա արել:

Եվ եթե Նա ինձ դարձրել է այն, ինչ կամ, առանց ընտրության. որքան ավելին, երբ Սուրբ Հոգին գալիս է ինձ վրա, որ հովանի լինի, և ես ասում եմ. «Այո, Տե՛ր, Դու ես իմ Արարիչը: Ես սիրում եմ Քեզ և ընդունում եմ Քեզ որպես իմ Փրկիչ»: Ինչպե՞ս եք դուք պատրաստվում պահել ինձ հողում: Դա պարզապես հնարավոր չէ, եղբա՛յր: Դա պարզապես հնարավոր չէ:

276 Աստված չի ստեղծել այս կալցիումից կամ պոտաշից կամ որևէ բանից մի կտոր, որ երբևէ ապարդյուն վատնվի: «Բոլոր նրանք, ում Հայրը տվել է Ինձ աշխարհի հիմնադրումից առաջ, կգան Ինձ մոտ»: Վա՜ւ: Ես ուզում եմ բղավել, անկեղծ եմ ասում: «Բոլոր նրանք, ում Հայրը տվել է Ինձ, կգան Ինձ մոտ, և նրանցից ոչ ոք չի կորսվի, այլ Ես նրանց դարձյալ հարություն կտամ վերջին օրը»: Ես լսեցի, թե ինչպես Նա կանչեց, երբ եկա Նրա մոտ: Ինչպե՞ս նրանք կարող են ինձ պահել երկրի փոշու մեջ: Աշխարհում չկան բավական հուղարկավորողներ, ովքեր բահով հարվածեն դեմքիս և ինձ պահեն երկրի փոշու մեջ: Ես մի օր հարություն կառնեմ և կկանգնեմ Նրա նմանությամբ, Իր արյունով լվացված և Իր Հոգուց ծնված: Ալելո՜ւիա: Ունեցեք բոլոր հարանվանությունները, որոնք ուզում եք, ես Հիսուսին եմ ընտրում: Ամե՛ն:

277 Ապահովագրության գործակալը ինձ մոտ եկավ։ Վիլմեր Սնայդեր՝ իմ լավ ընկերներից մեկն է։ Նա ասաց. «Բի՛լլի, ես ուզում եմ քեզ ապահովագրության վկայագիր վաճառեմ»։

278 Ես ասացի. «Ես արդեն ունեմ այն»։ (Կինս այսպես նայեց, կարծես թե ուզում էր ասել. «Ի՞նչ ես ստում, տղա»)։

Ասաց. «Դուք ապահովագրություն ունե՞ք»։

Ես ասացի. «Այո՛, պարո՛ն»։

Ասաց. «Ո՞ր ընկերությունից է։ Ի՞նչ է դա»։

279 Ես ասացի. «Օրհնյալ ապահովագրություն, Հիսուսն իմն է, ո՛հ, ի՜նչ կանխավայելում է Աստվածային փառքի։ Փրկության ժառանգորդ, Աստծո կողմից գնված, Իր Հոգուց ծնված, Նրա արյամբ լվացած»։

280 Նա ասաց. «Դա լավ է, Բիլլի, բայց դա քեզ գերեզմանոց չի հասցնի»։

281 Ես ասացի. «Այն դուրս կբերի ինձ»։ Ալելո՜ւիա։ Ինձ չի մտահոգում այնտեղ ընկնելը. այն դուրս է հանում։

282 Ուստի, ես ապահովագրություն ունեմ, որն ինձ ասում է. «Ես կբարձրացնեմ։ Բոլոր նրանք, ում Հայրը տվել է Ինձ՝ Իմն են»։ Ինձ համար կարևոր չէ, թե ինչ է արել իմ հայրը, թե ինչ է արել իմ մայրը, կամ թե ինչ է եղել։ «Այն ամենը, ինչ Հայրը տալիս է Ինձ, Ինձ մոտ կգա, և ոչ ոք չի կարող գալ, եթե Իմ Հայրը նրան չքաշի»։ Ալելո՜ւիա։ Ինչի՞ համար Նա քաշեց նրանց։ «Ես նրանց նախապես ճանաչել եմ աշխարհի հիմնադրումից առաջ։ Երբ Ես Գառնուկին մորթեցի, նրան մորթեցի Նրա հետ»։ Ամե՛ն։ «Ես նախասահմանեցի Եկեղեցին»։ Ո՞վ ունի նախասահմանություն։ Եկեղեցին։ Ինչպե՞ս եք դուք մտնում Եկեղեցի։ «Բոլորս մեկ Հոգով մեկ Մարմին լինելու մկրտվեցինք»։ Աշխարհի հիմնադրումից առաջ Նա գիտեր, որ մենք կլինենք այնտեղ։ «Եվ նրանց, ում առաջուց ճանաչեց, նաև կանչեց, և ում կանչեց, նաև արդարացրեց, և ում արդարացրեց, նաև փառավորեց»։

283 Աստծո Գրքերում Նա արդեն ասել է, որ Ինքը կդիմավորի ինձ հենց այնտեղ։ Դժոխքի բոլոր դևերը չեն կարող պահել նրանց ինչ-որ տեղ, որպեսզի նրանք կարողանան գալ հենց այնտեղ, որովհետև Աստված արդեն ասել է այդպես, և դա բավարար է։ Եթե հարյուր բիլիոն տարի նախքան աշխարհի ձևավորումը, առավոտյան աստղերը միասին երգում էին, ու Աստծո որդիները ցնցությամբ աղաղակում էին,

նախքան աշխարհի հիմնադրումը, տեսնում եք, նախքան հիմնա-..., և այդ Հրեշտակները և մնացածն ուրախ էին, աղաղակում էին դրա համար, նախքան աշխարհի հիմքը կդրվեր, ուրեմն ինչպե՞ս է սատանան պատրաստվում ինձ պահել երկրի փոշու մեջ: Դա պարզապես անհնար է: Դուք իրավացի եք:

284 Եկե՛ք հիմա տեսնենք: Սա իմ ունեցած ժողովրդավարական ժամանակն է այստեղ: Տասնմեկից քսան է պակաս: Ընդամենը տասից քսան է պակաս: Ճի՞շտ է, եղբայր Վուդ: Ճիշտ է, տասից քսան է պակաս: Բոլո՞րը ուրախ են:

Ո՛հ, ես տենչում եմ գնալ,
Ո՛հ, ես տենչում եմ գնալ,
Իմ Երկնային տունը լուսավոր ու պայծառ,
Ո՛հ ես տենչում եմ գնալ:

Ո՛հ, ես տենչում եմ գնալ,
Ո՛հ, ես տենչում եմ գնալ,
Իմ Երկնային տունը լուսավոր ու պայծառ,
Ո՛հ, ես տենչում եմ գնալ:

285 Սիրո՞ւմ եք այդպիսի հին երգեր: Մի հին երգ կար, որ մի ժամանակ երգում էինք այն մասին, ինչ-որ. «Շնորհքն ու ողորմությունը գտան ինձ այնտեղ, որտեղ Առավոտյան Աստղը փայլեց»: Ո՞րն է դա, քույր Գերտի: Տեսնենք: Ինչպես...Ո՞րն է դա, Նեվիլ եղբայր: Ինչ-որ «Շնորհքն ու ողորմությունը գտան ինձ: Այնտեղ Լուսավոր և Առավոտյան Աստղը ցույց է տալիս Նրա...?...իմ շուրջ»: Ըհ՛ը: Այո: «Խաչի մեջ»: Մեզ ակորդ տվեք այս երգի համար, քույր՝ *«Խաչին մոտի»* համար: Եկե՛ք այստեղ, եղբայր Նևիլ: Ո՛հ, ես սիրում եմ սա: Քանիսի՞ն են դուր գալիս այս հին ներշնչված երգերը: Դուք կարող եք կազմակերպել ձեր ուզած վեր ու վայր ցատկող բուգի-վուգիները: Տվեք ինձ սա. «Ահա թե որտեղ շնորհքն ու ողորմությունը գտան ինձ»: Ահա: Շատ լավ, հիմա մեղմ:

Հիսո՛ւս, պահիր ինձ խաչի մոտ,
Այնտեղ կա մի թանկագին աղբյուր,
Հոսում է բոլորի համար, բժշկում է ջուրը
նրա,
Հոսում է Գողգոթայից:

Խաչի մոտ, խաչի մեջ է
պարծանքն իմ,

Մինչև հափշտակված հոգիս հանգիստ
գտնի
Գետի այն կողմում:

286 [Բրանհամ եղբայրը կիսածայն երգում է. *«Խաչի մոտ»*: Ծան. խմբ.]: Ո՛հ, որքա՜ն գեղեցիկ է: Մտածե՛ք դրա մասին: Ի՞նչ կլիներ, եթե ոչ մի Փրկիչ չլիներ: Ի՞նչ կլիներ, եթե մենք այս Խոսքը չունենայինք: Ի՞նչ կլիներ, եթե Նա ձեզ չկանչեր: Ի՞նչ կլիներ, եթե Նա ձեզ նախապես չճանաչեր և դուք այսօր ամբողջ աշխարհի հետ միասին գտնվեիք դրսում: Սիրո՞ւմ եք Նրան: Ո՛հ, Աստված իմ: Չմոռանաք այս առավոտվա ժամը ինն անց կեսի ծառայությունների մասին:

Խաչի վրա, խաչի մեջ է
պարծանքն իմ,
Մինչ հափշտակված հոգիս հանգիստ
գտնի
Գետի այն կողմում:

287 Հիմա մեզ ակորդ տվեք այս երգի համար՝ *«Տեղ աղբյուրի մոտ»*: Սա լավ հին երգ է. «Աղբյուրի մոտ տեղ կա»: Քանի՞սն այն գիտեն: «Տեղ, տեղ, այո՛, տեղ կա, աղբյուրի մոտ տեղ կա»: Երբ հիմա սկսեք երգել, շատ հանդարտ մեկնեք ձեր ձեռքը և սեղմեք ձեր կողքին գտնվող եղբոր ձեռքը: Գիտեք, որ հիմա տեղ կա մեթոդականների, մկրտականների, հոգեգալստականների համար: Բոլորիս համար էլ հիմա տեղ կա աղբյուրի մոտ: Քանի՞սը գիտեն այս հին երգը: Ո՛հ, իհա՛րկե, գիտեք: Ձեզանից ոմանք հնաբնակները, սա լավ, հին քենթուկյան երգ է:

Տեղ, տեղ...

Սեղմեք ձեռքերը:

...այո, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար:
Տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար:

Ո՛հ, տեղ, տեղ, այնտեղ շատ տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար,
Ո՛հ, տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար:

288 Հիմա, ես մի փոքրիկ անակնկալ ունեմ ձեզ համար: Վերջին բոլոր քարոզներն ու գրքերը և այլն հաջորդ շաբաթ հավաքույթների ժամանակ վաճառքում են

լինելու եկեղեցու մյուս ծայրին. ձայներիզները, ամենը, գեղեցիկ գրական ձևով: Մենյակներից մեկում, այնտեղ՝ հետևում սեղան դրված կլինի: Եվ գրականությունը, վերջին քարոզները և մի քանի լավ գրություններ, որոնք բնօրինակով են թողարկվել նոր գրքերում, նոր հրատարակություն, եկող չորեքշաբթի գիշեր դրվելու են շենքի վերջում:

Մենք լավ ժամանակ ենք ակնկալում Տիրոջ մեջ: Եկե՛ք աղոթքով: Հիմա, կանչեք ձեր հիվանդներին և տկարներին, նամակ գրեք նրանց: Բերեք նրանց այստեղ: Մենք պարզապես...Աստված զորավոր կերպով է գործելու: Եվ մենք գիտենք, որ Նա կանի դա հիմա:

289 Եվ այսպես ես գնացել եմ ամենի մոտ, որին ճանաչում եմ, որ ինչ-որ բան ուներ: Ես կա մի բան, որը համապատասխանեցված չի, հիշում եք, ես վաղուց ձեզ ասել էի, որ մենք պատրաստվում էինք կարգի բերել դա: Եվ ես գիտեմ, որ դուք գիտեք, որ այստեղ հիմա ուրիշ ոգի է, քան թե այն, որ կար: Հասկանո՞ւմ եք: Հասկանո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք: Դա ճիշտ է: Հիմա, այլևս մի՛ թողեք, որ նա գնա: Ես պատվիրում եմ ձեզ Հիսուս Քրիստոսի առաջ, մի՛ թողեք, որ այն գնա: Մնացեք այստեղ դրա հետ, հասկանում եք, ամեն երկաթյա բան պահեք մի կողմ և շարժվեք առաջ: Դուք եղբայրներ եք: Քո եղբայրը կամ քույրը չէ, որ ինչ-որ սխալ բան է անում. դա սատանայի ոգին է սողոսկում այնտեղ: Հասկանում եք, նա է շուրջը պտտվում: Եվ պարզապես խղճացեք քրոջը կամ եղբորը, և իմացեք, որ այդ սատանան է, որ մտել է մեջտեղ: Եթե դուք որոշակի զգացողություններ ունեք դրա վերաբերյալ, անմիջապես արագ հանեք դա ձեր միջից, հասկանում եք, որովհետև դա կմաշեցնի ձեզ: Այո: Դրա համար հեռու մնացեք դրանից: Պարզապես հիշե՛ք:

Տեղ, տեղ, շատ տեղ կա,

Տեղ կա մեթոդականների համար, տեղ կա մկրտականների համար, տեղ կա երիցականների համար: Տեղ կա բոլորի համար:

Տեղ, տեղ, այո՛, տեղ կա,
Աղբյուրի մոտ տեղ կա քեզ համար:

290 Այդ դեպքում քանի՞սն են հիշում մեր հին հրաժեշտի երգը:

Առ քեզ հետ Հիսուս անունը,

Ով որդի ցավոց, վշտաց
Տա սփոփանք քեզ և ցնցում մը,
Առ զայն հետդ անկասկած։

Շատ կուզեյի, որ մնայիք մեր հետ եղբայր Ջեֆրիս, դու և քույր Ջեֆրիսը, ինչպես նաև այնտեղի տղաները և մնացածները։

Այս անվամբ նաև երկնից մեջ
Ձինք պիտ Արքայից Արքա (Ո՜հ, Աստված իմ)
Պսակենք այդ կարճ կյանքե վերջ,
Երբ ուղին մեր վերջանա։

Հիսուս անունն առ քովդ
Իբր ասպար այսօր,
Մրմնջե զայն աղոթքովդ
Թակարդներ երբ շուրջ պատեն։

Ո՜հ, ես սիրում եմ դա։ Իսկ դո՞ւք։ Հիսուսի սքանչելի այդ Անունը։ Հիմա, եկե՛ք հիմա վեր կենանք, մինչ երգում ենք։ Շատ լավ։

Հիսուս անունն առ քովդ
Ով որդի ցավոց, վշտաց
Տա…(…?…)

…քաղցր անուն։
Հույս երկրի, ցնծումն երկնից,
Անգին (ո՜հ, անգին անուն) քաղցր անուն,
Հույս երկրի, ցնծումն երկրից։

291 Հիմա մի փոքր այլ կերպ։ Եկե՛ք հիմա խոնարհենք մեր գլուխները, և շատ հանդարտ բարձրացնենք ձեռքը և ասենք.

Այս անվամբ նաև երկնից մեջ
Ձինք պիտ Արքայից Արքա
Պսակենք այդ կարճ կյանքե վերջ,
Երբ ուղին մեր վերջանա։

Ո՜հ անգին քաղցր անուն,
Հույս երկրի, ցնցումն երկնից,
Այո, ո՜հ, անգին քաղցր անուն։
Հույս երկրի, ցնցումն երկնից։

292 Շարունակելով մնալ խոնարհած գլուխներով, մենք ասում ենք…[Բրանհամ եղբայրը կիսաձայն երգում է. *«Առ քեզ հետ Հիսուս Անունը»։* Ծան. խմբ]։

58-0927 Ինչո՞ւ մենք հարանվանություն չենք
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org